

**ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ**

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ 2019**





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

**ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН**

**АНАЛИЗ ПРИЧИН  
ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Ереван

*Издательство “ Гитутюн ” НАН РА*

2019

330(429.25) 7

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

104357

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**



**ԵՐԵՎԱՆ**

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն**

**2019**

ՀՏԴ 330  
ԳՄԴ 65.01  
Հ 422

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ:

Մասնագիտական խմբագիր տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Խ. Մարկոսյան

### Վ.Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ 422 Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսու-  
թյան պատճառների վերլուծություն / Վ.Լ.Հարությունյան, -  
Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 200 էջ:

Գրքում առաջին անգամ ամբողջականորեն դիտարկվում են ստվերային շրջանառության տեսամեթոդաբանական հիմքերը (այդ թվում՝ ստվերային շրջանառությանն առնչակից հասկացությունները և գնահատման մոտեցումները), ինչպես նաև տնտեսության ստվե-  
րայնության տեսանկյունից առաջնային ուղորտներն ու բնագավառ-  
ները և ՀՀ տնտեսության առանձնահատկությունները: Դրանց հետ  
մեկտեղ քննականորեն վերլուծվել և ուսումնասիրվել են ՀՀ ստվերա-  
յին շրջանառությունը կրճատելու ռազմավարությունը և ուղիները:

Մենագրության մեջ առաջարկված մոտեցումներն ու լուծումները  
և ՀՀ-ում դրանք կիրառելը կարող են օգտակար լինել ՀՀ ֆինանսների,  
էկոնոմիկայի նախարարություններին և հարկային ծառայությանը  
համապատասխան քաղաքականություն և հայեցակարգեր մշակելու,  
կատարելագործելու և իրականացնելու ուղղությամբ, այդ հիմնա-  
խնդիրները հետազոտող կազմակերպություններին, գործարար աշ-  
խարհի ներկայացուցիչներին, ասպիրանտներին և մասնագիտական  
բուհերի ուսանողներին:

ՀՏԴ 330  
ԳՄԴ 65.01

ISBN 978-5-8080-1334-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1

### Ստվերային շրջանառության տեսամեթոդաբանական հիմքերը

|   |    |
|---|----|
| 1.1. Ստվերային շրջանառությունը և առնչակից հասկացությունները.....    | 7  |
| 1.2. Ստվերային շրջանառության գնահատման մոտեցումները.....            | 26 |
| 1.3. Ստվերային տնտեսության զարգանալու համաշխարհային միտումները..... | 42 |

## ԳԼՈՒԽ 2

### ՀՀ ստվերային շրջանառության կառուցվածքն ու առանձնահատկությունները

|   |    |
|---|----|
| 2.1. ՀՀ տնտեսության առանձնահատկությունները ստվերային շրջանառության տեսանկյունից.....                  | 56 |
| 2.2. Տնտեսության ստվերայնության առաջնային ոլորտներն ու բնագավառները.....                              | 65 |
| 2.3. Հայաստանում ստվերային շրջանառության առաջանալուն և ծավալներն ընդլայնելուն նպաստող գործոնները..... | 76 |

### ԳԼՈՒԽ 3

#### **ՀՀ ստվերային շրջանառությունը կրճատելու նազմավարությունը և ուղիները**

|  |            |
|--|------------|
| 3.1. Ստվերային շրջանառության ձևերը և վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղիները .....                           | 87         |
| 3.2. Ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ ՀՀ հարկային և մաքսային վարչարարությունը բարեփոխելու մոտեցումները..... | 94         |
| 3.3. Ստվերային շրջանառությունը կրճատելու ուղղությամբ օրենսդրական դաշտը բարեփոխելու միջոցառումները .....                  | 107        |
| <b>Եզրակացություններ և առաջարկություններ.....</b>  | <b>133</b> |
| <b>Հեղինակի մյուս գրքերը, գիտական հոդվածները և ժողովածուները .....</b>   | <b>171</b> |
| <b>Օգտագործված գրականության ցանկ .....</b>   | <b>193</b> |

# **ԳԼՈՒԽ 1. Ստվերային շրջանառության տեսամեթոդաբանական հիմքերը**

## **1.1. *Ստվերային շրջանառությունը* և առնչակից հասկացությունները**

*Ստվերային շրջանառությունը* ստվերային տնտեսության, որպես տնտեսագիտական երևույթի և օրինաչափության, բնութագրիչ հասկացություններից է: Ընդհանուր առմամբ, ստվերային տնտեսական գործունեությունը, որն իրավամբ կարելի է համարել տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման և ձեռնարկությունների արդյունավետ կառավարման ժամանակակից մարտահրավերներից ամենաբարդն ու անտեսանելին, անբաժանելի է ֆորմալ տնտեսական գործունեությունից և այս կամ այն չափով առկա է բոլոր երկրներում:

Որքան էլ ստվերային տնտեսությունը «անտեսանելի» է, այդուհանդերձ, այն անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսության կառավարման ժամանակ՝ պայմանավորված մակրոտնտեսական գործընթացների մասշտաբների և դինամիկայի մասին պատկերացումների ճշգրտմամբ, տնտեսության իրական մեխանիզմների բացահայտմամբ, տնտեսության արդյունքների հնարավորինս ճշգրիտ որոշմամբ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բարեփոխումների, աղքատության մակարդակը հաղթահարելու, հասարակության տարբեր շերտերի եկամտային տարբերակման մակարդակը մեղմելու առումներով և նմանատիպ մյուս գործընթացների հեռանկարների պատկերացմամբ ու արդյունավետ պետական կառավարման ապահովմամբ:

*Ստվերային տնտեսությունը*, ինչպես նաև *ստվերային շրջանառությունը*, տնտեսագիտության այն կարևոր հասկացություններից են, որոնց (անգամ բուն հասկացությունները սահմանելու) մասին շրջանառվում են բազմազան կարծիքներ, և

որոնց միասնական սահմանումն այդպես էլ չի տրվել: Ինչպես տնտեսագիտության տեսության մեջ, այնպես էլ գործնականում ստվերային տնտեսությունը, որպես երևույթ և տնտեսության բաղկացուցիչ մաս, բնութագրվում է ամենատարբեր անվանումներով՝ «ստվերային», «թաքնված», «գորշ», «ոչ ֆորմալ», «անկանոն», «ոչ պաշտոնական», «գուգահեռ», «անօրինական», «չգրանցված», «չհայտարարագրված», «չդիտարկվող», «ընդհատակյա», «չհաշվառված», «մոխրագույն» և այլն, որոնք թեև առաջին հայացքից բավականաչափ նման են, սակայն գործնականորեն դրանց բովանդակային տարբերությունները հանգեցնում են ստվերային տնտեսության ոչ միայն այս կամ այն հայեցակետն անտեսելուն կամ առավել շեշտադրելուն, այլև որոշակի հաշվարկների մեթոդաբանությունը տարբերակելուն, իսկ առանձին դեպքերում էլ՝ այդ հաշվարկների անհնարինություն:

Մա նշանակում է՝ որքան էլ վիճահարույց լինի *ստվերային տնտեսություն* հասկացությունը, անհրաժեշտ է այն սահմանել երևույթը ճանաչելու, ուսումնասիրելու և գնահատելու մտադրությամբ, բնականաբար ելնելով ուսումնասիրության նպատակների ու հիմնական խնդիրների գերակայություններից: Սակայն մինչ այդ հարկ է ներկայացնել ստվերային տնտեսության այն հիմնական սահմանումները, որոնք առաջարկել են տարբեր գիտնականներ և մասնագետներ՝ հասկացության սահմանումների հիմնական «պատկերը» բնութագրելու և, տվյալ ուսումնասիրության նպատակներից ելնելով, առաջարկվող սահմանման հնարավոր տարբերակների շրջանակը նեղացնելու համար:

Ստվերային տնտեսության պարզագույն սահմանում կարելի է դիտարկել ամերիկացի տնտեսագետ Վիտո Թանզիինը, ըստ որի՝ ստվերային պետք է համարել ողջ տնտեսության այն հատվածը, որտեղ «ստեղծված եկամուտը հարկային մարմին-

ներում չի հայտարարագրվում կամ հայտարարագրվում է մասամբ»<sup>1</sup>:

Այլ տարբերակով կամ նմանատիպ մեկ այլ բնորոշմամբ, որը տրվում է ազգային հաշիվների տեսանկյունից, ստվերային տնտեսությունն ասելով՝ հասկացվում է ամբողջ տնտեսության այն հատվածը, որտեղ ստեղծված եկամուտը չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ: Թեև առաջին հայացքից, թվում է, սրանք միանման սահմանումներ են, սակայն հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ այս երկու սահմանումներն ուղղակիորեն քիչ են կապակցվում, քանի որ պարտադիր չէ՝ չհայտարարագրված եկամուտը դուրս մնա ՀՆԱ հաշվարկներից: Մասնավորապես տնտեսվարող սուբյեկտի որևէ գործունեություն կարող է չհայտարարագրվել հարկային մարմիններում (օրինակ՝ ազատվի հարկերից, ունենա հարկային այլ արտոնություններ և այլն), սակայն այդ գործունեության արդյունքները ներառվեն ազգային հաշիվներում, եթե այդ հաշիվները կառուցվում են ծախսային կամ այնպիսի մեթոդներով, որոնք հիմնված չեն հարկային վիճակագրության վրա (և, ընդհակառակը, հնարավոր են դեպքեր, որ ստեղծված եկամուտը հայտարարագրվի հարկային մարմիններում, բայց դուրս մնա ազգային հաշիվներից):

Քանի որ ստվերային գործունեությունը շատ հաճախ հակասում է գործող օրենքներին, այն կարելի է նաև սահմանել որպես անօրինական տնտեսական գործունեություն՝ ուղղված որևէ տնտեսվարող սուբյեկտի օգտին տնտեսական շահ ստանալուն՝ ի հաշիվ այլ անձանց, ընկերությունների կամ ի վնաս պետության: Մա, անշուշտ, խիստ պարզունակ սահմանում է, քանի որ ակնհայտորեն դրա շրջանակներից դուրս է մնում ստվերային տնտեսության այն հատվածը, որը համապատասխանում է օրենսդրությանը (կամ այլ կերպ՝ չի հակասում

---

<sup>1</sup> Tanzi V., *The Underground Economy in the United States: Estimates and Implications.* // *Banka Nazionale del Lavoro. Quarterly Review*, 1980. p. 428.

օրենսդրության պահանջներին, սակայն չի էլ հաշվառվում կամ հայտարարագրվում):

Նմանատիպ սահմանում է տվել նաև Ֆ.Սմիթը (1994թ.). նրա բնորոշմամբ՝ ստվերային տնտեսությունը «շուկայական տնտեսության մեխանիզմներով (անկախ դրանց օրինական կամ անօրինական լինելուց) արտադրված այն ապրանքների և ծառայությունների ամբողջությունն է, որոնք դուրս են մնում պաշտոնական ՀՆԱ հաշվարկներից»<sup>2</sup>: Մեկ այլ սահմանմամբ՝ ստվերային տնտեսությունը ներառում է չհաշվառվող գործունեության այն տեսակները, որոնք առնչվում են ապրանքների և ծառայությունների անօրինական արտադրությանը, ինչպես նաև եկամուտները և ֆինանսական միջոցներն անօրինական բաշխելուն: Այս առումով ստվերային գործունեության տեսակներն անհրաժեշտ է տարբերակել օրենքով արգելված քրեաձին այնպիսի արարքներից, որոնք չեն առնչվում ապրանքներին և ծառայություններին, եկամտին, ինչպես նաև ֆինանսական միջոցների շարժին (օրինակ՝ մարդասպանությունը, եթե այն պայմանավորված չէ տնտեսական շահով): Այսինքն՝ նեղ իմաստով ստվերային տնտեսությունը ներառում է.

- օրենքով արգելված ապրանքների և ծառայությունների արտադրություն, փոխանակում և սպառում.

- օրենքով թույլատրելի տնտեսական գործունեության այն տեսակները, որոնցով ստեղծված եկամուտը մասամբ կամ ամբողջությամբ չի հայտարարագրվում պաշտոնական մարմիններում՝ հարկերից և այլ պարտադիր վճարումներից խուսափելու նպատակով:

Ամեն մի տնտեսական համակարգ բնութագրվում է տնտեսական, սոցիալական և քաղաքական բազմապիսի հարաբերությունների ամբողջությամբ, որոնք կարգավորվում են տվյալ

---

<sup>2</sup> Smith Ph.. Assessing the size of the underground economy: The statistics Canada perspectives, //Canadian Economic Observer, Catalogue, No: 11-010, 3.16-33, 1994. at p. 3.18.

երկրում գործող օրենքներով և իրավական այլ ակտերով: Ուստի սոցիալ-տնտեսական և իրավական հարաբերությունների կանոնակարգման առումով տնտեսությունը կարելի է բաժանել կա-  
նոնավոր և անկանոն հատվածների: Տնտեսության կանոնավոր հատվածը ներառում է տնտեսական գործունեության այն բոլոր տեսակները, որոնք իրականացնելիս տնտեսվարող սուբյեկտները կամ քաղաքացիները բարեխղճորեն պահպանում են օրենքներով և ավանդույթի ուժով հաստատված սոցիալ-տնտեսական, հասարակական ու իրավական հարաբերությունները, իսկ տնտեսության անկանոն հատվածը, ընդհակառակը, ներառում է տնտեսական գործունեության այն բոլոր տեսակները, որոնք իրականացնելիս համապատասխան սուբյեկտները շրջանցում են վերը նշված հարաբերությունները՝ սեփական շահի գերակայությունն ապահովելու նպատակով: Ինչպես տնտեսության կանոնավոր, այնպես էլ անկանոն հատվածները գտնվում են երկրի և հասարակության միևնույն սոցիալ-տնտեսական միջավայրում: Այդ առումով տնտեսության նշված երկու հատվածներն էլ շարունակ փոխներագրում են. միևնույն մարդիկ կարող են զբաղված լինել կամ որպես հաճախորդ հանդես գալ ինչպես տնտեսության կանոնավոր, այնպես էլ անկանոն հատվածներում, կամ այլ կերպ՝ տնտեսության կանոնավոր և անկանոն հատվածների տնտեսվարող սուբյեկտները մրցակցում են միևնույն շուկաների և գնորդների համար:

Ըստ մեկ այլ հայտնի տեսաբան Բրունո Դալլագոյի՝ տնտեսության մեջ հաստատված հարաբերությունները և նորմերը խախտելը կարող է անօրինական լինել, իսկ այդ գործունեության տեսակները՝ «ստվերային» կամ պարզապես «ոչ պաշտոնական»<sup>3</sup>: Տնտեսության ոչ պաշտոնական հատվածը ներառում

---

<sup>3</sup> Նշենք, որ անգլերեն մասնագիտական գրականության մեջ օգտագործվող «informal» և «unofficial», ինչպես նաև «formal» և «official» բառերը հայերեն թարգմանությամբ ունեն նույն՝ «ոչ պաշտոնական» և «պաշտոնական» իմաստները: Ուստի հնարավոր շփոթից խուսափելու համար «informal» և

է գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ հակաօրինական գործունեությունը և օրենքով արգելված ապրանքների և ծառայությունների օրինական ճանապարհով արտադրությունը: Այսինքն՝ ստվերային տնտեսությունը ներառում է արտադրության գործոնների անօրինական համալրումը և օգտագործումը տարբեր ծախսերից խուսափումը և ապրանքների ու ծառայությունների՝ անօրինական փոխանակումը: Ուստի ըստ Բ.Դալլագոյի՝ ստվերային գործունեության ընթացքում տնտեսվարողների միջև ձևավորվում են նաև տարբեր անձնական հարաբերություններ, որոնք փաստորեն լրացնում են ձեռնարկության օրինական տնտեսական կապերի համակարգը և նպաստում ստվերային տնտեսության ընդարձակվելուն:

Նշված տրամաբանությամբ՝ ստվերային տնտեսությունը, որը ներառում է արտադրական գործոնների անօրինական համալրումը (հումքի, նյութերի, հողի և կապիտալի՝ առանց ձևակերպումների ներգրավում, չգրանցված զբաղվածություն և այլն), ծախսերից խուսափումը և ապրանքների անօրինական փոխանակումը, ինչպես նաև ոչ պաշտոնական տնտեսությունը (այդ թվում՝ անօրինական գործունեությամբ զբաղվելը և արգելված ապրանքներ արտադրելը) միասնաբար կազմում են անկանոն տնտեսություն, որն էլ կանոնավոր տնտեսության հետ ձևավորում է տնտեսության ֆորմալ հատվածը: Ինչ վերաբերում է տնտեսության ոչ ֆորմալ հատվածին, ապա այն, ըստ Բ.Դալլագոյի, ներառում է սեփական, տեղական և համայնքային սպառումը և առանձնանում է ֆորմալ տնտեսությունից՝ պայմանավորված ոչ արտադրական բնույթով:

Հարկ է նշել, որ տնտեսության և դրա հատվածների նման դասակարգումը, բնականաբար, պայմանական է, քանի որ պայմանավորված է նրանով, թե գործունեության ինչպիսի տեսակների շրջանակ է հասկացվում՝ ըստ օգտագործվող այս կամ

---

«formal» բառերը կօգտագործվեն առանց թարգմանելու՝ համապատասխանաբար «ոչ ֆորմալ» և «ֆորմալ»:

այն անվանումների և հասկացությունների: Մյուս կողմից էլ, կարծում ենք, չի կարելի համաձայնել այն մտքին, որ սպառմանն առնչվող հարաբերությունները պետք է դիտարկել ստվերային տնտեսության շրջանակներից դուրս, քանի որ անօրինական սպառումը թույլ է տալիս նվազեցնել այն ծախսերը, որոնք օրինական տնտեսության մեջ կատարելու դեպքում կհանգեցնեին շահույթի որոշ նվազման, իսկ անօրինական ծախսերի մի մասը, ընդհակառակը, հնարավորություն է ընձեռում լրացուցիչ եկամուտ ստանալու և ավելացնելու չհարկվող եկամտի մասը:

Տեսաբաններ Դոմինիկ Էնստեն և Ֆրիդրիխ Շնայդերը *ստվերային տնտեսությունը* մեկնաբանելիս իրենց տեսակետը պարզաբանում են՝ տնտեսությունը երկու խոշոր մասերի՝ օրինական և անօրինական գործունեության բաժանելով, որոնք էլ դիտարկվում են մոնետար և ոչ մոնետար գործարքների տեսանկյունից (տե՛ս Աղյուսակ 1-ը): Ըստ նման դասակարգման՝ ստվերային գործունեության տեսակները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ գործող օրենքներին հակասող, ընդ որում՝ դրանք կարող են իրականացվել՝ որպես վճարման միջոց օգտագործելով ինչպես փողը, այնպես էլ բարստերային փոխանակումը:

Մեկ այլ տեսաբան՝ Էդգար Ֆայզը, ստվերային տնտեսության մեջ իրականացվող գործունեության տեսակները ներկայացնում է 4 հիմնական խմբով՝ դրանք անվանելով անօրինական կամ հակաօրինական, չհայտարարագրված, չգրանցված և ոչ պաշտոնական կամ ոչ ֆորմալ: Այս տեսանկյունից, ինչպես նաև հիմք ընդունելով ստվերային տնտեսության մեջ իրականացվող գործունեության տեսակների նման դասակարգումը՝ Է. Ֆայզը ստվերային տնտեսության կառուցվածքը ներկայացնում է՝ ըստ «նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության մոտեցման»:

Մտվերային գործունեության տեսակների դասակարգում<sup>4</sup>

| Գործունեության տեսակը              | <u>Մոնետար գործարքներ</u>   |   | <u>Ոչ մոնետար գործարքներ</u>   |   |
|------------------------------------|---|---|--|---|
| Անօրինական գործունեության տեսակներ | գողացված ապրանքների վաճառք, թմրադեղերի առևտուր և արտադրություն, արգելված վիճակախաղեր, փողերի լվացում և այլն       |   | բարտերային առևտուր (թմրադեղերի, գողացված ապրանքների), սեփական օգտագործման համար թմրադեղերի արտադրություն, գողություն՝ սեփական սպառման համար և այլն |   |
|                                    | <u>Հարկերի սակաս հայտարարագրում</u>   | <u>Հարկերից խուսափում</u>   | <u>Հարկերի սակաս հայտարարագրում</u>  | <u>Հարկերից խուսափում</u>   |
| Օրինական գործունեության տեսակներ   | չհայտարարագրված եկամուտներ, օրինական գործունեությունից ստացված աշխատավարձերի և եկամուտների չհայտարարագրում և այլն | աշխատակիցների համար գեղջերի կիրառում, ծախսերի «արհեստական» ավելացում և այլն | օրինական ապրանքների և ծառայությունների բարտերային առևտուր և այլն   | սեփական սպառմանն ուղղված գործունեություն, օգնություն բարեկամներին, հարևաններին և այլն |

<sup>4</sup> Enste D. and Schneider F., Increasing Shadow Economies all over the world-Fiction or Reality? Discussion Paper No. 26, December, 1998, IZA, p. 3.

Նշված մտեցմամբ՝

**1. անօրինական տնտեսությունը** ստվերային տնտեսության այն հատվածն է, որտեղ ստեղծված եկամուտը անօրինական կամ հակաօրինական գործունեության արդյունք է: Այսինքն՝ ստվերային տնտեսության մասնակիցները ներգրավվում են օրենքով և այլ իրավական ակտերով արգելված ապրանքներ արտադրելու և ծառայություններ մատուցելու, դրանց առևտուրը կազմակերպելու ոլորտ: Այս առումով տնտեսության և հասարակության զարգացումը խոչընդոտող անօրինական գործունեության կարևոր տեսակներից կարելի է առանձնացնել թմրադեղերի արտադրությունը և առևտուրը, ինչպես նաև արտաբժույթի սև շուկայի գործունեությունը, որոնք խաթարում են հասարակության սոցիալական, իրավական և տնտեսական կայունությունը:

**2. Չհայտարարագրված տնտեսությունը** ներառում է ստվերային գործունեության այնպիսի ձևեր, որոնք շրջանցում են տնտեսության մեջ ձևավորված հարկաբյուջետային գործող կանոնները կամ խուսափում են նախատեսված պահանջները կատարելուց: Չհայտարարագրված տնտեսության ծավալների ցուցանիշը հարկային մարմիններին չհայտարարագրված եկամուտների մեծությունն է: Ավելի ստույգ՝ ստվերային տնտեսության այս հատվածը չափվում է հայտարարագրման ենթակա և հարկային մարմինների փաստացի գանձած եկամուտների՝ գոյություն ունեցող «հարկային ճեղքվածքի» մեծությամբ, որն ուղղակիորեն ազդում է բյուջեի կատարման, մակրոտնտեսական ցուցանիշների և հարկային քաղաքականության վրա: Այս հիմնախնդիրը հատկապես անհանգստացնող է զարգացող և անցումային փուլում գտնվող երկրների տնտեսությունների համար, ինչպիսին է նաև Հայաստանը: Ինչ վերաբերում է միկրոմակարդակում չհայտարարագրված տնտեսության ազդեցությանը, ապա առաջին հերթին այն անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսվարող տարբեր սուբյեկտների միջև:

**3. Չզբանցված տնտեսությունը** ստվերային տնտեսության այն հատվածն է, որտեղ իրականացվող գործողությունները շրջանցում են պաշտոնական վիճակագրության սահմանած հաշվետվությունները ներկայացնելու և հայտարարագրելու համակարգը: Հարկ է նշել, որ ի տարբերություն չհայտարարագրված տնտեսության՝ չզբանցված տնտեսության մեջ իրականացվող գործողությունները շրջանցում են սահմանված պահանջները ոչ միայն հարկային վճարումներից խուսափելով: Շատ հաճախ պետության պահանջած հաշվետվությունների համակարգը լինում է այնքան բարդացված և ժամանակատար, որ տնտեսվարող սուբյեկտները հենց այդ պատճառով են խուսափում պահանջվող հաշվետվությունները ներկայացնելուց: Չզբանցված տնտեսության մեծության ցուցանիշը պաշտոնական մարմինների՝ վերը նշված պատճառով տնտեսական գործունեության արդյունքները պաշտոնական վիճակագրության մեջ չհաշվառելու հետևանքով տնտեսության պաշտոնական ցուցանիշների և իրական վիճակի տարբերությունն է: Մակայն հնարավոր են նաև դեպքեր, երբ պաշտոնական վիճակագրական մարմինները հաշվառման համակարգի անկատարության և անարդյունավետության պատճառով պարզապես ի վիճակի չեն հաշվառել տնտեսության մեջ իրականացվող բոլոր գործարքները: Տեղի է ունենում տնտեսության թերհաշվառում:


**4. Ոչ պաշտոնական կամ «ոչ ֆորմալ» տնտեսությունը** ներառում է տնտեսական գործունեության այն տեսակները, որոնցով չեն վճարվում նախատեսվող ծախսերը և միաժամանակ չեն օգտվում տարբեր ոլորտների՝ իրավական ակտերով և վարչական կանոններով նախատեսված օգուտներից ու իրավունքներից: Ոչ պաշտոնական տնտեսության մեծության ցուցանիշը փաստորեն տնտեսության ոչ պաշտոնական հատվածում գործող սուբյեկտների ստեղծած արդյունքն է:

Ընդհանուր առմամբ, կարծում ենք, կարելի է համաձայնել «նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության» տեսության՝ վերը ներկայացված՝ ստվերային տնտեսության տարբեր հատվածների նման սահմանմանը: Այդուհանդերձ, մեր կարծիքով, դրան-

404357

ցում առկա են նաև որոշ հակասություններ և ոչ այնքան հստակ մեկնաբանություններ. մասնավորապես՝ առաջին հերթին վտանգավոր է ստվերային տնտեսությունը հատակորեն բաժանել 4 հատվածների, որովհետև նման տարանջատում իրականում անհնար է, քանի որ ստվերային ոլորտում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտները միաժամանակ կարող են ընդգրկվել նաև վերը նշված ստվերային տնտեսության 4 հատվածներից մի քանիսում: Այսպես, օրինակ, երբ տնտեսվարող սուբյեկտն իրականացնում է հակաօրինական գործունեություն, նա չի հայտարարագրում նաև իր եկամուտները և հետևաբար չի վճարում նաև հարկերը, որպեսզի չբացահայտվի անօրինական գործունեությունը: Այս դեպքում տվյալ տնտեսական գործունեությունը, ըստ նշված դասակարգման, կընդգրկվի ինչպես անօրինական, այնպես էլ չհաշվառված տնտեսության մեջ, որն էլ կարող է հանգեցնել ստվերային տնտեսության ծավալների մասնակի կրկնահաշվարկի: Մեկ այլ օրինակով՝ ոչ պաշտոնական տնտեսությունում իրականացվող գործունեությունը այն հաշվարկելու մեխանիզմների բացակայության պատճառով կլինի նաև չգրանցվող տնտեսական գործունեություն ու կընդգրկվի ստվերային տնտեսության այդ հատվածում նա: Ուստի այս հանգամանքը կարող է արհեստականորեն և էապես մեծացնել ստվերային տնտեսության ծավալները, հետևաբար նաև դրա դեմ պայքարի ծախսատարությունը:

Գոյություն ունի տնտեսության կառուցվածքի դասակարգման մեկ այլ տարբերակ, որով տնտեսական գործունեության տեսակները դասակարգվում են՝ ելնելով առաջին հերթին դրանց օրինական լինելուց: Այդ դեպքում տնտեսության կառուցվածքը կարելի է ներկայացնել գծապատկերով (տե՛ս ստորև):



*Գծապատկեր 1. Տնտեսության կառուցվածքն ըստ օրինականության*

Ըստ տնտեսության այս կառուցվածքի՝ կատարվող բոլոր գործարքները բաժանվում են օրինական և անօրինական խմբերի: Տնտեսության անօրինական հատվածի մեջ են մտնում օրենքով արգելված տնտեսական գործունեության բոլոր տեսակները, ներառյալ՝

- ապրանքների և ծառայությունների արտադրությունը, վաճառքը, վերաբաշխմանը կամ պարզապես տնօրինման առնչվող անօրինական այն գործարքները, որոնց արտադրությունն ու շրջանառությունն արգելված են օրենքներով (որպես օրինակ կարելի է նշել թմրադեղերի արտադրությունը և իրացմանն առնչվող գործարքները, զենքի արտադրությունը և վաճառքը, խաղային բիզնեսի արգելված տեսակները և այլն).

- սեփականության դեմ կատարվող բոլոր հանցագործությունները (գողություն, կողոպուտ, գույքի ապօրինի բռնագրավում կամ դիտավորյալ ոչնչացում).

- գնորդներին խաբելը ապրանքների և ծառայությունների որակի կամ գնի առումով.


- պաշտոնեական դիրքը չարաշահելը և կաշառակերությունը, օրենքները խախտելով՝ տնտեսական օգուտի ստանալը.

- գործունեության այն տեսակները, որոնք թեև թույլատրվում են օրենքներով, բայց դրանցով զբաղվելու համար անհրաժեշտ է համապատասխան արտոնագիր (լիցենզիա):

Ինչ վերաբերում է տնտեսության օրինական հատվածին,

ապա ելնելով գործունեության վերահսկողության հնարավորություններից՝ այն բաժանվում է ստվերային և վերահսկվող հատվածների: Այս դեպքում արդեն ստվերային (չվերահսկվող) հատված ասելով՝ հասկացվում է տնտեսական այնպիսի գործարքների ամբողջությունը, որոնք, ըստ էության, օրինական են, սակայն տարբեր պատճառներով դուրս են մնում պաշտոնական համապատասխան մարմինների վերահսկողությունից:

Հարկ է նշել նաև, որ տվյալ սահմանման շրջանակներում ստվերային տնտեսությունը կարելի է տարանջատել համապատասխան ենթահատվածների, որը մասնավորապես կատարել է նաև ռուս տնտեսագետ Դ. Մակարովը (տե՛ս Գծապատկեր 2-ը)<sup>5</sup>:



Գծապատկեր 2. Ստվերային տնտեսության կառուցվածքն ըստ Դ. Մակարովի


Ստվերային գործողությունները հստակորեն սահմանափակվում են: Ըստ էության, երբ տնտեսական գործարքները թաքցվում են, ապա դրանք խախտում են տարբեր նորմատիվ ակտեր, և այդ առումով նաև անօրինական են: Մյուս կողմից՝ օրենքով արգելված ստվերային գործունեությամբ զբաղվողները

<sup>5</sup> Макаров Д., Экономические и правовые аспекты теневой экономики в России // Вопросы Экономики, No 3/4, 1998, ст. 4.

իրենց գործունեությունը պետական մարմիններում չբացահայտելու նպատակով չեն կատարում նաև համապատասխան հարկային և պարտադիր այլ վճարումներ, ուստի այդ պատճառով անօրինական գործունեությունը նաև թաքնված գործունեության տեսակ է և հանգեցնում է կրկնությունների:

Հարկ է նաև նկատել, որ, ըստ էության, ճիշտ չի կարելի համարել այն մոտեցումը, ըստ որի՝ ստվերային գործունեության բոլոր տեսակներն անօրինական են: Ճիշտ է, ստվերային տնտեսությունը հիմնականում ընդգրկում է գործող օրենքներին և այլ իրավական նորմերի հակասող գործունեություն, սակայն միշտ չէ, որ այն հակասում է օրենքներին: Այսօր էլ ստվերային տնտեսության շատ գործարքներ իրականացվում են օրենքներին համապատասխան, իսկ ավելի ճիշտ՝ չեն հակասում գործող օրենսդրությանը: Այդպիսի ստվերային գործունեության տեսակներից են, օրինակ, անորակ և պահանջվող չափորոշիչներին չհամապատասխանող արտադրանք թողարկելը և դրանք «հարկադրաբար» (սակայն օրինական ուղիներով) հաճախորդներին վաճառելը, որոնք կատարվում են ձեռնարկության ծախսերը կրճատելու և այդ ճանապարհով ստվերային շահույթը մեծացնելու նպատակով: Իբրև ստվերային գործունեության այս տեսակի օրինակ՝ կարելի է նշել հացի գների կայուն մակարդակ պահպանելով՝ (այդ թվում՝ նաև վարչական կամ քաղաքական լծակների գործադրմամբ) հացի կշիռը նվազեցնելը, որակյալ բենզինի գնով անորակ բենզին վաճառելը և այլն, որոնցով, թերևս, տնտեսվարողը լրացուցիչ եկամուտ չի ստանում, սակայն չի էլ կորցնում (իսկ եթե բարձրացնել ապրանքի գինը կամ գինը համապատասխանեցնել ապրանքի իրական որակին, ապա անխուսափելիորեն հաճախորդներ կկորցնել, անգամ կարող էր դուրս մղվել շուկայից):

Տնտեսության թաքնված հատվածի մեկ այլ կառուցվածք է մշակել Նիդերլանդների վիճակագրական ուսումնասիրությունների կենտրոնական բյուրոն, ըստ որի՝ ընդհանուր առմամբ բոլոր «ոչ պաշտոնական տնտեսական գործողությունները» բաժանվում են 4 հիմնական խմբի (տե՛ս Գծապատկեր 3-ը):



**Գծապատկեր 3. Ոչ պաշտոնական տնտեսության կառուցվածքն ըստ Նիդերլանդների վիճակագրական կենտրոնական բյուրոյի**

Այս դասակարգմամբ՝

ա) հսկողությունից դուրս մնացած գործունեության տեսակները այն տնտեսական գործարքներն են, որոնք, ըստ էության, պետք է հաշվառվեն ազգային հաշիվներում, սակայն դուրս են մնացել պաշտոնական մարմինների վերահսկողությունից.

բ) ստվերային տնտեսությունը ներառում է տնտեսական գործունեության այն տեսակները, որոնք ֆինանսական նկատառումներով թաքցվում են պաշտոնական մարմիններից՝ հիմնականում հարկերից և այլ պարտադիր վճարումներից խուսափելով.

գ) անօրինական են համարվում ձեռնարկատիրական գործունեության այն տեսակները, որոնք արգելված են օրենքներով, սակայն ի տարբերություն ստվերայինի՝ անօրինական գործունեություն իրականացնողները խուսափում են հարկային վճարումներից՝ գործունեության այդ տեսակներն արգելված լինելու պատճառով.

դ) չորրորդ խմբում ոչ պաշտոնական գործունեության տեսակ են համարվում, այսպես կոչված, «զուգահեռ» գործունեության տեսակները, որոնք դուրս են մնում տնտեսության պաշտոնական հատվածից՝ վերջիններս գրանցելու և հաշվառելու անհնարինության կամ բարդության պատճառով (օրինակ՝ փո-


դոցային մանր առևտուրը և այլն):

Ակնհայտորեն գոյություն ունեն *ստվերային տնտեսության* տարբեր սահմանումներ և դրանով պայմանավորված՝ տնտեսության բազմապիսի կառուցվածքներ և տարատեսակներ, որոնք որոշակի շփոթմունք են առաջացնում տվյալ հիմնախնդիրն ուսումնասիրելիս: Չափազանց դժվար (եթե ոչ անհնարին) խնդիր է *ստվերային տնտեսությունը* հստակ սահմանելը, քանի որ «ստվերային տնտեսությունը «հոսող ջրի սկզբունք»-ով անընդհատ զարգանում է. այն համապատասխանեցվում է հարկային դրույքաչափերի, հարկային պատժամիջոցների, ինչպես նաև ընդհանուր բարոյական սովորույթների փոփոխմանը»<sup>6</sup>: Ուստի ստվերային տնտեսության և դրա բազմապիսի դրսևորումների՝ վերը քննված տարբերակները հիմք են՝ եզրակացնելու, որ ներկայումս գոյություն չունի *ստվերային տնտեսության* հստակ սահմանում, որն ընդունելի լինի տարբեր երկրների տնտեսագետների և այս խնդիրն ուսումնասիրող պաշտոնական մարմինների համար:

Հաշվի առնելով մեր երկրում տնտեսության կառուցվածքի յուրահատկությունները և ստվերային հատվածի առանձնահատկությունները, ինչպես նաև նպատակ ունենալով ուսումնասիրել տնտեսության թաքցվող գործունեության բոլոր տեսակները և անդրադառնալ դրանց վրա ազդող գործոնների մեկ ամբողջական համակարգում՝ առաջարկվում է տնտեսության հետևյալ կառուցվածքը (տե՛ս Գծապատկեր 4-ը):

---

<sup>6</sup> Enste D. and Schneider F., Increasing Shadow Economies all over the world-Fiction or Reality? Discussion Paper No. 26, IZA, December, 1998, p. 3.



Գծապատկեր 4. ՀՀ ստվերային տնտեսության կառուցվածքը

Նախ՝ առաջարկվում է տարբերակել տնտեսության պաշտոնական և ոչ պաշտոնական հատվածները: Վերջինի մեջ առանձնացվում են երկու հիմնական բաժիններ՝ սովերային և բնաիրային տնտեսությունները: Սովերային տնտեսություն է ոչ պաշտոնական տնտեսության այն հատվածը, որտեղ կատարվող գործարքներով ու գործողություններով ստեղծված եկամուտը դուրս է մնում պաշտոնական մարմինների վերահսկողությունից և չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ: Մասնավորապես, սովերային տնտեսության տարատեսակներ են՝ անօրինական տնտեսական գործունեությունը, ապրանքների անօրինական փոխանակումը, ծախսերի ուռճացումը և հավելագումները, անօրինական ճանապարհներով ծախսերից և պարտադիր վճարումներից խուսափելը, արգելված ապրանքների օրինական և անորակ ապրանքների արտադրությունը, բարտերային անօրինական փոխանակումը և այլն):

Բնաիրային տնտեսությունը ներառում է տնային տնտեսությունների (հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտի)՝ անձնական սպառման (ինքնասպասարկման), շուկաներում դրանք իրացնելու կամ բնաիրային տեսքով փոխանակելու համար արտադրված ապրանքների և ծառայությունների ծավալը:

Մոյն աշխատանքում *սովերային տնտեսություն* է դիտարկվում տնտեսության հենց նման կառուցվածքով ընկալվող հասկացությունը կամ դրա սահմանումը, իսկ ապրանքների արտադրությամբ և իրացմամբ՝ նաև ծառայություններ մատուցելու և աշխատանքների կատարելու բոլոր փուլերը: Այսինքն՝ *սովերային տնտեսությունը* ոչ պաշտոնական տնտեսության այն հատվածն է, որտեղ ցանկացած գործողություն կամ տնտեսական գործունեությամբ ստեղծված եկամուտը դուրս է մնում պաշտոնական մարմինների վերահսկողությունից և չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ:

Այսպիսի սահմանումը բավականին ընդհանրական է, սա-

կայն մյուս կողմից՝ հնարավորություն է ընձեռում հնարավորինս ընդգրկուն ներկայացնելու համաշխարհային պրակտիկայում առկա՝ տնտեսության ստվերայնության մակարդակի քանակական գնահատման մեթոդաբանական հիմքերը:

Նշենք նաև, որ ի տարբերություն ստվերային տնտեսության դիտարկված այլ սահմանումների՝ առաջարկվող տարբերակում տարանջատվում է *բնափրային* տնտեսությունը, որը թեև տնտեսության չհաշվառվող հատվածում է, բայց և տնտեսության այս հատվածն առանձին և ծավալուն ուսումնասիրության կարիք չի զգում, ուստի դրան կանդրադառնանք միայն ըստ անհրաժեշտության: Բացի այդ, ի տարբերություն ստվերային տնտեսության ներկայացված որոշ սահմանումների, տնտեսության ստվերայնության՝ առաջարկվող կառուցվածքը մեկ ամբողջության մեջ է ներառում ոչ միայն թաքնված տնտեսական գործարքները, այլև անօրինական գործունեության տեսակները, ծախսերն արհեստականորեն ուռճացնելով և հավելագրումներով ստվերային եկամուտներն ավելացնելը:

Ինչ վերաբերում է *ստվերային շրջանառություն* հասկացությանը, ապա վերը նշվածից արդեն իսկ սկսնհայտ է, որ այն *ստվերային տնտեսությունից* հիմնականում տարբերվում է տնտեսության մակարդակներով: Մասնավորապես, եթե ստվերային տնտեսության մեջ ներառվում են երկրի մասշտաբով տնտեսական գործունեության բոլոր տեսակները, ճյուղերը և տնտեսական հարաբերությունները (կամ այլ ձևակերպմամբ՝ մակրոտնտեսությունը), ապա ստվերային շրջանառություն ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ միկրոտնտեսությունը կամ ձեռնարկությունների և կազմակերպությունների կտրվածքով ստվերային տնտեսական հարաբերությունները:

## 1.2. Ստվերային շրջանառության գնահատման մոտեցումները

Ժամանակակից հարկային համակարգերի գերակա խնդիրներից են հնարավորինս քիչ վարչարարական ծախսերով առավելագույն հարկեր ապահովելը, օրենսդրական նորմերը կիրարկելու վերահսկողությունը: Ստվերային տնտեսությունը ինչպես հարկերից խուսափելու, ապօրինի և կեղծ ձեռնարկատիրություն իրականացնելու, այնպես էլ քրեորեն պատժելի գործունեության հետևանք է: Այն բնորոշ է աշխարհի բոլոր երկրներին և ունենալով համատարած՝ բնույթ՝ մեծացնում է պետական կառավարման համակարգի կոռուպցիոն ռիսկերը, խորացնում է սոցիալական անապահովությունը, նպաստում գործարարության համար անառողջ միջավայր ձևավորելուն և այլն: Ուստի ստվերային հատվածը կրճատելու հիմնախնդիրը ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից է՝ նպատակ ունենալով ձևավորելու հարկ վճարողների՝ հարկերն ինքնուրույն հաշվարկելու և վճարելու մշակույթ, նպաստավոր և հավասար մրցակցային դաշտ:

Տնտեսության ստվերայնության դրսևորումների ընդգրկման մասշտաբներով, հաշվառումից խուսափելու մեթոդոլոգիայով պայմանավորված՝ մասնագիտական գրականության մեջ կան *ստվերային շրջանառության* բազմաթիվ բնորոշումներ:

Այսպես՝ Է.Մտերլանդը *ստվերային շրջանառությունը* բնորոշում է որպես տնտեսական գործունեություն, որը հակասում է օրենսդրությանը, այսինքն՝ այն ոչ օրինական տնտեսական գործունեության ամբողջություն է և առաջացնում է տարբեր ծանրության քրեորեն պատժելի հանցագործություններ: Ըստ Ա.Յակովլևի՝ ստվերային շրջանառությունը պետության չվերահսկած և թաքցված նյութական արժեքների, փողի և ծառայությունների արտադրությունը, բաշխումը, փոխանակումն ու

սպառումն է<sup>7</sup>: Ֆայզը այն կարծիքին է՝ ստվերային շրջանառության ամեն մի բնութագիր պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտների համապատասխան ինստիտուցիոնալ կանոնների խախտմամբ. նա առանձնացրել է այդպիսի կանոնների համապատասխանող 4 գործունեություն.

- ապօրինի.
- չհաշվառված.
- չգրանցված.
- ոչ ֆորմալ<sup>8</sup>:

Ստվերային շրջանառության առաջանալուն նպաստող հիմնական պայմաններն են.

- հարկման բարձր բազան.
- անկայուն տնտեսական վիճակը.
- տնտեսական շրջանառություն ծավալելու երաշխիքների, մրցակցային հավասար պայմանների բացակայությունը (քաղաքական հովանավորչության առկայությունը).
- սոցիալական ծանր պայմանները.
- գերշահույթ ստանալու մոլուցքը:

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ ստվերային է համարվում այն շրջանառությունը, որը պետախրավական կարգավորումից դուրս է, և դրա նպատակը չվերահսկվող եկամուտ ստանալն է:

Բավականին բարդ տնտեսական խնդիր է ստվերային շրջանառության ծավալները գնահատելու քանակական ցուցանիշներ և մեթոդներ սահմանելը, մինչդեռ այն չափազանց կարևոր է ինչպես տնտեսական աճի վերլուծության, այնպես էլ տնտեսական քաղաքականության ուղղությունների տեսանկյունից: Միաժամանակ հարկ է նկատել, որ տնտեսական միտքն առաջադրել է ստվերային շրջանառության ծավալները գնահա-

---

<sup>7</sup> <http://novainfo.ru/article/5661>.

<sup>8</sup> [https://studme.org/51851/ekonomika/vidy\\_tenevoy\\_ekonomiki\\_metody\\_izmereniya#annot\\_1](https://studme.org/51851/ekonomika/vidy_tenevoy_ekonomiki_metody_izmereniya#annot_1).


տելու ուղղակի և անուղղակի տարբեր մեթոդներ, որոնք ժամանակի ընթացքում ընդլայնվել և կատարելագործվել են՝ նպատակ հետապնդելով արժանահավատ և բավարար տվյալներ չլինելու պայմաններում հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել ստվերային տնտեսության իրական պատկերը և ծավալների գնահատումները մոտեցնել իրականությանը:

Գոյություն ունեն ստվերային շրջանառության ծավալները գնահատելու տարբեր մեթոդներ, որոնք կարելի է պայմանականորեն դասակարգել չորս խմբի:

Ստվերային շրջանառության գնահատման հատուկ ինդիկատորների մեթոդը պայմանավորված է որևէ ցուցանիշի (ինդիկատոր) կիրառմամբ և ներկայացնում է անուղղակիորեն կամ ուղղակիորեն ստացված ստվերային գործունեության մակարդակը:


**Ուղղակի մեթոդները**, հիմք ընդունելով հատուկ վերլուծություններով, հարցումներով, ստուգումներով ստացված տեղեկատվությունը, բացահայտում են ստվերում գտնվող հարկատուների առանձին խմբերի գործունեությունը:

**Անուղղակի մեթոդները** հիմնվում են վիճակագրական, ֆինանսական, հարկային մարմինների հրապարակած տնտեսական ցուցանիշների վերլուծության վրա:



Գծապատկեր 5. Ստվերային շրջանառության գնահատման մեթոդները

Սովերային շրջանառության ծավալները գնահատելիս տնտեսագետները տարակարծիք են՝ առավելություն տալով այս կամ այն մեթոդին: Գոյություն ունեցող գնահատման մեթոդները, ըստ կիրառման նպատակայնության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի (տե՛ս ստորև):



**Գծապատկեր 6. Սովերային շրջանառության մեթոդների դասակարգումը<sup>9</sup>**

Սովերային շրջանառության ծավալները գնահատելիս տարբեր բարդություններ են առաջանում: Կիրառվող մեթոդները գործնականում տարբեր արդյունքներ են տալիս՝ ընտրության առջև կանգնեցնելով առավել արժանահավատի հարցում, քանի որ տնտեսվարողները շատ անգամ չեն գիտակցում, որ իրենց գործունեության որոշ տարբեր սովերային են:

### **Սովերային շրջանառության ծավալները գնահատելու միկրոմեթոդներ**

Տնտեսության միկրոմակարդակում սովերայնությունը բացահայտելը և գնահատելն իրականացվում են հարցումներով,

<sup>9</sup> Е. В. Голованов, Теневая экономика, Челябинск, 2015, с. 23.

զնահատումներով, հետազոտություններով, ստուգումներով, տնտեսաիրավական վերլուծություններով:

1. **Հարցումներն** իրականացվում են սոցիալական հետազոտություններով, հարցազրույցներով: Հարցման մասնակիցներին պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ հետևյալ խմբերի

- սովերում գտնվողներ,
- ներգրավված դիստրիկտներ,
- կողմնակի դիստրիկտներ,
- տուժողներ:

2. **Բացահայտ ստուգումների** իրավասությունը հատուկ ստեղծված վերահսկող հանրային մարմիններինն է, որոնք բացահայտում և կանխարգելում են արտարժույթի, մաքսային, բանկային, հարկային, ֆինանսական և այլ օրենքների, իրավական նորմերի խախտումները: Մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու թաքցված (քողարկած) քրեական գործունեությունը: Վերահսկող մարմինները մշտապես փոխհամագործակցում են՝ հարկեր վճարելուց խուսափելու, ապօրինությունները բացահայտելու և կանխարգելելու, սովերային շրջանառությունների դեմ պայքարելու նպատակով: Վերահսկողության գործառույթներն իրականացնում են հարկային, մաքսային ծառայությունների, ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի և այլ մարմինների համապատասխան ստորաբաժանումները:

3. **Տնտեսաիրավական վերլուծության** հատուկ մեթոդները հնարավորություն են ընձեռում արդյունավետ կիրառելու հաշվապահական և տնտեսական գործառույթները՝ սովերը բացահայտելու նպատակով: Նպատակայնությունից ելնելով՝ տնտեսաիրավական մեթոդները ներկայացվում են երեք ուղղություններով, որոնք նույնպես կարելի է դասակարգել (տե ս ստորև Աղյուսակ 2-ը):

**Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու  
տնտեսաիրավական հատուկ մեթոդներ**

|                                |  |                                 |  |
|--------------------------------|--|---------------------------------|--|
| Տնտեսաիրավական հատուկ մեթոդներ | 1. Հարցումներ  |                                 |  |
|                                | 2. Բացահայտ ստուգումներ  |                                 |  |
|                                | 3. Տնտեսաիրավական  | Հաշվապահական վերլուծություն     |  |
|                                |  | 3.2 Փաստաթղթային վերլուծություն | 3.2.1 Հերթական ստուգում<br>3.2.2 Նորմատիվային ստուգում<br>3.2.3 Թվաբանական ստուգում<br>3.2.4 Փոխադարձ ստուգումներ<br>3.2.5 Փոխադարձ վերահսկողություն |
| 3.3 Տնտեսական վերլուծություն   | 3.3. Համադրման<br>3.3.2 Հատուկ հաշվարկված ցուցանիշների<br>3.3.3 Կարծրատիպերի<br>3.3.3 Ճշգրտող ցուցանիշների |                                 |  |

Հաշվապահական վերլուծության մեթոդն ուսումնասիրում է հաշվառման համակարգը հաշվապահական մեխանիզմների կիրառմամբ՝ նպատակ հետապնդելով բացահայտել անհամապատասխանություններն ու շեղումները:

Ստվերային գործունեությունը կրճատելու առաջնային խնդիրը ապրանքներ մատակարարելու և ծառայություններ մատուցելու գործարքները պատշաճ փաստաթղթավորելն է:

Փաստաթղթային վերլուծության մեթոդի հիմնական նպատակը փաստաթղթային անհամապատասխանությունները (առանձին, փոխկապակցված, հաշվառման), ֆինանսական փաստաթղթերի միջև հակասությունները, անճշտությունները (թվաբանական, օրենսդրական, միտումնավոր) բացահայտելն է: Գործունեության ստվերային տարբերը հայտնաբերելու համար կիրառվում են տարբեր հետազոտություններ, դիտարկումներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկման հիմք գործարքների փաստաթղթավորման մեջ զգալի են առանց հաշվարկային փաստաթղթերի կամ գործարքների, իրական

գնից էականորեն ցածր գնով կազմված փաստաթղթերով կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթավորման պահանջները ոչ պատշաճ պահպանող գործարքները, շրջանառությունը նվազեցնելու նպատակով մեկ անգամ դուրս գրված հաշվարկային փաստաթղթով հետագայում չփաստաթղթավորված գործարքներ իրականացնելը: Այդպիսով, տնտեսական գործունեության ողջ շղթայում արտադրությունից կամ ներմուծումից մինչև սպառում, խաթարվում է գործարքների փաստաթղթավորումը, հետևաբար տնտեսության մեջ չեն «երևում» իրական շրջանառություններն ու իրական գները՝ ձևավորելով ստվերային շրջանառություն<sup>10</sup>:

Ե՛վ հաշվապահական, և՛ փաստաթղթային վերլուծությունների մեթոդները փոխլրացնում են միմյանց, իսկ դրանք կիրառելու արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրությունների, ստուգումների և աուդիտի ընթացքում դրանք իրականացվում են միաժամանակ:

Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու տնտեսական վերլուծության մեթոդի հիմքը տարբեր փոխկապակցված տնտեսական ցուցանիշների հաշվարկն է, որոնք նորմալ տնտեսական գործունեության պայմաններում կայուն են, ստվերայնության պայմաններում դրանց փոխկապվածությունն ու պայմանականությունը խախտվում է՝ հնարավորություն ընձեռելով բացահայտելու նորմալ, օրինական տնտեսական գործունեությունից շեղումները: Դրանց բացահայտելու մեթոդները վերլուծություններն են՝ ըստ համադրման, հատուկ հաշվարկված ցուցանիշների, կարծրատիպերի և ճշգրտող ցուցանիշների:

Համադրման մեթոդը ներառում է տնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշների համադրում՝ մի քանի հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով: Օրինակ՝ սովյալների վերլուծությամբ համադրվում են տեխնոլոգիական նպատակով սպառվող էլեկտրաէներգիայի ծախսը (փոփոխուն ծախս) և թողարկման ծավալը, շահույթն ու իրացման ծավալ-

<sup>10</sup> <http://taxpayers.am/hy/news/144-national-action-plan-against-tax-evasion.html>

ները, նյութական ծախսերն ու թողարկման ծավալները: Մովորաբար ընտրվում են այն ցուցանիշները, որոնք փոխկապված են (փոփոխուն ծախսեր՝ մեկ ցուցանիշի աճը ուղիղ համեմատական առաջացնում է մյուս ցուցանիշի աճ): Այս մեթոդը արդյունավետ է թաքցված եկամուտների բացահայտելու նպատակով: Համադրման արդյունքները կարող են ստուգումների անհրաժեշտություն առաջացնել:

**Հատուկ հաշվարկված ցուցանիշների մեթոդը**, ելնելով պայմանականորեն օրինապահ կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքների վերլուծությունից, մշակում է հատուկ հաշվարկային ցուցանիշներ, որոնք տնտեսական որևէ խախտում կատարելիս փոփոխվում են<sup>11</sup>:

Սույն մեթոդը կիրառող երկրներում վերահսկողության ենթակա ցուցանիշներով սահմանված նորմաները հրապարակվում են: Նորմաները (ցածր, միջին և բարձր) հաշվարկվում են օրինապահ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ցուցանիշներին համապատասխան:

**Կարծրատիպերի մեթոդի** հիմքը տնտեսական ցուցանիշների միջև ոչ սովորական կախվածությունն է, որոնք բացահայտում են իրավախախտումները և հիմնականում առկա չեն ամբողջությամբ հաշվառված գործունեության դեպքում: Մեթոդը ենթադասակարգվում է հինգ ենթամեթոդների կարմիր դոշակի, զուտ արժեքի վերլուծության, դրամարկղային պակասորդի հաշվարկի, դրամական շրջանառության հաշվարկի, ծախսերի փոխհատուցման:

**Զուտ արժեքի վերլուծության մեթոդի** տրամաբանությունն այն է, որ հարկատուի կարողությունը կարող է աճել միայն հարկվող եկամուտների ավելացմամբ՝ այն բացառությամբ, եթե չի ստացել նվերներ, նվիրատվություններ և ժառանգություն: Եթե բոլոր ծախսերի, հաշվառված եկամուտների և այլ մուտքերի հաշվանցմամբ ստացվում է դրական տարբերություն, ապա կարելի է եզրակացնել, որ կապիտալի աճը ոչ օրինական

<sup>11</sup> Ю.В. Лагов, С.Н. Ковалев, Теневая экономика (Учебное пособие для вузов), 2006, с 166.

է: Պետական կառավարման համակարգում կոռուպցիայից բխող ստվերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով պետական պաշտոնյանները պարտավոր են հայտարարագրել իրենց եկամուտները:

Թվարկված մեթոդները սերտորեն փոխկապակցված են, որով էլ պայմանավորված է դրանք կիրառելու արդյունավետությունը: Միկրոմեթոդները, լինելով բազմատեսակ, արդյունավետ են միայն անհատական, ճյուղային խնդիրներ լուծելու տեսանկյունից. գնահատականներն ունեն միկրոնշանակություն և չեն կարող կիրառվել համապարփակ եզրակացություններ կատարելու նպատակով:

### **Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու մակրոմեթոդներ**

Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու մակրոմեթոդները հիմնվում են ֆինանսական մարմինների, հարկային և վիճակագրական ծառայությունների ներկայացրած ամփոփ մակրոտնտեսական տարբեր ցուցանիշների վրա, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ն, երկրի կամ տնտեսության գնահատվող ճյուղի տնտեսվարողների քանակը և այլն: Մակրոմեթոդները ներառում են տարբերությունների, մոնետար, զբաղվածության ցուցանիշների, դեռերմիանտների գնահատման, տեխնոլոգիական գործակիցների, կառուցվածքային և խառը մեթոդները:

Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու մակրոմեթոդներից լայնորեն կիրառվում է **տարբերությունների մեթոդը**, որը հիմնվում է տարբեր աղբյուրներից ստացված և վիճակագրական փոխադարձ դիտարկվող տնտեսական ցուցանիշների (եկամուտներ և ծախսեր, ռեսուրսներ և սպառում) համադրման վրա՝ բացահայտելով ոլորտում առկա ստվերը: Մեթոդաբանությունը հիմքն այն մտտեցումն է, որ ծախսերի և տարբեր, անկախ եղանակներով գնահատված եկամուտների տարբերությունը ստվերային շրջանառության առկայության ինդիկատոր է, եթե այդ տարբերությունը պայմանավորված է եկամուտները թաքցնելով: Իրական մակարդակներին քանակական անհամապատասխանությունները հնարավորություն

են ընձեռում որոշելու և իրականացնելու անհրաժեշտ ճշգրտումներ, իսկ այս մեթոդը կիրառելու որակական գնահատականը բարձր է այնքան, որքան շատ են փոխադարձաբար համադրվող ցուցանիշները<sup>12</sup>: Այս մեթոդը լայնորեն կիրառվում է մակրոտնտեսական ցուցանիշները, ազգային հաշիվները, բնակչության եկամուտները և ծախսերի հաշվեկշիռը ձևավորելիս նպատակ հետապնդելով նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Մեթոդի կիրառման ուղղություններից է վիճակագրական ծառայության թաքցրած աշխատավարձի կամ ստվերային եկամուտների, միջնորդ կազմակերպությունների ծառայությունների արժեքի ցուցանիշների հաշվարկը: Տարբերությունների մեթոդը կիրառվում է տարբեր եղանակներով հաշվարկված ծախսերի և եկամուտների համադրման, մակրոտնտեսական ցուցանիշների այլընտրանքային գնահատման, ապրանքային հոսքերի ուսումնասիրության նպատակով<sup>13</sup>: Համադրվող ցուցանիշների տարբերությունը կարող է լինել ստվերային տնտեսության առկայության ինդիկատոր, եթե ցուցանիշներն ու դրանց բաղադրիչները արժանահավատ են:

Եկամուտների և ծախսերի համեմատության մեթոդի հիմքը տնային տնտեսությունների ամբողջ եկամուտները և ծախսերը բաղդատելն է: Որպես կանոն՝ ծախսերը միշտ գերազանցում են եկամուտները: Համադրման ժամանակ ծախսերի մեջ ներառվում են կապիտալի կուտակմանը, պաշարներ, ֆինանսական ակտիվներ, բանկային ակտիվներ ձեռք բերելուն ուղղված և այլ ծախսեր: Ենթադրվում է, որ սպառողական ծախսերը արտահայտում են նաև համախառն եկամտի ծավալը՝ հաշվառված և չհաշվառված: Հետևաբար ստվերային շրջանառության ծավալը հավասար կլինի համախառն ծախսերի և հայտարարագրվող եկամուտների տարբերությանը

---

<sup>12</sup> Н.В. Черемисина, Методы статистической оценки теневой экономики, Вестник ТГУ, выпуск 3 (43), 2006.

<sup>13</sup> Ա.Հարությունյան, Բ.Բաղդասարյան, Հարկման արտերկրյա առաջավոր մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում, Երևան, 2011, էջ113:

$$SI = E - Y,$$

ըստ որի՝

SI-ն ստվերային եկամուտն է,

E-ն՝ սպառողական ծախսերը,

Y-ը՝ հայտարարագրվող դրամական եկամուտները<sup>14</sup>:

Ստվերային շրջանառության ծավալները գնահատելու մակրոտնտեսական ցուցանիշների այլընտրանքային գնահատումների մեթոդը կիրառվում է՝ պաշտոնական և այլ անուղղակի եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ն համեմատելով տնտեսության ստվերային հատվածի ծավալները որոշելու նպատակով: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում ընդունված մոտեցում է ՀՆԱ-ն ճշգրտելն ու ներկայացնելը՝ ստվերային հատվածը որոշելը: Տնտեսության իրական աճը որոշելու նպատակով այս մեթոդը կիրառելու տարբերակ են արդյունաբերության և էլեկտրաէներգիայի սպառման, բեռների փոխադրման և այլ ցուցանիշներ (տեխնոլոգիական գործակիցների մեթոդ): Եթե էլեկտրաէներգիայի գները կարգավորվող են և չեն ներկայացնում էլեկտրաէներգիայի իրական գինը, ապա գնահատման արդյունքները արժանահավատ չեն կարող լինել: Ընդհանուր էլեկտրաէներգիայի սպառման և վիճակագրական ՀՆԱ-ն համեմատելու մեթոդը լայնորեն կիրառվել է 90-ականներին անցումային տնտեսություններում ստվերային շրջանառության ծավալները գնահատելիս:

Եվրամիության՝ զարգացած վիճակագրական ծառայությունն ունեցող երկրներում ստվերային շրջանառության ծավալները գնահատելու կիրառվող մեթոդներից է ապրանքային հոսքերի մեթոդը, որի նշանակությունը ռեսուրսների (արտադրություն, ներմուծում) ծավալի և դրանց վերջնական, միջանկյալ սպառման և կուտակման համեմատությունն է: Ռեսուրսների և դրանց սպառման հաշվեկշռվածության բացակայությունը վկայում է առանձին ապրանքախմբերի մասին տեղեկատվության

---

<sup>14</sup> М. А. Федорова, К вопросу о методах оценки уровня теневой экономики национального хозяйства, Социально-экономические явления и процессы, Т. 9. № 8, 2014.

ոչ ամբողջական լինելը: Այսինքն՝ կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում մեթոդի կիրառությունը ենթադրում է հաշվեկշռված մոդելի ձևավորում՝ ըստ ապրանքային հոսքերի արտադրությունից մինչև վերջնական սպառում. նպատակը վերարտադրության տարբեր փուլերում օգտագործվող տեղեկատվական բազայի որակական բնութագրումն է: Մաքսային ծառայության՝ այս կամ այն ապրանքների, ռեսուրսների գնահատման վիճակագրությունը թույլ է տալիս որոշել ռազմավարական նշանակության ապրանքների արտադրության և ներմուծման թաքցված մասը: Մեթոդը կիրառելու նպատակը տեղեկատվական բազայում առկա թերությունները բացահայտելն է: Մեթոդը կիրառելու օրինակ կարող է լինել այն, երբ որևէ ապրանքի համախառն նյութական ծախսերը ավելի քիչ են, քան սպառված ռեսուրսները: Մեթոդի սկզբունքը բավականին պարզ է, իսկ գործնականորեն կիրառելը խոչընդոտներով չի: Այն, ունենալով արտադրական, ճյուղային նշանակություն, կիրառվում է դեռևս խորհրդային տարիներից:

Մակրոմեթոդներից առավել հայտնի և լայն կիրառություն ունի զբաղվածության հաշվարկային ցուցանիշների մեթոդը, որը ստեղծել է Իտալիայի վիճակագրական ինստիտուտը, և հայտնի է «իտալական մեթոդ» անվանմամբ: Մույն մեթոդը մշակելու հիմք է ծառայել այն, որ մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության իրական արդյունքների վերաբերյալ արժանահավատ տեղեկատվություն ձեռք բերելը բավականին բարդ է և անիրատեսական. պատճառներից կարող է լինել հարկային պարտավորությունների խուսափելու համար ձեռնարկատիրական գործունեության արդյունքները միտումնավոր թերհայտարարագրելը: Ուստի վիճակագիրները շեշտադրում են աշխատուժին առնչվող ծախսերը: Սկզբնական տվյալները ստացվում են պատահականորեն ընտրված տնային տնտեսությունների (ՓՄՁ) գործունեության աշխատուժին առնչվող ծախսերի ուսումնասիրությունից, այնուհետև հետազոտության արդյունքները տարածվում են աշխատակիցների, կազմակերպության և ճյուղի վրա՝ ստանալով միջին աշխատած մարդ/ժամը:

Հետազոտության արդյունքները համադրվում են համապատասխան պետական մարմինների (հարկային, սոցիալական ապահովություն) տեղեկատվությանը՝ լրիվ, մասնակի, հավելյալ աշխատաժամանակի համատեքստում կատարելով ճշգրտումներ: Ստացված ցուցանիշներով իրականացվում է արտադրության ծավալների ճշգրտում<sup>15</sup>:

Ընտրանքային հետազոտության արդյունքի հիման վրա ՀՆԱ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$\text{ՀՆԱ} = (T_{\partial}/T_{\partial}) \times T_{\partial} \times W,$$

ըստ որի՝

$(T_{\partial}/T_{\partial})$ -ն մեկ աշխատողի (ընտրանքային) մեկ տարվա ընթացքում աշխատաժամանակն է,

$T_{\partial}$ -ն՝ զբաղվածների պաշտոնական քանակը՝ ՀՆԱ-ի համար հաշվարկված,

$W$ -ն՝ տնտեսության աշխատանքի արտադրողականությունը<sup>16</sup>:

Ստվերային շրջանառության ծավալների գնահատման մոնետար մեթոդը հիմնվում է այն մոտեցման վրա, որ իրավական երկրում նախապատվությունը տալիս են ոչ թե կանխիկ դրամաշրջանառությանը, այլ անկանխիկ շրջանառությանը: Շրջանառվող դրամական զանգվածի ավելանալը, այսպես կոչված, նորմալ մակարդակի տնտեսության համեմատությամբ կարող է լինել ստվերային շրջանառության ինդիկատոր: Նորմալ մակարդակ ասելով՝ նկատի է առնվում կանխիկ դրամական միջոցների շրջանառությունն այն ժամանակաշրջանում, երբ ստվերային շրջանառության մակարդակը ավելի ցածր է, և այդ ժամանակահատվածի տնտեսական ցուցանիշները ընդունվում են որպես բազիսային: Կիրառվում են մեթոդի ավելի բարդ մոդիֆիկացված տարատեսակներ, օրինակ՝ գործառնությունների վերլուծության, կանխիկ փողի նկատմամբ պահանջարկի վեր-

<sup>15</sup> W. Beach, Why taxes affect Economic growth?, Heritage Foundation, 1998, p. 116.

<sup>16</sup> <https://www.lawmix.ru/bux/49221>

լուծության, տնտեսաչափական և այլ մեթոդներ<sup>17</sup>:

Սուվերային շրջանառության դինամիկան գնահատելու մոնետար կամ արտարժույթի պահանջարկի մեթոդը ի սկզբանե կիրառել է Ֆ. Կեզեն՝ ԱՄՆ արտարժույթի պահանջարկի և հարկային բեռի հարաբերակցությունը հաշվարկելու նպատակով: Ժամանակի ընթացքում այն կատարելագործել են տարբեր տնտեսագետներ և կիրառել՝ ԱՄՆ-ում տնտեսաչափական սարքերով արտարժույթի պահանջարկի ֆունկցիան գնահատելու համար: Մեթոդի առավելություններից է կիրառման մատչելիությունը, քանի որ սուվերային տնտեսության հիմնական գործառնությունները իրականացվում են կանխիկ, չնայած կարող են իրականացվել նաև ապրանքափոխանակմամբ և անկանխիկ գործառնություններով:

Սուվերային շրջանառության դինամիկան և ծավալները գնահատելու նպատակով հետևում են շրջանառվող դրամական զանգվածին: Սուվերային շրջանառությունը հիմնականում մեծացնում է կանխիկ դրամական միջոցների (արտարժույթի) պահանջարկը, որի մասին տեղեկատվությունը հրապարակում է կենտրոնական բանկը: Վերը նշվածը հաշվի առնելով՝ կիրառվում է ստորև ներկայացվող ինդիկատորը՝

Արտարժույթ/M1 կամ M2,

ըստ որի՝

M1-ն ընդգրկում է շրջանառությունում առկա կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները,

M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը, ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները<sup>18</sup>:

Մոնետար մեթոդն ունի բավականին լայն կիրառություն, տնտեսագետները, սակայն, անցումային տնտեսության համար այն դիտում են ոչ նպատակահարմար, քանի որ սղաճի բարձր

<sup>17</sup> Roberto Dell'Anno, Estimating the Shadow Economy in Italy: a Structural Equation Approach, Working Paper No. 2003-07, p. 14.

<sup>18</sup> Friedrich Schneider, Out of the Shadows: Measuring Informal Economic Activity 2017, <http://www.heritage.org/index/book/chapter-4>.

մակարդակը, սեփականաշնորհման, արժեթղթերի շուկան ընդլայնելը հանգեցնում են շրջանառության մեջ ՀՆԱ ձևավորելուն չմասնակցող դրամական զանգվածի ավելանալուն:

Ստվերային շրջանառության գնահատման կառուցվածքային մեթոդը հիմնվում է տարբեր ճյուղերի ստվերային շրջանառության վերաբերյալ տեղեկատվությունն օգտագործելու վրա՝ հավելելով ՀՆԱ-ում այդ ճյուղերի մասնաբաժինը: Կիրառվում է ռեգրեսիոն մոդելը, ըստ որի՝ կախյալ փոփոխականը ստվերային տնտեսության չափն է, իսկ գործոնները՝ հարկման մակարդակը, վարչական անձնակազմի և ընդհանուր տնտեսության ընդհանուր զբաղվածների թվի հարաբերությունը, զբաղվածության մակարդակը և այլն:

Խառը մեթոդները ենթադրում են տարբեր ոլորտների ստվերային գործունեության գնահատման այլ համալիր մեթոդների և թաքնված փոփոխականների համախմբում: Հիմնական գաղափարը հնարավորինս շատ դետերմինանտներ և ինդիկատորներ հաշվի առնող մոդել կառուցելն է:

Ներկայումս ստվերային շրջանառության ծավալները գնահատելու համար լայնորեն կիրառվում է MIMIC (Multiple Indicator-Multiple Causes (MIMIC) բազմաթիվ ինդիկատորներ, բազմաթիվ պատճառներ) մոդելը: MIMIC մեթոդը ենթադրում է, որ ստվերային շրջանառությունը շարունակում է մնալ չդիտարկված միջավայր (թաքնված փոփոխական)՝ մի կողմից կախված ստվերային շրջանառության ծավալների վրա ազդող ուսումնասիրվող ինդիկատորների քանակից, իսկ մյուս կողմից՝ ստվերային շրջանառության կարևոր դետերմինանտների պատճառահետևանքային փոփոխականներից<sup>19</sup>:

---

<sup>19</sup> [https://www.researchgate.net/figure/228346926\\_fig1\\_Figure-31-The-DYMIMIC-Approach-to-Estimating-the-Shadow-Economy](https://www.researchgate.net/figure/228346926_fig1_Figure-31-The-DYMIMIC-Approach-to-Estimating-the-Shadow-Economy).

### 1.3. Ստվերային տնտեսության զարգանալու համաշխարհային միտումները

Ստվերային տնտեսության վերաբերյալ առկա են բազմաթիվ հետազոտություններ, սակայն առ այսօր բացակայում է այդ երևույթի միասնական սահմանումը:

Ըստ մի սահմանման՝ ստվերային տնտեսությունը տնտեսական գործունեություն է, որը հակասում է գործող օրենսդրությանը, այսինքն՝ անօրինական տնտեսական գործունեությունների ամբողջություն է, որոնք ներառում են տարբեր ծանրության քրեական հանցագործություններ: Մեկ այլ դեպքում ստվերային տնտեսությունը պաշտոնական վիճակագրությամբ չհաշվառվող և հասարակության չվերահսկած արտադրությունն է, սպառումը և նյութական օգուտների փոխանակումն ու տնօրինումը, իսկ մի երրորդ կարծիքով ստվերային տնտեսություն են գործունեության այն բոլոր տեսակները, որոնք ուղղված են մարդկանց տարբեր կարիքները բավարարելուն:

Նշված սահմանումներից ամեն մեկը ճիշտ է յուրովի. դրանք ամբողջությամբ արտահայտում են դիտարկվող երևույթի էությունը:

Ստվերային տնտեսությունը կարելի է բաժանել երեք խոշոր խմբի:

1. Ոչ ֆորմալ տնտեսություն. ընդգրկում է տնտեսական գործունեության թույլատրելի տեսակները, մասնավորապես ապրանքների և ծառայությունների արտադրությունը, որոնք հարկերից խուսափելու նպատակով պաշտոնական վիճակագրության մեջ չեն հաշվառվում:

2. Կեղծ տնտեսություն. հափշտակություններն են, շահադիտական գործարքները, կաշառքն ու այլ տարատեսակ խարդախությունները, որ առնչվում են գումար ստանալուն և փոխանցելուն:

3. Ընդհատակյա տնտեսություն. ընդգրկում է օրենքով արգելված տնտեսության տեսակները:

Ստվերային տնտեսության զարգանալուն նպաստում են հետևյալ գործոնները:

1. Տնտեսական.

✓ բարձր հարկերը (շահութահարկ, եկամտային հարկ և այլն).

✓ ֆինանսական համակարգի ճգնաժամն ու նրա բացասական հետևանքների ազդեցությունը ողջ տնտեսության վրա.

✓ սեփականաշնորհման համակարգի անկատարությունը.

✓ չգրանցված տնտեսական կառույցների գործունեությունը:

2. Մոցիալական.

✓ բնակչության ցածր կենսամակարդակը, որը նպաստում է տնտեսական գործունեության թաքնված տեսակների զարգանալուն.

✓ գործազրկության բարձ մակարդակն ու բնակչության մի մասի՝ ամեն կերպ եկամուտ ստանալու ձգտումը.

✓ համախառն ներքին արդյունքի անհամաչափ բաշխումը:

3. Իրավական.

✓ օրենսդրության անկատար լինելը.

✓ իրավապահ մարմինների՝ անօրինական և քրեական տնտեսական գործունեությունը կանխարգելելուն ուղղված ոչ բավարար գործունեությունը.

✓ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը համակարգող գործիքակազմի անկատարությունը:

Ստվերային տնտեսությունը սերտորեն կապված է կոռուպցիային: Կոռուպցիան (լատ. Corruption՝ «վնաս, կաշառակերություն») պաշտոնատար անձի՝ պաշտոնեական դիրքը սեփական շահերի համար օգտագործելն է:

Կաշառակերությունն ու կոռուպցիան աշխարհում ամենահաճախ հնչող տերմիններից են. դրանց վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ ձևակերպումներ ու մոտեցումներ:

Կոռուպցիան համակարգված գործընթաց է, որի ժամանակ համակարգի բոլոր կողմերը հստակ գործիքակազմերով փոխկապված են, փոխհարաբերություններն էլ՝ փուլային կամ շարունակական:

Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի բազում փորձեր են արվել աշխարհում, որոնցից բացառիկներն են միայն հաջողությամբ պսակվել:

«TRACE International» միջազգային գործարար ընկերակցությունը և «Rand Corporation» ամերիկյան վերլուծական կենտրոնը հրապարակել են բիզնեսում կաշառակերության ռիսկի՝ աշխարհի երկրների վարկանիշային աղյուսակ, այսինքն՝ աշխարհի երկրները ըստ բիզնես կոռումպացվածության: Ստորև ներկայացվող վարկանիշային աղյուսակը կազմվում է առաջին անգամ ըստ չորս հիմնական չափորոշիչների՝ բիզնեսի և երկրի իշխանությունների փոխգործակցության, հակակոռուպցիոն օրենքների կիրառման, պետական ծառայության թափանցիկության և գործընթացների հասարակական վերահսկման հնարավորության: Վարկանիշային աղյուսակը կազմվել է բիզնես շրջանակի համար՝ այս կամ այն երկրում ռիսկերը գնահատելու համար:

*Աղյուսակ 3*

**Բիզնեսում կաշառակերության ռիսկի աղյուսակ (2016 - 2017 թթ.)<sup>20</sup>**

| <i>Երկիրը</i>               | <i>Երկրի դիրքը 2016թ.</i> | <i>Երկրի դիրքը 2017թ.</i> |
|-----------------------------|---------------------------|---------------------------|
| Շվեդիա                      | 1                         | 1                         |
| Նոր Զելանդիա                | 2                         | 2                         |
| Հայաստան                    | 64                        | 83                        |
| Բելառուս                    | 49                        | 134                       |
| Ղազախստան                   | 121                       | 152                       |
| Ղրղրզստան                   | 148                       | 133                       |
| Ռուսաստան                   | 94                        | 144                       |
| Իրան                        | 157                       | 169                       |
| Վրաստան                     | 13                        | 25                        |
| Թուրքիա                     | 79                        | 139                       |
| Ադրբեջան                    | 123                       | 112                       |
| Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 20                        | 16                        |
| Ճապոնիա                     | 11                        | 26                        |

<sup>20</sup> Տվյալներն ըստ՝ <http://www.traceinternational.org/trace-matrix>.

Վարկանշային աղյուսակի 197 երկրների շարքում ընդգրկված է նաև Հայաստանը, որը 2014 թ. զբաղեցրել է 87-րդ հորիզոնականը: Աղյուսակից նկատելի է, որ վերջին տարիներին Հայաստանը բարելավել է դիրքը՝ 2016 թ. զբաղեցնելով 64-րդ, իսկ 2017թ.՝ 83-րդ տեղը: ԵՄՏՄ անդամ երկրների շարքում լավագույն ցուցանիշն ունի Բելառուսը: Աշխարհի երկրների շարքում վերջին տարիների անփոփոխ առաջատարներ են Շվեդիան ու Նոր Զելանդիան:

Ստվերային տնտեսություն գոյություն ունի գրեթե բոլոր երկրներում, սակայն սոցիալ-տնտեսական անկայունությամբ և տնտեսության պետական կարգավորման ցածր մակարդակով պայմանավորված՝ դրա տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է անցումային և զարգացող տնտեսությամբ երկրներում:

Ստվերային տնտեսության մեծ մասնաբաժինը պետական ինստիտուտների արհեստավարժ չլինելու հետևանք է: Վերահսկողությունը խստացնելով՝ պետության տնտեսությունը ստվերից դուրս բերելու ձգտումները մեծացնում են քաղաքացիների և բիզնեսի անվստահությունը:

Արտոնագրված հաշվապահների ասոցիացիան (ACCA) հրապարակել է «Դուրս գալ ստվերից» զեկույցը, որում երկրները դասակարգել է՝ ըստ ստվերային տնտեսության ծավալների: Զեկույցն առավել հետաքրքրական է ստվերի զարգանալու ընդհանուր հեռանկարների գնահատմամբ: Ստվերային գործունեության աճին կնպաստեն ընդհանուր օգտագործման տընտեսություն զարգացնելը (sharing economy), վոքքր բիզնեսի ծախսերի և ոչ ֆորմալ զբաղվածության աճը, այնպիսի ծառայություններ և տեխնոլոգիաներ զարգացնելը, որոնք թույլ են տալիս խուսափել ֆորմալ հաշվետվություններից, վաճառքի և վճարների հոսքերից:

Տեխնոլոգիական առաջընթացը կարող է նպաստել բիզնեսը ստվերից դուրս բերելուն. կանխիկ դրամաշրջանառությունն ու գործարքների ավտոմատացումը հեշտացնում են ոչ պաշտոնական հոսքերի և վճարահսկողությունը:

Զեկույցում ներկայացված են ստվերային տնտեսության

ծավալների կանխատեսումները (% ՀՆԱ-ի նկատմամբ) 28 երկրներում: Հայաստանը չի ընդգրկվել այդ հետազոտություններում: Կանխատեսումները կատարվել են ստվերի գնահատման նոր մեթոդաբանությամբ, որի հիմքը միկրոտնտեսական տարրերն են, և այն հիմնավորված չէ վիճակագրական առանձնահատկություններով և ենթադրություններով: Մոդելում օգտագործվում են ստվերային տնտեսությունը գնահատելու մակրոտնտեսական գործոններ: Ըստ զեկույցի՝ կանխատեսումները հենվում են տնտեսության երկու հատվածների՝ ֆորմալ և ստվերային, դինամիկ ընդհանուր հավասարակշռության մոդելի վրա: Դինամիկ ընդհանուր հավասարակշռման մոդելի (DGE) նպատակը տնտեսության գործունեությունը ներկայացնելն է՝ ընդհանուր առմամբ վերլուծելով միկրոտնտեսական որոշումների փոխազդեցությունը:

Աղյուսակ 4

Ստվերային տնտեսության ծավալների կանխատեսումները<sup>21</sup>

| Երկիրը       | 2011  | 2016  | 2017  | 2020  | 2025  | Միջին ժամանակահատվածը |
|--------------|-------|-------|-------|-------|-------|-----------------------|
| Ադրբեջան     | 47    | 67,04 | 66,12 | 56,73 | 58,38 | 58,05                 |
| Էստոնիա      | 27,78 | 28,48 | 28,4  | 28,09 | 26,46 | 27,83                 |
| Իտալիա       | 26,24 | 26,32 | 26,5  | 26,56 | 26,37 | 26,37                 |
| Ճապոնիա      | 10,22 | 10,08 | 9,89  | 9,42  | 7,86  | 9,5                   |
| Լատվիա       | 25,45 | 24,57 | 24,17 | 23,21 | 20,79 | 23,61                 |
| Լիտվա        | 27,87 | 26,27 | 26,01 | 25,54 | 25,79 | 26,23                 |
| Լեհաստան     | 24,59 | 23,68 | 23,42 | 22,95 | 22,13 | 23,33                 |
| Ռուսաստան    | 39,33 | 39,07 | 39,29 | 39,37 | 39,3  | 39,19                 |
| Թուրքիա      | 27,43 | 25,72 | 24,95 | 23,85 | 21,55 | 24,7                  |
| Ուկրաինա     | 45,16 | 45,96 | 46,12 | 46,1  | 45,98 | 45,84                 |
| Մեծ Բրիտանիա | 11,83 | 11,47 | 11,29 | 11,19 | 10,83 | 11,33                 |
| ԱՄՆ          | 8,2   | 7,78  | 7,69  | 7,42  | 6,94  | 7,59                  |

<sup>21</sup> Տյալներն ըստ՝ Emerging from the shadows 20, The shadow economy to 2025, The Association of Chartered Certified Accountants, June 2017.

Իսկ թե որոնք են նշված երկրներում ստվերային տնտեսության ծավալները պայմանավորող գործոնները ներկայացնում է Աղյուսակ 5-ը:

Աղյուսակ 5

**Երկրներում ստվերային տնտեսության ծավալները պայմանավորող գործոններ<sup>22</sup>**

| <i>Երկիր</i> | <i>Ստվերային տնտեսության գործոններ</i> |   |                         |
|--------------|--|---|-------------------------|
|              | <i>1</i>                               | <i>2</i>                                | <i>3</i>                |
| Ադրբեջան     | Կոռուպցիայի վերահսկողություն           | Ժողովրդավարական հաշվետվողականություն    | ՀՆԱ աճ                  |
| Էստոնիա      | ՀՆԱ աճ                                 | Գործազրկություն                         | Բնակչության աճ          |
| Իտալիա       | ՀՆԱ աճ                                 | Գործազրկություն                         | Բյուրոկրատիայի որակ     |
| Ճապոնիա      | Մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ                 | Երիտասարդ բնակչություն (ընդհանուր% -ով) | Բնակչության աճ          |
| Լատվիա       | Կոռուպցիայի վերահսկողություն           | Բյուրոկրատիայի որակ                     | ՀՆԱ աճ                  |
| Լիտվա        | Բյուրոկրատիայի որակ                    | Կոռուպցիայի վերահսկողություն            | ՀՆԱ աճ                  |
| Լեհաստան     | Բյուրոկրատիայի որակ                    | Կոռուպցիայի վերահսկողություն            | Մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ  |
| Ռուսաստան    | Կոռուպցիայի վերահսկողություն           | Ժողովրդավարական հաշվետվողականություն    | ՀՆԱ աճ                  |
| Թուրքիա      | Կոռուպցիայի վերահսկողություն           | Գործազրկություն                         | Մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ  |
| Ուկրաինա     | Բյուրոկրատիայի որակ                    | Մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ                  | Քաղաքական կայունություն |
| Մեծ Բրիտանիա | Գործազրկություն                        | ՀՆԱ աճ                                  | Բնակչության աճ          |

<sup>22</sup> Տվյալներն ըստ՝ Emerging from the shadows 20, The shadow economy to 2025, The Association of Chartered Certified Accountants, June 2017.

Ինչպես կարելի է նկատել, սավերային տնտեսության ծավալները պայմանավորող գործոններից առավել լայնորեն տարածված են ՀՆԱ աճը, կոռուպցիայի վերահսկողությունն ու գործազրկությունը:

1995 թ. «Transparency International» միջազգային հասարակական կազմակերպությունը ամեն տարի ներկայացնում է կոռուպցիայի ընկալման ինդեքսը ( Corruption Perceptions Index, CPI): Այն ցուցանիշ է, որն արտացոլում է վերլուծաբանների և ձեռնարկատերերի կոռուպցիայի ընկալման մակարդակի գնահատականը՝ հաստատուն սանդղակով: Ցուցանիշի հիմքը մի շարք անկախ հարցումներն են. ներգրավված են միջազգային ֆինանսական և մարդու իրավունքների պաշտպանության փորձագետներ, այդ թվում՝ Ասիայի և Աֆրիկայի զարգացման բանկերը, Համաշխարհային բանկը և «Freedom House» ամերիկյան կազմակերպությունը: Ցուցանիշը 0-ից՝ կոռուպցիայի առավելագույն մակարդակ, մինչև 100՝ կոռուպցիայի բացակայություն, գնահատականն է: 2014թ. և 2015թ. համապատասխանաբար իրականացվել են ուսումնասիրություններ 175 երկրների և տարածաշրջանների կտրվածքով: Փորձենք սղյուսակով ներկայացնել որոշ երկրների զբաղեցրած դիրքերն ու ստացած գնահատականները (տե ս Աղյուսակ 6-ը):

Աղյուսակ 6

Կոռուպցիայի ընկալման ցուցանիշը 2014-2016թթ.<sup>23</sup>

| Երկիրը       | 2014  |             | 2015  |             | 2016  |             |
|--------------|-------|-------------|-------|-------------|-------|-------------|
|              | Դիրքը | Գնահատականը | Դիրքը | Գնահատականը | Դիրքը | Գնահատականը |
| 1            | 2     | 3           | 4     | 5           | 6     | 7           |
| Նոր Զելանդիա | 1     | 91          | 4     | 88          | 1     | 90          |
| Հայաստան     | 94    | 37          | 95    | 35          | 113   | 33          |
| Բելառուս     | 119   | 31          | 107   | 32          | 79    | 40          |
| Ղրղրզստան    | 136   | 27          | 123   | 28          | 136   | 26          |
| Ռուսաստան    | 136   | 27          | 119   | 29          | 131   | 29          |
| Վրաստան      | 50    | 52          | 48    | 52          | 44    | 57          |

<sup>23</sup> Տվյալներն ըստ՝ <https://www.transparency.org/>.

| 1            | 2   | 3  | 4   | 5  | 6   | 7  |
|--------------|-----|----|-----|----|-----|----|
| Թուրքիա      | 64  | 45 | 66  | 42 | 75  | 41 |
| Ադրբեջան     | 126 | 29 | 119 | 29 | 123 | 30 |
| ԱՄՆ          | 17  | 74 | 16  | 76 | 18  | 74 |
| Ճապոնիա      | 15  | 76 | 18  | 75 | 20  | 72 |
| Էստոնիա      | 26  | 69 | 23  | 70 | 22  | 70 |
| Իտալիա       | 69  | 43 | 61  | 44 | 60  | 47 |
| Լատվիա       | 43  | 55 |     |    | 44  | 57 |
| Լիտվա        | 39  | 58 | 32  | 61 | 38  | 59 |
| Լեհաստան     | 35  | 61 | 30  | 62 | 29  | 62 |
| Ուկրաինա     | 142 | 26 | 130 | 27 | 131 | 29 |
| Մեծ Բրիտանիա | 14  | 78 | 10  | 81 | 10  | 81 |

Աղյուսակից նկատելի է, որ երկրների դիրքերը տարիների ընթացքում փոխվել են, սակայն մեծ մասամբ պայմանավորված չեն եղել ստացած գնահատականներով: Հիմնվելով Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկած անվանական ՀՆԱ-ի և ամեն մի երկրի համար գնահատված ստվերային տնտեսության ծավալի վրա՝ կարելի է գնահատել ստվերային տնտեսության ծավալները երկրի տեղական արժույթով: Տվյալները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Ստվերային տնտեսության արժեքը 2016 թ.<sup>24</sup>

| Երկիրը   | 2016  | 2016թ. անվանական ՀՆԱ (տեղական արժույթ, մլրդ <sup>25</sup> ) | 2016թ. ստվերային տնտեսության գնահատված արժեքը (տեղական արժույթ, մլրդ) |
|----------|-------|---|---|
| 1        | 2     | 3   | 4   |
| Ադրբեջան | 67.04 | 59.99   | 40.22   |
| Էստոնիա  | 28.48 | 20.916  | 5.96  |
| Իտալիա   | 26.32 | 1,672.44  | 440.19  |
| Ճապոնիա  | 10.08 | 537,289.40  | 54,158.77   |
| Լատվիա   | 24.57 | 25.018  | 6.15  |
| Լիտվա    | 26.27 | 38.631  | 10.15   |

<sup>24</sup> Emerging from the shadows 20, The shadow economy to 2025, The Association of Chartered Certified Accountants, June 2017.


<sup>25</sup> Տվյալներն ըստ՝ 2016թ. անվանական ՀՆԱ-ի. վերցված են Արժույթի միջազգային հիմնադրամից:

| 1            | 2     | 3         | 4         |
|--------------|-------|-----------|-----------|
| Լեհաստան     | 23.68 | 1,844.34  | 436.74    |
| Ռուսաստան    | 39.07 | 85,880.60 | 33,553.55 |
| Թուրքիա      | 25.72 | 2,590.52  | 666.28    |
| Ուկրաինա     | 45.96 | 2,383.18  | 1,095.31  |
| Մեծ Բրիտանիա | 11.47 | 1,939.64  | 222.48    |
| ԱՄՆ          | 7.78  | 18,569.10 | 1,444.68  |

Ստվերային տնտեսության ծավալների վրա ազդում են գործոնների հետևյալ խմբերը.

- ❖ տնտեսական գործոններ,
- ❖ բիզնես գործոններ,
- ❖ սոցիալ-ժողովրդագրական գործոններ,
- ❖ սոցիալ-բնապահականական գործոններ,
- ❖ կառավարական գործոններ,
- ❖ գիտական և տեխնոլոգիական գործոններ:

Այժմ փորձենք գծապատկերով ներկայացնել վերոնշյալ խմբերում ներառված գործոններից՝ ստվերային տնտեսության մակարդակի վրա առավել ծանրակշիռ ազդեցություն ունեցողների գնահատականները:



Գծապատկեր 7. Ստվերային տնտեսության մակարդակի վրա ազդող գործոնների գնահատականները<sup>26</sup>

<sup>26</sup> Տվյալներն ըստ՝ Emerging from the shadows 20. The shadow economy to 2025. The Association of Chartered Certified Accountants, June 2017.

Գծապատկերից ակնհայտ է, որ աշխարհում ստվերային տնտեսության աճին նպաստող գործոնների ցանկը գլխավորում է գործազրկության աճը, հաջորդում են կոռուպցիայի բարձր մակարդակն ու հարկային բեռը: Թույլ ազդեցություն ունեն գիտական և տեխնոլոգիական խմբին պատկանող գործոնները՝ 3D տպագրությունն ու թվային տեխնոլոգիաների ինտեգրումը: Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ կարելի է առանձնացնել այն օղակները, որոնք պատասխանատու են ստվերային տնտեսությունը կրճատելու համար: Դրանք են՝

- կառավարությունը,
- անհատները՝ ձեռնպահ մնալով տնտեսության կամ հաշվետվությունների ոչ ֆորմալ ձևերից,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- ստվերային տնտեսությամբ զբաղվող հատուկ մասնագիտացված հաստատությունները,
- այլ օղակներ:

Տարածաշրջանում գործազրկության ամենաբարձր մակարդակն ունեցող Հայաստանի Հանրապետությունում 2012-2025 թթ. ՀՀ հեռանկարային զարգացման ծրագրով<sup>27</sup> նախատեսվում է, հարկային ծառայությունների աշխատանքը կատարելագործելով և արդեն իսկ սահմանված մուտքերով կենսաթոշակային համակարգի անցնելով, մեծացնել ֆորմալ զբաղվածության շուկան: Աշխատաշուկայի ճկունությունն ապահովվելու համար առավել նպատակահարմար է որոշակի փոփոխություններ կատարել աշխատանքային օրենսգրքում: Առավել մեծ ուշադրություն կդարձվի երիտասարդների գործազրկության մակարդակին: Ենթադրվում է, որ ծրագրային միջոցառումները կբարձրացնեն ֆորմալ զբաղվածության մակարդակը: Ըստ կանխատեսումների՝ արդեն 2018թ. ֆորմալ զբաղվածության մակարդակը կաճի՝ շինարարության ոլորտում հասնելով 55%-ի (2010թ.՝ 45%), արդյունաբերության ոլորտում 95%-ի (2010թ.՝ 88%), և

---

<sup>27</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»:

առևտրի ոլորտում 81%-ի ( 2010թ.՝ 77%): Ենթադրվում է, որ 2017թ. վերջին պաշտոնական տվյալներով գյուղատնտեսության ոլորտի ֆորմալ զբաղվածության մակարդակը կազմելու է 77%, իսկ ըստ կանխատեսումների՝ 2025 թ. այն կկազմի արդեն 83%:

Պետական եկամուտների աճի քաղաքականությունը հիմնված է հարկային և մաքսային ծառայությունների արմատական բարեփոխումների, ոչ ֆորմալ տնտեսությունները բացահայտելու և կանխարգելելու վրա: Բանկային ծառայությունները բարելավելու և ոչ ֆորմալ հատվածը կրճատելու համար նախատեսվում է խթանել անկանխիկ գումարների պահանջարկը: Այդպիսով, կանխիկ դրամով պահուստների մասնաբաժինը աստիճանաբար կնվազի՝ ի նպաստ անկանխիկ գումարների, որոնց մասնաբաժինը 2025 թ. պետք է հասնի 21-22%-ի: Մինևույն ժամանակ տնտեսության դրամայնացումը պետք է կազմի 52-53%, որն էլ կնպաստի ստվերային տնտեսությունը նվազեցնելուն:

Հայաստանի Հանրապետության զբաղվածության՝ 2013-2018 թթ. ռազմավարությունը պարունակում է Հայաստանի մակրոտնտեսական զարգացման հեռանկարների մանրամասն նկարագրությունը: Այն համարելով ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված կարևոր քայլ՝ ներկայացված են ոչ ֆորմալ զբաղվածության դեմ պայքարին ուղղված հետևյալ մակրոտնտեսական միտումները.

➤ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում՝ ապահովելով բիզնեսի արագ և հետևողական զարգացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ոչ ֆորմալ տնտեսությունը ճնշելուն.

➤ ապահովել պետական մարմինների հստակ փոխգործակցություն, այդ թվում՝ փոքր և միջին բիզնեսի ոլորտին ուղղված ամենամյա պետական աջակցություն և զբաղվածության ծրագրերի իրականացում.

➤ բազմակողմ տնտեսական բարեփոխումներով և պետական ծրագրերի իրականացմամբ համապատասխան քանակի և որակի աշխատանքային պաշարների ձևավորում, որոնք

անհրաժեշտ են արդյունաբերության և ծառայությունների ոլորտում նոր աշխատատեղեր ստեղծելու համար:

Բնչպես ցույց է տալիս տարբեր երկրների փորձը, ոչ ֆորմալ տնտեսության կրճատման ավելի կայուն արդյունքների կարելի է հասնել սոցիալական երկխոսություններով:

Առանձնակի ուշադրության են արժանի ոչ ֆորմալ տնտեսության հանդեպ գործատուների դիրքերը: Այնուամենայնիվ, խոշոր, միջին և փոքր բիզնեսի համար խնդրի տեսլականը և վերաբերմունքը տարբեր են:

### *Եզրակացություններ և առաջարկություններ*

Ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ ՀՀ սովերային տնտեսության զարգացումը խոչընդոտող ամենահիմնական գործոններից է ՀՀ տնտեսության կառուցվածքային ձևախեղումը, որը դրսևորվում է ներդրումային ռիսկերի մեծացմամբ և ներդրումների ծավալների նվազեցմամբ: Նախ՝ դրանցով պայմանավորված՝ առաջին հերթին կրճատվում են տնտեսության իրական հատվածի ներդրումները, որը բացասաբար է անդրադառնում տեղական արտադրությունը զարգացնելու և ներկրված արտադրանքի մասնաբաժնի աճն ու պահանջարկը բավարարելու վրա: Բացի այդ՝ սովերային տնտեսության տարածվելը նպաստում է անօրինական և թաքնված բիզնեսում ներառված սուբյեկտների հարստանալու հաշվին եկամուտներն ավելանալուն: Ուստի պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում բնակչության ամենահարուստ խավի եկամուտները մի քանի անգամ գերազանցում են նվազ եկամուտ ունեցողներինը:

Սովերային տնտեսությունը զգալի վնաս է հասցնում ինչպես պետական, այնպես էլ համայնքային բյուջեներին՝ տնտեսվարող սուբյեկտների՝ հարկային վճարումներից խուսափելու պատճառով, և բյուջետային եկամուտների նվազելու հետևանքով պետությունը չի կարողանում ֆինանսավորել տնտեսության առանցքային ոլորտները: Միաժամանակ հարկ է նշել այն

իրողությունը, որ ստվերային հարաբերություններն ու կոռուպցիան, կործանարար ազդեցություն գործելով հասարակության բոլոր ոլորտների վրա (տնտեսություն, քաղաքականություն, սոցիալական և իրավական ոլորտներ, հասարակական գիտակցություն, միջազգային հարաբերություններ), այսօր մեր երկրում իրապես վտանգում են տնտեսական անվտանգությունը և հասարակության ժողովրդավարական զարգացումը:

Հայաստանի Հանրապետության համար ստվերային տնտեսության գոյությունը դարձել է ազգային անվտանգության համակարգային լուրջ խնդիր, որը կարելի է լուծել՝ միայն պետության և հասարակության բոլոր ոլորտներում նպատակային միջոցառումների փաթեթ իրականացնելով: Հատկանշական է, որ ստվերային տնտեսության և կոռուպցիայի դեմ պայքարի հաջողության գրավականը հնարավոր է միայն գիտակցված զանգվածային աջակցության պայմաններում, որին կարելի է հասնել միայն կառավարման պետական մարմինների և իշխանության հանդեպ քաղաքացիների վստահության դեպքում:

Ուսումնասիրելով ողջ աշխարհում ստվերային տնտեսության առաջանալու պատմությունը, ինչպես նաև հետևելով զարգացման միտումներին՝ կարելի է եզրակացնել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում է՛լ ավելի է խորացել ստվերային տնտեսության խնդիրը, այն նորովի է դրսևորվում և, ցավոք, ժամանակի ընթացքում է՛լ ավելի է ամրապնդվում՝ ձեռք բերելով նոր ձևեր, հարմարվելով ինչպես ՀՀ օրենսդրությանը, այնպես էլ շրջակա միջավայրին: Հետևաբար ստվերային տնտեսության, մասնավորապես կոռուպցիայի՝ դրսևորման հետևանքի հիմնախնդիրներն ամենաարդիականներից են և բացի խորքային վերլուծություններից՝ պահանջում են նաև տնտեսության վրա ազդեցությունը նվազեցնելու նոր ձևերի և միջոցների մշակում:

Քանի որ ստվերային տնտեսության վրա ազդում են բազմաթիվ գործոններ, ապա դրա դեմ պայքարի միջոցառումները պետք է լինեն համալիր և համակարգային: Այդ միջոցառումները պետք է իրականացվեն ինչպես տնտեսական, այնպես էլ

իրավական ու սոցիալական տեսանկյուններից: Այսպես՝

1. Հարկային համակարգի շարունակական բարեփոխումներ, որոնք նպաստում են ստվերային ոլորտից եկամտի մի մասը դուրս բերելուն:

2. Հարկային և մաքսային վարչարարության ընթացքում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելուն ուղղված միջոցառումներ:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի խստացում:

4. Երկրից դուրս բերված կապիտալը վերադարձնելու միջոցառումներ և կապիտալի արտահոսքի դադարեցում: Ավելի գրավիչ ներդրումային միջավայրի ստեղծում:

5. Գաղտնի գործող արտադրական գործընթացների բացահայտում և դրանց գործունեության դադարեցում (օրինակ՝ ալկոհոլային խմիչքի ոլորտում):

6. Ֆինանսական հոսքերի վերահսկողության խստացում՝ փողերի լվացումը կանխարգելելու նպատակով:

7. Քաղաքականությունից և պետական կառավարման ապարատի ենթակայությունից դուրս բիզնես զարգացնելուն ուղղված գործուն և նպատակային քայլեր:

## **ԳԼՈՒԽ 2. ՀՀ ստվերային շրջանառության կառուցվածքն ու առանձնահատկությունները**

### **2.1. ՀՀ տնտեսության առանձնահատկությունները ստվերային շրջանառության տեսանկյունից**

Հայաստանում շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման սկզբում տնտեսական բարեփոխումների շրջանակներում գներն ազատականացնելը, մասնավոր սեփականություն հաստատելը և ընդհանրապես տնտեսության մեջ պետության միջամտությունը նվազեցնելը զուգորդվեցին պետության կիրառած կոշտ հարկային կարգավորմամբ և բարձր հարկային դրույքաչափերի քաղաքականությամբ, որոնք նպաստեցին մեր երկրում տնտեսական և քաղաքական անորոշության միջավայրում, դեռևս ԽՍՀՄ-ից ժառանգած ստվերային տնտեսության ծավալների ընդարձակմանը:

Սկիզբ առած բարեփոխումները բազում անորոշություններ առաջացրին տնտեսությունում, մասնավորապես՝ մասնավոր սեփականություն ներդնելու նպատակահարմարության և շուկայական հարաբերությունները զարգացնելու առումներով: Չնայած բազմաթիվ թերություններին՝ խորհրդային համակարգին բնորոշ էր որոշակի կանխատեսելիություն (աշխատակիցները վստահ էին իրենց սոցիալական ապահովվածությանը, բնակչությունն ակնկալում էր գների գրեթե բացարձակ կայունություն), բայց և դրա հետ մեկտեղ ապրանքների պակասուրդի գոյություն՝ երկար ժամանակահատվածի համար: Համակարգը հարաբերականորեն կայուն էր, և ստվերային տնտեսությունը նույնպես «վայելում» էր հարաբերական կայունություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում տեղի ունեցած տնտեսական և քաղաքական կտրուկ փոփոխությունները վերացրին ստվերային տնտեսության հարաբերական կայունությունը, որի հետևանքով մեծացան տնտեսության թաքնված հատվածի ծավալները: Այսպիսի անորոշությունը բացասա-

բար անդրադարձավ նաև սովերային գործիչների վրա:

Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակը լիարժեք նկարագրելու, տնտեսության սովերային հաստիքի դերը և ազդեցությունը բացահայտելու նպատակով անհրաժեշտ է մանրագնին ուսումնասիրել տնտեսության ներկայիս կառուցվածքը, որը բնութագրվում է ինչպես նախկին պլանային ժամանակաշրջանից ժառանգված (թեև քիչ ծավալով), այնպես էլ տնտեսության շուկայական համակարգին բնորոշ տարրերով՝ վերջինիս տեսակարար կշռի անընդհատ և հաստատուն մեծացմամբ: Տնտեսության ներկայիս կառուցվածքը պայմանականորեն կարելի է բաժանել 4 հիմնական խմբի՝ տնտեսության «հին», «նոր», սովերային և, այսպես կոչված, «անկախ», ոչ պաշտոնական («բնաիրային տնտեսություն») հաստիքներ:

Հայաստանի տնտեսության «հին» հաստիքը հիմնականում ներառում է տարբեր պետական ձեռնարկություններ, ինչպես նաև մասնավորեցված այն ձեռնարկությունները, որոնք սեփականաշնորհումից հետո արտադրություն կազմակերպելու և ընդարձակվելու առումով էապես չեն փոփոխվել: Ապապետականացված շատ ձեռնարկություններ սեփականաշնորհումից հետո, իրավական կարգավիճակի փոփոխությունից բացի, արտադրություն կազմակերպելու, աշխատակիցների և ձեռնարկության տնօրենի հարաբերությունները վերափոխելու կամ նոր տեխնոլոգիաներ ներդնելու առումներով նշանակալի առաջընթաց չեն արձանագրել: Ավելին, սեփականաշնորհումից հետո ձեռնարկությունների մեծ մասը զանգվածաբար վաճառեց արտադրական հզորությունները և արտադրության հիմնական միջոցները և ձեռնարկությունները ներդնողների համար ընդհանրապես դարձրեց ոչ գրավիչ: Ըստ էության, այս հաստիքն արդեն իսկ դուրս է մղված տնտեսական հարաբերությունների համակարգից և հետաքրքրություն կարող է ներկայացնել միայն տեսականորեն:

Տնտեսության «նոր» հաստիքն ընդգրկում է նոր ստեղծված մասնավոր, սեփականաշնորհված և իրապես գործող ու նոր տնտեսական պայմանները լիարժեք ընկալող ղեկավար ունե-

ցող ձեռնարկությունները:

Հայաստանի տնտեսության ստվերային հատվածը ներառում է տնտեսության այն մասը, որտեղ ստեղծված եկամուտը մասամբ կամ ամբողջությամբ չի հայտարարագրվում պաշտոնական մարմիններում: Տնտեսության «նոր» հատվածում բնականաբար կան ձեռնարկություններ, որոնք հիմնականում հարկային վճարումներից խուսափելու համար չեն հայտարարագրում իրական եկամուտների ողջ ծավալը: Այսպիսի պայմաններում ֆինանսական շուկաները «օրինականացնող» դեր են խաղում չհայտարարագրված եկամուտները գանձելու առումով և այդ եկամուտների մի մասը վերադարձնում են տնտեսության պաշտոնական հատված:

Տնտեսական ճիշտ քաղաքականություն իրականացնելու համար շատ կարևոր է բացահայտել այն գործոնները, որոնք նպաստում են ձեռնարկատերերի՝ մասամբ կամ ամբողջությամբ եկամուտները չհայտարարագրելուն, ինչպես նաև հաշվարկելով տնտեսության ստվերային հատվածի չափը՝ համապատասխանաբար ճշգրտել առկա տնտեսական քաղաքականությունը: Մտվերային տնտեսությունը պարունակում է տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակներ, որոնք կարելի է միավորել՝ ելնելով հարկային և սոցիալական վճարումներից խուսափելու, աշխատուժի վարձատրության առավել ճկուն լինելու և աշխատանքային կոլեկտիվների կամ արհեստակցական միությունների հնարավոր ճնշումներից խուսափելու ընդհանուր նպատակներից: Տնտեսության ստվերային հատվածում առկա են նաև քրեածին շատ տարրեր, որոնք նույնպես տնտեսական գործունեությունը չհայտարարագրելու պատճառ են: Այս դեպքում ստվերային գործունեության հիմնական պատճառը ոչ թե հարկերն ու պարտադիր այլ վճարումներն են, այլ անօրինական տնտեսական գործունեությունը:

Հայաստանի ստվերային տնտեսության առանձնահատկություններից է այն, որ ստվերային ոլորտում ստեղծված եկամուտների մի մասը ձևավորվում է պետական խողովակներով կամ վերջինիս ակտիվ միջամտությամբ (պետական պատվեր-

ներին առնչվող խաբեություններ, այսպես կոչված, «ատկատներ» և այլն): Ընդ որում, հետաքրքիրն այն է, որ սովերային նմանատիպ գործունեությամբ ստեղծված եկամուտը համեմատաբար հեշտ է օրինականացնել՝ պայմանավորված բիզնեսի և քաղաքականության սերտաճմամբ և կոռուպցիայի բարձր մակարդակով, ուստի սովերային շրջանառության այս հատվածին անհրաժեշտ է առանձնահատուկ մոտեցում՝ սովերային տնտեսության ծավալները կրճատելու տնտեսական, իրավական և մյուս մեթոդներն ու մեխանիզմները զուգորդելով հակակոռուպցիոն գործուն ռազմավարությամբ, բյուջետային կարգապահության խստացմամբ, պետական ֆինանսական վերահսկողության համակարգի արմատական վերանայմամբ և ընդհանրապես պետական կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարական ծրագրերով:

Հայաստանի սովերային տնտեսության առանձնահատկություններից է նաև դրա՝ համեմատաբար ոչ մեծ ծավալով քրեածին լինելը:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ Հայաստանի տնտեսության սովերային հատվածը, ի տարբերություն այլ երկրների, բավականին «տեսանելի» է. հասարակության ծանր սոցիալական պայմաններից ելնելով՝ պետությունը սովերային գործունեության շատ տեսակների նկատմամբ մեղմ քաղաքականություն է վարում: Այս պարագայում սովերային շատ գործիչներ, օգտվելով պետության մեղմ քաղաքականությունից, ընդլայնում են իրենց գործունեության շրջանակները՝ ավելի մեծ վնասներ հասցնելով հասարակությանը: Ավելին, սովերային գործունեության որոշ տեսակներ ոչ միայն տեսանելի են, այլև կարծես «նորմալ» են համարվում՝ պայմանավորված համապատասխան գործունեության հիմնարար լուծումները մշակելու և կիրառելու գործընթացը ձգձգելով (օրինակ՝ բոլորին է հայտնի, որ ավտոմեքենաների տեխնիկական գնության ոլորտում գումարներ են «պտտվում», սակայն գործառույթը, ըստ էության, չի կատարվում և այլն):

Հայաստանի սովերային տնտեսության մեկ այլ առանձնա-

հատկությունն էլ այն է, որ ստվերը (բացառությամբ քրեաձին և անօրինական գործունեության) գործում է տնտեսության ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական հատվածներում: Հարկային վարչարարության անարդյունավետության և այդ ոլորտում առկա կոռուպցիայի պատճառով հնարավոր է փոխհամաձայնության գալ համապատասխան պաշտոնական մարմինների ներկայացուցիչների հետ՝ տնտեսական գործունեության մի մասը պահելով ստվերային, մյուս մասը՝ պաշտոնական հատվածներում:

Ինչպես արդեն նշվել է, ստվերային տնտեսությունը բացասաբար է ազդում տնտեսական համակարգի և հասարակության վրա: Սակայն գոյություն ունեն նաև ստվերային հատվածի դրական հետևանքներ, որոնք արդարացնում են տնտեսության թաքնված հատվածի գոյությունը: Հայաստանի համար դրանցից ամենակարևորը բնակչության սոցիալական խնդիրները մեղմելն է, մասնավորապես՝ տարբեր ապրանքների պակասուրդի կամ բարձր գների դեպքում դրանց «ստվերային» առևտուրը, նոր աշխատատեղեր ստեղծելը և տնտեսական կյանքը որոշակիորեն ակտիվացնելը:

Անկախությունից անմիջապես հետո՝ տնտեսական բարեփոխումների ամենակզբնական փուլում՝ 1990-1994 թթ., կարելի է ասել, որ ստվերային տնտեսության կայունացնող դերը Հայաստանի տնտեսությունում ավելի մեծ է եղել, քան բացասական հետևանքները: Այդ ժամանակահատվածը բնորոշվում էր ամենատարրական տարբեր ապրանքների (ինչպիսիք են, ասենք, հացը, շաքարավազը, էլեկտրաէներգիան և այլն) պակասուրդով և այդ ապրանքատեսակների համար երկրորդական «սև» շուկայի ձևավորմամբ: Այդ ժամանակաշրջանում պետության ուշադրության կենտրոնում հիմնականում Ադրբեջանի սանձազերծած չհայտարարված պատերազմն էր, և ստվերային գործունեության նկատմամբ պետության դիրքորոշումը այդ ժամանակահատվածում որոշ չափով «ազատական» էր: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզվելու հետևանքով շատ գործարաններ փակվեցին, և բնակչությունը ստիպված էր եկամտի նոր

աղբյուրներ փնտրել՝ կենսամակարդակի անկումը կասեցնելու համար: Մինչև 1994 թ. ստվերային տնտեսության բացասական ազդեցությունը տնտեսական բարեփոխումների գործընթացի վրա սահմանափակ է եղել՝ մեծ մասամբ նաև սեփական արտաբժույթի բացակայության պատճառով:

1995-2000 թթ. տնտեսության և հասարակության բարեփոխումների գործընթացում աստիճանաբար սկսեցին գերիշխել ստվերային տնտեսության ապակայունացնող գործոնները: 1995 թ. սկսած՝ մակրոտնտեսական կայունացման և տնտեսական բարեփոխումների զգալի հաջողությունները զուգորդվեցին տնտեսության ստվերային հատվածի ընդարձակմամբ, որը փաստորեն Հայաստանի կառավարությանը հնարավորություն չընձեռեց՝ լիարժեք և արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնելու ու դրական արդյունքներ ստանալու: Ներքաղաքական լարված պայմաններում ստվերային տնտեսության ընդարձակվելը դրսևորվում էր հարկային մուտքերի նվազմամբ և բյուջետային պակասուրդի մեծացմամբ, որոնք գազաթնակետին հասան 1996-1997 թթ.: Բայց և կոշտ հարկային վարչարարությամբ աստիճանաբար սկսեցին աճել պետական բյուջեի հարկային եկամուտները և նվազել ստվերային շրջանառության ծավալները:

2000-ական թվականներից սկսած՝ տեղի ունեցավ ինչպես տնտեսության, այնպես էլ ստվերային շրջանառության ծավալների աճ, ընդ որում՝ վերջինիս աճը հիմնականում պայմանավորված էր հենց ընդհանուր տնտեսական վիճակի բարելավմամբ և աճով մինչև 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Հայտնի պատճառներով և գործոնների առկայությամբ այն մեծապես ազդեց Հայաստանի տնտեսության վրա, որի հետևանքով էլ ստվերային տնտեսության ծավալներն ավելի աճեցին՝ հարկային բեռի ծանրանալուն զուգահեռ: Ըստ էության, ՀՀ տնտեսական աճի դինամիկան վկայում է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները դեռևս ամբողջությամբ հաղթահարված չեն, և Հայաստանը տնտեսության կայունացման բարդա-

գույն խնդիրը լուծման փուլում է:

Այդուհանդերձ, այսօր Հայաստանի տնտեսության մի ստվար հատված դեռևս դուրս է պետական մարմինների վերահսկողության դաշտից՝ լրջորեն խոչընդոտելով տնտեսական բարեփոխումներ իրականացնելը: Հայաստանի սովետային տնտեսության ծավալներն ընդարձակվելու և տնտեսության պաշտոնական հատվածը զարգացնելու ներկա քաղաքականությունը մի քանի տարի հետո արդեն կարող է հանգեցնել նրան, որ Հայաստանը հայտնվի ծանր վիճակում: Այդ իսկ պատճառով կառավարության համար այսօր խիստ առաջնային խնդիր է լայնածավալ հակասովետային միջոցառումներ իրականացնելը, որը կմեղմի սովետային տնտեսության՝ ապագայում սպասվող առավել կործանարար հետևանքները: Հասկանալի է, որ տնտեսության սովետային հատվածն ամբողջապես վերացնելը, այդ երևույթի առանձնահատկություններից ելնելով, գրեթե անհնար է, սակայն Հայաստանի կառավարությունը պետք է ձգտի համապատասխան ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխություններով կրճատել սովետային տնտեսության ծավալները:

Հայաստանում, ինչպես նաև տարածաշրջանի այլ երկրներում սովետային գործունեության առանձնահատուկ տեսակ է, այսպես կոչված, *փողի լվացումը*, որը սկզբնավորվել ԱՄՆ-ում դեռևս 20-րդ դարի սկզբում: Փողի լվացումը բազմաբնույթ և բարդ գործընթաց է, որը ներառում է երեք հիմնական քայլեր.

- կանխիկ փողը ֆիզիկապես «տեղավորելը» (թաքցնելը).
- բազմաթիվ բարդ իրավաբանական և տնտեսական գործարքներով կուտակված գումարների անօրինականության հետքը վերացնելը.
- անօրինական ճանապարհով ստեղծված գումարների աղբյուրների վերաբերյալ օրինական բացատրություն ստեղծելը (ձևավորելը):

Ինչ վերաբերում է տնտեսության միկրոմակարդակում սովետային շրջանառությանը, ապա որպես այդպիսիք կարելի է առանձնացնել ապրանքների և ծառայությունների գների տարբերությունից, ինչպես նաև վարձու աշխատողների՝ լրա-

ցուցիչ եկամուտ ստանալը (օրինակ՝ մատուցողներին, տաքսու վարորդներին, վարսավիճիկներին տրվող հավելավճարները և այլն), ձեռնարկությունների՝ պաշտոնական փաստաթղթերում գրանցած և իրականում վճարած աշխատավարձերի տարբերության սահմանելը և այլն: Ստվերային գործունեության վերջին տեսակը շատ տարածված է հատկապես մեր երկրում, որտեղ պաշտոնական աշխատավարձերը ցածր են սահմանվում, սակայն իրականում վճարվում են բարձր դրույքաչափերով՝ նպատակ ունենալով հնարավորինս նվազեցնել եկամտային հարկի գումարները, որը ձեռնտու է ինչպես գործատուին, այնպես էլ վարձու աշխատողին:

Ստվերային ոլորտում գոյություն ունեցող բազմապիսի տնտեսական գործունեություններից պետք է առանձնացնել համապատասխան վիճակագրական հաշվառման մեխանիզմների բացակայության կամ այդ մեխանիզմները կիրառելու անհնարինության պատճառով չհաշվառված կամ չհայտարարագրված տնտեսական գործունեության տեսակները: Գոյություն ունեն գյուղատնտեսական կամ ֆերմերային տարբեր գործունեության տեսակներ (օրինակ՝ տարբեր տնային տնտեսությունների միջև բնամթերք փոխանակելը), որոնք անհնար է հաշվառել, կամ դրանք մասնակի են հաշվառվում պաշտոնական վիճակագրությունում՝ հաշվառման համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով: Պետք է նշել, որ թեև դժվար, սակայն հնարավոր է տնտեսական գործունեության այդ տեսակները հաշվառելը տարբեր համակարգային մեթոդներ կիրառելու դեպքում:

Ստվերային գործունեության յուրահատուկ տեսակ է դրամանենգությունը, այսինքն՝ դրամաշրջանառության մեջ կեղծ թղթադրամների շրջանառումը: Այս խնդիրն առաջացել է շատ վաղուց՝ դեռևս առաջին մետաղադրամների և թղթադրամների շրջանառության ժամանակ: Այսպես, օրինակ, դեռևս վաղ անցյալում Ներոն կայսրը պաշտոնապես թույլատրել էր մետաղյա դրամներ կեղծելը (մասնավորապես՝ արծաթյա դրամանիշերում արծաթի պարունակությունը հասցվել էր 5-10%-ի), դա բացասու-

րելով «պետական հատուկ շահի գիտակցությամբ»: Նախկինում կեղծ փողի «արտադրությունը» խիստ հետապնդելի արարք չէր համարվում, քանի որ դիտվում էր անհատի դեմ կատարված մանր հանցագործություն: Այսօր դրամանենգությունը ոչ թե անհատի, այլ պետության դեմ կատարված հանցագործություն է, որը վտանգում է ողջ վճարային համակարգի արդյունավետ գործունեությունը: Պետք է նշել, որ դրամանիշ կեղծողները շատ հեշտությամբ կեղծում են նաև արժեթղթեր, պաշտոնական փաստաթղթեր և այլն, և այս իրողությունը նույնպես խիստ մտահոգում է պատկան մարմիններին: Սովերային տնտեսության գործիչները ավելացնում են իրենց եկամուտները՝ ոչ միայն եկամուտների թերհայտարարագրելով, այլև տարբեր ճանապարհներով տնտեսական ծախքերն արհեստականորեն ուռճացնելով ու հարկվող եկամուտը նվազեցնելով: Նման գործունեության տեսակները բազմազան են և շատ հաճախ դրանք իրականացվում են իրավական տեսանկյունից թույլատրելի հնարավոր սահմաններում:

Տնտեսվարող սուբյեկտի և իրականացվող գործունեության առանձնահատկություններից կախված՝ կիրառվում են տարբեր մեխանիզմներ, մասնավորապես՝

1. փաստաթղթավորված առևտուրը, ինչպես նաև վաճառքից ստացվող ողջ հասույթը չգրանցելը, որն իրական շրջանառությունը և եկամուտները չհայտարարագրելու ամենատարածված ձևն է:

2. Հաճախ տնտեսվարող սուբյեկտները տնօրինած արտադրանքը պաշտոնական փաստաթղթերում ներկայացնում են որպես նոր գնված ապրանք կամ վճարած իրական գներից շատ են գրանցում տարբեր նյութերի և արտադրական այլ գործուների արժեքը:

3. Անձնական օգտագործման կամ սպառման համար նախատեսված ապրանքների և ծառայությունների արժեքը ձեռնարկության ծախքերում ընդգրկելը, այդ թվում՝ ձեռնարկության միջոցների հաշվին անձնական օգտագործման մեքենաներ գնելը,

անձնական ճանապարհորդությունները ֆինանսավորելը (գործնական և ուսուցողական այցելություններով քողարկված) և այլն:

4. Ներկայացուցչական և տրանսակցիոն ծախսային հողվածներով ձեռնարկության միջոցները անձնական «վարձատրության» նպատակով օգտագործելը:

5. Ձեռնարկության աշխատակիցներին էժանացված զնեքով ապրանքների և ծառայությունների վաճառք ձևակերպելը:

6. Չգրանցված աշխատակիցներ պահելը:

7. Ձեռնարկությունների միջև բարտերային գործարքները:

8. Ձեռնարկության աշխատակիցներին տարբեր արտոնություններ և լրավճարներ տրամադրելը (օրինակ՝ տրանսպորտային ծախսերի համար)՝ որպես ցածր աշխատավարձի «փոխհատուցում» և այլն:

## **2.2. Տնտեսության սովերայնության առաջնային ոլորտներն ու բնագավառները**

Սովերային շրջանառության ոլորտները հնարավորինս ճիշտ ուրվագծելն առաջնահերթ նշանակություն ունի երկրի մակրոտնտեսական իրավիճակը կայունացնելու, պետական եկամուտները գանձելու մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի վրա դրանց ազդեցությունը չեզոքացնելու առումներով:

Զարգացող երկրներում սովերային տնտեսական շրջանառության առանձնահատուկ դրսևորումներից է ստացված ֆինանսական միջոցները անօրինական ճանապարհով երկրից դուրս բերելը (փողերի լվացում): Խնդիրն արժանի է ուշադրության, եթե հաշվի առնենք, որ դուրս բերվող ֆինանսական միջոցների մեծ մասը ստեղծված է տնտեսության հենց սովերային հատվածում, որոնք տարբեր օֆշորային գոտիներից վերադառնում են Հայաստան՝ արդեն օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով և հարկային ու մաքսային տարատեսակ արտոնություններ ստանում:

Բացի այդ՝ ժամանակակից շուկայական հարաբերություններում ավելի ու ավելի են արմատավորվում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնես գործունեության տեսակները (էլեկտրոնային առևտուր, առցանց խանութներ և խաղատներ, առցանց տաքսի ծառայություններ և այլն), բրոնք, համացանցի տիրություն գրանցվելու և գործարքներ իրականացնելու հանգամանքով պայմանավորված, ըստ էության, դուրս են ոչ միայն ՀՀ հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների, այլև նույնիսկ տվյալ սուբյեկտների պետական գրանցում իրականացնող պետական մարմինների վերահսկողությունից: Նշված ոլորտները բնականաբար ստվերային տնտեսությունը բացահայտելու, գնահատելու և վերացնելու տեսանկյունից ամենաառաջնայիններն են: Դրանց շրջանառությունն աճում է բավականին բարձր տեմպերով՝ ընդգրկելով նորանոր բնագավառներ և գործունեության տեսակներ, մինչդեռ դրանք վերահսկելի դարձնելու առումով դեռևս առկա են ոչ միայն օրենսդրաիրավական, այլև տեխնիկական մի շարք խնդիրներ:

Մեր կատարած հետազոտություններով հարկ է ներկայացնել Հայաստանի տնտեսության այն ոլորտներն ու հիմնական գործունեության տեսակները, որոնք առավել ստվերային են:

1. Ապրանքների և ծառայությունների առևտրի ոլորտում.

ա) ապրանքներ անօրինական ներմուծելը և արտահանելը.

բ) տեղական և արտասահմանյան այն ապրանքների վաճառքը, որոնք պահանջում են պետական գրանցում կամ արտոնագրում, կամ գրանցվել են իրական արժեքից, ներկայացվող չափորոշիչներից բավական մեծ տարբերություններով (օրինակ՝ համապատասխան մարմիններում դեղորայք գրանցելը).

գ) ապրանքների և ծառայությունների վաճառքը քաղաքացիների կողմից՝ առանց այդ ապրանքների ծագման մասին համապատասխան փաստաթղթերի, ինչպես նաև առանց պետական պարտադիր որևէ վճարում իրականացնելու.

դ) ապրանքների և ծառայությունների համար կրկնակի գների առկայությունը (մեկը՝ փաստաթղթերի համար, մյուսը՝ իրական կանխիկ վաճառքի համար)։

ե) արգելված տեղերում առևտուր կազմակերպելը։

զ) գները բարձրացնելու պատրվակով ապրանքներն արհեստականորեն պահեստավորելը՝ դրանք սև շուկայում կամ առավել բարձր գներով վաճառելու նպատակով (գործունեության այս տեսակը առավել բնորոշ էր Հայաստանի անկախության առաջին տարիներին)։

է) ձեռնարկության աշխատակիցներին աշխատավարձի փոխարեն ապրանքներ և ծառայություններ տրամադրելը՝ հիմնականում առանց համապատասխան հարկեր վճարելու։

ը) ցածրորակ, պետական և միջազգային չափորոշիչներին չհամապատասխանող ու առանց երաշխիքների ապրանքներ և ծառայություններ վաճառելը։

թ) անվճար ծառայություններ տրամադրելը։

ժ) բարտերային առևտուրը։

ի) ողջ տարվա ընթացքում տարատեսակ գեղչեր և ակցիաներ իրականացնելը և այլն։

2. Դրամական փոխանցումների ոլորտում.

ա) առկա դրամական օրինական փոխանցումների համակարգին զուգահեռ կանխիկ փողի անօրինական շուկա ստեղծելը, որով իրականացվում են ստվերային գործունեությունից ստացվող հասույթների վճարումները (ստվերային ոլորտի շատ ներկայացուցիչներ հաճախ փոխադարձ վճարումներն իրականացնում են՝ տարբեր ապրանքներ և ծառայություններ փոխանակելով, փոխադարձ ներմամբ և այլ ճանապարհներով՝ ոչ միային բանկային համակարգը շրջանցելով, այլև կանխիկ դրամ չօգտագործելով)։

բ) փոխհատուցումներով, զիջումներով փոխադարձ վճարային պարտավորությունները վերացնելը՝ առանց օրենքով նախատեսված համապատասխան գրանցումների։

զ) որպես վճարման միջոց գրեթե բացառապես միայն կանխիկ դրամ կիրառելը և բանկային համակարգը շրջանցելը.

դ) կանխիկ դրամով վճարումներ իրականացնելն առանց տվյալ գործարքները գրանցելու և հարկեր վճարելու:

3. Դրամավարկային ոլորտում.

ա) արտարժույթ ներմուծելը կամ արտահանելը՝ առանց համապատասխան հայտարարագիր ներկայացնելու.

բ) արտարժույթի սև շուկա ձևավորելը և ստվերային փոխարժեքներով արտարժույթ փոխանակելը (բնորոշ էր Հայաստանի անկախության առաջին տարիներին).

գ) վարկեր տրամադրելը «թաքցված» տոկոսադրույքով (լրացուցիչ գանձումներ՝ տարատեսակ ծառայություններով քողարկված, կաշառքներ կամ հովանավորչություն՝ վարկավորման համեմատաբար լավ պայմաններ ստանալու համար և այլն),

դ) բանկային համակարգից դուրս գտնվող մեխանիզմներով վարկեր տրամադրելը.

ե) տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերն անօրինական օգտագործելը և այլն:

4. Աշխատուժի շուկայում.

ա) գիշերային չգրանցվող աշխատանքը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես «մունլայթինգ».

բ) արտաժամյա կամ տոնական և հանգստյան օրերին օգտագործվող աշխատանքը՝ առանց օրենքով սահմանված հավելավճարների.

գ) ժամավճարով աշխատողների վարձատրությունը պահպանելով (չբարձրացնելով)՝ աշխատաժամերն ավելացնելը.

դ) այլ անօրինական աշխատանքներ (օրինակ՝ անչափահասների, հղի կանանց աշխատանքն օգտագործելը և այլն, թեև սրանք արդեն բնորոշ չեն մեր տնտեսությանը):

5. Բնօգտագործման ոլորտում.

ա) չափագրման և անհրաժեշտ այլ ցուցանիշներ կեղծելով՝ հաշվետվություններում չարտացոլվող հանքարդյունահանումը.

բ) նույն ճանապարհով թափոնների, պոչամբարների ծավալներն ուճացնելը, ինչպես նաև չկատարված տարբեր ծախսեր ներկայացնելը և հարկվող շահույթը նվազեցնելը:

6. Էլեկտրոնային հարթակներում իրականացվող գործունեության ոլորտում առանց հարկեր վճարելու.

ա) էլեկտրոնային առևտուրը.

բ) թաքնված գովազդային ծառայությունները և այլն:

7. Այլ ոլորտներում.

ա) ապօրինի շինարարությունը.

բ) բազմաբնակարան շենքերում ընդհանուր օգտագործման տարածքներն ապօրինի վերափոխելը (օրինակ՝ անհատական բնակարանի տարածքն ընդարձակելը՝ ընդհանուր օգտագործման միջանցքներն ապօրինի յուրացնելով).

գ) չգրանցված սուբյեկտների կողմից արտադրություն կամ ծառայություններ մատուցելը.

դ) աշխատավարձ վճարելն ապրանքներով և ծառայություններով.

ե) պետության կամ հասարակության միջոցներն ու ժամանակն անձնական կարիքների համար օգտագործելը.

զ) պետության տնօրինած բնապահպանական տարածքներն անօրինական օգտագործելը.

է) հասարակական կամ բարեգործական նպատակներով քողարկված դրամահավաքը կամ իրական գներից մի քանի անգամ բարձր գներով ապրանքներ իրացնելը և այլն:

Չի կարելի ասել, որ ներկայացվածը ՀՀ-ում ստվերային շրջանառության ամբողջական ցանկն է: Այս կամ այն չափի ստվերայնություն կարելի է գտնել կյանքի գրեթե բոլոր ոլորտներում և բնագավառներում: Բնականաբար ստվերային տնտեսությունը՝ բազմապիսի դրսևորումներով, քայքայիչ հետևանքներ է թողնում երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ մյուս ոլորտների վրա:

1. Հարկեր գանձելու մեխանիզմները խաթարելը և պետու-

թյան հարկային եկամուտները պակասեցնելն առաջացնում են պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման խնդիրներ: Տնտեսագետների մի ստվար հատվածի կարծիքով ստվերային տնտեսության հիմնական պատճառներից են պետության կիրառած հարկային և մաքսային բարձր տոկոսադրույքները, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտները զանձելու՝ պետության իրականացրած կոշտ քաղաքականությունը, հետևաբար, հարկային բարձր տոկոսադրույքները որոշիչ են դառնում՝ տնտեսվարող սուբյեկտների ստվերային գործունեություն իրականացնելու համար: Ջարգացող ստվերային տնտեսությունը ենթադրում է պետական եկամուտների նվազում, որն էլ մեծացնում է պետական բյուջեի պակասուրդը: Այն առավել ցայտուն է արտահայտվում թույլ ֆիսկալ (զանձարանային) դիրք ունեցող անցումային տնտեսություններում, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի տնտեսությունը: Չկարողանալով զանձել հարկային եկամուտները՝ պետությունը հաճախ թերանում է կատարել պարտավորությունները՝ սոցիալական խոշոր ցնցումների հնարավորություն ստեղծելով:

2. Մակրոտնտեսական մակարդակով տնտեսությունում ստվերային խոշոր հատվածի առկայությունը կասկածելի է դարձնում մակրոտնտեսական այնպիսի պաշտոնական ցուցանիշների ճշգրտությունը, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը, գործազրկության մակարդակը, ազգային եկամուտը, սղաճը և տնտեսական քաղաքականություն իրականացնելու այլ կարևոր ցուցանիշներ: Հետևաբար, տնտեսության ոչ ամբողջական տեղեկատվության վրա հիմնված պետության իրականացրած ցանկացած տնտեսական քաղաքականություն կարող է սխալ լինել, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ այլ հետևանքներ ունենալ:

Կարելի է առանձնացնել ստվերային տնտեսության՝ ՀՆԱ-ի վրա ազդելու հետևյալ հիմնական պատճառները.

- հասարակության տարբեր պահանջումները բավարարող ու ստվերային տնտեսությունում արտադրված ապրանք-

ների և ծառայությունների արժեքը երկրի ամբողջական արդյունքում չհաշվարկվելու պատճառով ՀՆԱ-ն թերհաշվարկվում է.

- եթե տնտեսության ստվերային հատվածն ավելի արագ է աճում, քան տնտեսության պաշտոնական հատվածը, ապա պաշտոնապես հաշվարկված ՀՆԱ աճի տեմպի ցուցանիշը չի արտահայտում տնտեսության աճի տեմպի իրական մակարդակը.
- խեղաթյուրվում է ՀՆԱ կառուցվածքը տնտեսության ոլորտների, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման առումով և այլն<sup>28</sup>:

Ըստ ազգային հաշիվների ցուցանիշների հաշվարկման միջազգային սկզբունքների՝ տնտեսության ամբողջական արդյունքը պետք է ներառի ինչպես տնտեսության պաշտոնական հատվածում, այնպես էլ ստվերային տնտեսությունում, ներառյալ՝ անօրինական և թաքցված ոլորտներում, արտադրված ապրանքները և ծառայությունները:

3. Մտվերային տնտեսությունն անհավասար տնտեսական և մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսության պաշտոնական և ոչ պաշտոնական հատվածներում գործող ձեռնարկությունների համար, մինչդեռ շուկայական տնտեսության արդյունավետ գործունեություն ապահովելու համար առաջնային պայման է տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար մրցակցությամբ տնտեսական և իրավական հավասար պայմաններ ստեղծելը:

Խնդիրն ավելի է սրվում հատկապես օտարերկրյա ներդրումներ ներգրավելու տեսանկյունից: Ցանկացած օտարերկրացի ներդնող նոր ներդրումներ կատարելուց առաջ, բացի տնտեսական և քաղաքական համապատասխան վերլուծություն և հաշվարկներ կատարելուց, ուսումնասիրում է նաև տվյալ երկրում

---

<sup>28</sup> Методологические принципы отражения в СНС теневой экономики и методические рекомендации по расчету ее показателей, Москва, 1995.

տնտեսական գործունեության համար ստեղծված միջավայրը, որտեղ տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար որոշիչ գործոնը տնտեսական հավասար պայմանների առկայությունն է: Ոչ մի լուրջ, արդյունավետ օտարերկրացի ներդնող որևէ տնտեսական գործունեություն չի իրականացնի տնտեսության մի այնպիսի ոլորտում, որտեղ ստվերային հատվածը մեծ ծավալների է հասնում, և որտեղ ինքը տնտեսապես անհավասար պայմաններում կգտնվի՝ հարկային վճարումներից խուսափելով տնտեսական ծախքերը կրճատած և մրցակցային ավելի բարենպաստ պայմաններում գտնվող ստվերային ոլորտի ձեռնարկության համեմատությամբ: Այս տեսանկյունից ստվերային տնտեսությունը դառնում է օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հիմնական խոչընդոտներից մեկը<sup>29</sup>:

4. Ստվերային տնտեսությունը խաթարում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Ստվերային ոլորտում աշխատողները չեն վճարում իրենց հարկային և սոցիալական ապահովության պարտադիր վճարումները և հայտնվում են ավելի բարենպաստ ֆինանսական իրավիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները: Ընդարձակվող ստվերային տնտեսությունը ենթադրում է աշխատուժի պահանջարկի ավելացում: Հաշվի առնելով այն, որ հարկերը չվճարելու պատճառով ստվերային ոլորտում աշխատող մարդկանց իրական տնօրինած եկամուտն ավելի մեծ է, կարելի է ենթադրել, որ ստվերային տնտեսության ընդարձակմամբ տեղի կունենա աշխատուժի որակյալ մասի հոսք տնտեսության պաշտոնական հատվածից ոչ պաշտոնականը՝ նվազեցնելով տնտեսական արդյունավե-

---

<sup>29</sup> Չ. Ղուշյան, Ստվերային տնտեսության գոյության պատճառները և գնահատման հիմնահարցերը ՀՀ-ում, Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում (Գիտական հոդվածների ժողովածու), Գիրք առաջին, Ե., 1997, էջ 35-41:

տությունը պաշտոնական հատվածում<sup>30</sup>:

5. Քանի որ սովերային գործունեությունը հաճախ անօրինական և քրեածին է լինում, սովերային տնտեսությունը շատ դեպքերում հանգեցնում է տարբեր բախումների: Անբարեխիղճ մրցակցությունն առկա է ոչ միայն տնտեսության պաշտոնական, պաշտոնական և սովերային հատվածների, այլև հենց սովերային ոլորտի ձեռնարկությունների միջև: Պետք է նշել, որ ի տարբերություն տնտեսության պաշտոնական հատվածում գործող ձեռնարկությունների, որոնք վճարելով հարկերը, միաժամանակ օգտվում են հասարակական «ապրանքներից», տնտեսության սովերային հատվածի՝ հատկապես անօրինական գործունեությամբ զբաղված ձեռնարկությունները զրկված են այդ հասարակական «ապրանքների և ծառայությունների» մեծ մասից օգտվելու հնարավորությունից: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ռստիկանության, դատարանների և իրավապահ այլ մարմինների ծառայություններից օգտվելու հնարավորություններին: Սովերային գործունեությամբ զբաղված տարբեր ձեռնարկությունների միջև վեճերը լուծելու միակ տարբերակը մնում է ուժ կիրառելը: Սովերային բիզնեսը պաշտպանելու նպատակով սովերային ոլորտի շատ ձեռնարկատերեր ստեղծում են իրենց հանցավոր խմբերը, իբրև հետևանք՝ ավելանում է հանցագործությունների քանակը և կասկածելի է դառնում հասարակության կայունությունը:

Սովերային տնտեսության մեջ հանցավոր խմբերի ներգրավվածությունն առաջացնում է նաև մենաշնորհային հիմնախնդիրներ: Ակնհայտ է, որ հանցավոր խմբերը ձգտում են առավելագույնի հասցնել իրենց վճարվող գումարները, որը հնարավոր է միայն որևէ ոլորտում մենաշնորհային դիրք ունենալու դեպքում: Օրինակ՝ որևէ տարածքում միայն մեկ ռեստորանի

<sup>30</sup> Յու.Սուվարյան, Շ.Գիրակոսյան, Աշխատանքի շուկա. միտումները և արդի հիմնահարցերը ՀՀ-ում, Շուկայական տնտեսության անցման արդի հիմնախնդիրները Հայաստանում (Գիտական հոդվածների ժողովածու), Գիրք առաջին, Ե., 1997, էջ 153-163:

գոյությունը շատ ավելի շահութաբեր է տիրոջը, քան նույն տարածքում մի քանի ռեստորանների առկայությունը: Հանցավոր խմբերն ուժային անօրինական մեթոդներով կարող են արգելել կամ սահմանափակել տվյալ տարածքում նոր ռեստորաններ բացելը՝ այդ առումով նպաստելով մենաշնորհներ զարգանալուն: Այս դրույթը համապատասխանում է այն իրավիճակին, երբ հանցավոր խումբը հենց ինքն է կառավարում այդ հաստատությունը: Եթե հանցավոր խումբը միայն վերահսկում է այդ տարածքը և ռեկետով վճարներ գանձում տարածքում գործող հաստատություններից, ապա ամեննին էլ շահագրգռված չի լինի տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի կրճատմամբ: Մյուս կողմից՝ հատկանշական է նաև, որ հանցավոր խմբերի համար առավել հեշտ է վերահսկել մեկ մենաշնորհային, քան բազմաթիվ փոքր ձեռնարկություններ:

6. Ստվերային տնտեսությունը բացասաբար է ազդում նաև տնտեսական գործունեությամբ զբաղված մարդկանց վարքագծի վրա: Այս ոլորտում աշխատող մարդիկ դադարում են տարբերակել տնտեսական գործունեության ընթացքում թույլատրելի և արգելված նորմերը. սա այնուհետև տարածվում է ողջ հասարակության վրա՝ խաթարելով հասարակական կարգը:

Ընդհանուր առմամբ, ստվերային տնտեսությունը հասարակության և տնտեսության անցումային փուլում ունի ոչ միայն բացասական, այլև դրական, կայունացնող դեր: Մասնավորապես, կարելի է նշել ստվերային տնտեսության հետևյալ կայունացնող հետևանքները:

1. Տնտեսվարող սուբյեկտների տեսանկյունից ստվերային տնտեսության գոյությունը հնարավորություն է ստեղծում ներդնելու և կիրառելու տնտեսական գործունեության ավելի արդյունավետ մեթոդներ: Հարկեր չմուծող, ստվերային գործունեությամբ զբաղվող ձեռնարկատերերը մեծացնում է ձեռնարկության շահույթը, որը տնտեսության պաշտոնական հատվածում գործող ձեռնարկությունների համեմատությամբ լավ մրցակցային առավելություն է տալիս, և որն էլ հնարավորություն է ընձե-

ռում նոր տեխնոլոգիաներով և արտադրության նոր ձևերով բարձրացնել տնտեսական արդյունավետությունը:

2. Չնայած ստվերային տնտեսության անօրինական լինելուն՝ այն ստեղծում է նոր աշխատատեղեր՝ տնտեսության կամ բնակչության կենսամակարդակի անկման պայմաններում մեղմելով սոցիալական լարվածությունը: Նոր աշխատատեղեր և եկամուտ ստեղծելու այդ գործառույթով ստվերային տնտեսությունը սոցիալական կարգավորիչ դեր է կատարում՝ որոշ չափով նվազեցնելով բնակչության տարբեր խավերի միջև առկա եկամուտների բեռացումը:

3. Ստվերային տնտեսությունը մասնավոր ֆինանսական միջոցներ կուտակելու նոր աղբյուր է. ստեղծված միջոցները կարող են օգտագործվել հասարակության տարբեր խնդիրներ լուծելու համար: Այսօր ակնհայտ է, որ Հայաստանում տարբեր քաղաքական և հասարակական գործունեություններ, ինչպես նաև մշակույթի ոլորտում բարեգործությունը ֆինանսավորելու համար օգտագործվում են նաև ստվերային տնտեսությունում ստեղծված գումարները՝ նվազեցնելով բյուջեի ծախսային մասը: Այդ առումով ստվերային տնտեսությունը քաղաքացիական հասարակություն ստեղծելու համար անհրաժեշտ միջոցների աղբյուր է՝ չնայած այն հանգամանքին, որ այդ միջոցները շատ դեպքերում ստեղծված են անօրինական գործունեությամբ:

4. Ստվերային տնտեսությունը նպաստում է նաև տնտեսական կյանքն ակտիվացնելուն և մեծացնում է տնտեսության պաշտոնական հատվածի ամբողջական պահանջարկը, քանի որ ստվերային տնտեսությունում ստեղծված եկամտի մեծ մասը, միննույն է, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Ամփոփելով ստվերային տնտեսության դրական և բացասական հետևանքները՝ պետք է նշել դրա գերակշռող ազդեցությունը տնտեսության վրա՝ հատկապես անկայուն և անարդյունավետ տնտեսական համակարգ ունեցող անցումային երկրներում:

### 2.3. Հայաստանում սովերային շրջանառության առաջանալուն և ծավալներն ընդլայնելուն նպաստող գործոնները

Սովերային տնտեսությունը՝ տարբեր դրսևորումներով և ծավալներով, աշխարհի բոլոր երկրներում գոյություն ունեցող առանձնահատուկ սոցիալ-տնտեսական երևույթ է: Տնտեսագետներին մշտապես զբաղեցրել է դրա առաջանալուն և ընդլայնվելուն նպաստող գործոնների քննությունը, քանի որ չկա մի երկիր, որի տնտեսական զարգացման ռազմավարության առաջնահերթություններից չլինի սովերային տնտեսությունը բացահայտելու և կրճատելու հիմնախնդիրը: Այն առանձնահատուկ դրսևորումներն ունի հատկապես հետխորհրդային երկրներում, նաև Հայաստանում: Հետևաբար, սովերը կրճատելու ուղղությամբ կարևորվում են դրա առաջանալու պատճառները, դրան նպաստող տնտեսական և քաղաքական գործոնները բացահայտելը, ինչպես նաև դրա ծավալները գնահատելը և այն կրճատելուն ուղղված համապատասխան վարչական և օրենսդրական միջոցառումներ ձեռնարկելը: Այս իմաստով Հայաստանում հիմնախնդիրը ոչ միայն այն բացահայտելն ու կանխարգելելն է, այլև ճիշտ գնահատելը: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի՝ սովերային է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 35%-ը, ըստ «Bloomberg Businessweek»-ի՝ 51%-ը<sup>31</sup>: Սովերային տնտեսության առկայությունը շատ դեպքերում պայմանավորված է ընդհանուր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակով, պետական կարգավորման ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայի և հովանավորչության ինստիտուտի առկայությամբ: Այսպիսով, սովերային տնտեսության առաջանալու պատճառները՝ դրսևորման առանձնահատկություններով, սկզբունքորեն տարբեր են զարգացող և զարգացած երկրներում:

Ընդհանուր առմամբ, սովերային շրջանառության առաջա-

<sup>31</sup> <https://168.am/2013/08/05/259787.html>

նալը բոլոր տնտեսություններում էլ առնչվում է անհատի, կազմակերպության գերշահույթ ստանալու ձգտմանը, որը կարող է դրսևորվել սովերի ծավալների ոչ լիարժեք հայտարարագրմամբ, չգրանցված գործունեությամբ, աշխատուժի քանակի և վարձատրության ոչ լիարժեք հաշվառմամբ և այլ ձևերով: Ուստի այն կրճատելու հաջողություններ ակնկալելու նպատակով անհրաժեշտ է սովերային տնտեսության համակարգային ուսումնասիրությունն իրականացնել ինչպես կառուցվածքային, այնպես էլ գործառության կտրվածքով: Կարելի է տնտեսության սովերային ծավալների առաջանալու և ընդլայնվելու գործոնները առանձնացնել հետևյալ չորս խմբերով:

1. Տնտեսական գործոններից տնտեսության անկայուն վիճակը, տարբեր ոչ նպատակային տնտեսական բարեփոխումները, հարկային մեծ բեռը գործունեության ծավալները, հարկերը թաքցնելու պարարտ հող են ստեղծում:

2. Իրավական գործոններից հասարակության բոլոր խավերի նկատմամբ օրենքը ոչ միանշանակ կիրառելը, դեկավար մարմիններին և անհատներին անկառավարելի լիազորություններ շնորհելը նաև առաջացնում են ամենակարողության, գերիշխանության զգացում՝ նպաստելով սովերի առավել խոր արմատներով ճյուղավորվելուն:

3. Սոցիալական գործոններից են համախառն ներքին արդյունքը ոչ համահավասար բաշխելը: Պետության առջև հասարակության անդամներն ունեն համահավասար պարտավորություններ, հետևաբար ստեղծված բարիքներից էլ պետք է օգտվեն հավասարության սկզբունքով: Սոցիալական ապահովվածության տեսանկյունից պետական եկամուտները կարող են ավելանալ՝ տնտեսության մեջ սովերը կրճատելով կամ բյուջեի առաջնահերթություններ սահմանելով և ոչ նպատակային, ուռճացված ծախսերը կրճատելով:

4. Քաղաքական գործոններից են երկրի քաղաքական վիճակը, համապատասխան պատկան մարմինների հովանավոր-

չությունը: Որքան երկիրը քաղաքականապես անկայուն է, այնքան անկառավարելի են քաղաքական լիազորությունները<sup>32</sup>:

Վերը թվարկած գործոնները սերտորեն փոխկապակցված են, և մեկի գոյությունը պայմանավորում է մյուսների առաջանալը:

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ Հայաստանում ստվերային տնտեսությունը կրճատելը մշտապես կառավարության ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից է եղել: Տարիներ շարունակ ձեռնարկվել են ստվերը կրճատելու միջոցառումներ, բացահայտվել են բազմաթիվ օրենսդրական նորմերի խախտումներ, որոնցով համալրվել են պետական բյուջեի եկամուտները, սակայն ստվերային տնտեսությունը մշտապես ընդարձակվել է: Հայաստանում ստվերային տնտեսության առաջնապու պատճառներն ու գործոնները ներկայացվում են ստորև:

1. Խորհրդային Միության տնտեսվարման սովորությունները ժառանգելը, բարոյահոգեբանական նորմերը կերպափոխելը: Ակնհայտ է, որ ստվերային տնտեսությունը վերակառուցվելու, շուկայական հարաբերությունների անցնելու հետևանք չէ. այն տարբեր դրսևորումներով (առավել պարզ) արտահայտվել է նաև խորհրդային ժամանակաշրջանում, որն արդի ժամանակներում հիմնովին փոփոխվել է՝ ընդարձակելով ծավալները:

2. Հանրային սեփականության սեփականաշնորհման ռիսկերով ոչ նպատակային և պատշաճ գործընթաց կազմակերպելը, որի հետևանքով արդյունաբերությունը, ըստ էության, փոշիացավ:

3. Անցումային, պատերազմական տարիներին գործազրկության բարձր մակարդակը, որը հանգեցրեց եկամուտների նվազման և բնակչության կենսամակարդակի անկման:

---

<sup>32</sup> Տ. Հարությունյան, Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական պատճառները ՀՀ տնտեսվարման տարբեր համակարգերում, Ֆինանսներ և էկոնոմիկա # 11-12 (161-162) նոյեմբեր –դեկտեմբեր, 2013, N43:

4. Տնտեսության վրա պետական միջամտության/կարգավորման բնույթը: Պետական տարբեր ինստիտուտների կողմից տնտեսության ոլորտների պետական կարգավորումը բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար ապահովում է հավասար պայմաններ և կանոններ: Քանի որ շուկայական տնտեսությունը ինքնակարգավորվող համակարգ է, ուստի պետական կարգավորումը կարող է ընկալվել ոչ միանշանակաբար, իսկ լրացուցիչ շահույթ ստանալու ակնկալիքով սահմանափակումները շրջանցելը բավականին գայթակղիչ զբաղմունք է: Ստվերային տնտեսության մակարդակը ուղիղ համեմատական է պետական միջամտության և կոռուպցիայի մակարդակին: Փոքր և միջին բիզնեսը նախընտրում է ստվեր տեղափոխվել անհավասար մրցակցային պայմաններում խոշոր կազմակերպություններին դիմակայելու, որոշ դեպքերում առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Ինչ խոսք, ստվերում գործելը բնորոշ չէ միայն փոքր և միջին բիզնեսին. խոշոր արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ հանքարդյունաբերությունը, սննդի արդյունաբերությունը, նորագույն տեխնոլոգիաների և ծառայությունների ոլորտները ևս ստվերում գործելու առավել մեծ հնարավորություններ և հակվածություն ունեն: Մակայն տնտեսական գործառույթների՝ պետության անգամ ամենաազատական կարգավորումը չի կարող ապահովել ստվերային տնտեսության գրոյական մակարդակ, ավելին, հաճախ կարող է հանգեցնել հակառակին՝ ստվերի ընդարձակվելուն: Մեկ այլ մոտեցում է ստվերային տնտեսական գործունեության այն բացատրությունը, ըստ որի՝ նման գործունեությունից տնտեսական օգուտ ստանալու հավանականությունը գերազանցում է տվյալ գործունեությունը բացահայտելը և հնարավոր պատժամիջոցները: Հետևաբար տնտեսվարող սուբյեկտը նման պայմաններում միշտ պատրաստ է խախտել օրենքը:

5. Օրենսդրական դաշտի անկայունությունը՝ չկարգավորված, մշտապես փոփոխվող հարկային օրենսդրության առկայությունը, հարկային ոչ արդյունավետ վարչարարությունը հանգեցնում են անկառավարելի իրավիճակի:

6. Բանկային համակարգի նկատմամբ անվտանգությունը: Վերջին ժամանակներում բանկային համակարգը տարբեր երաշխիքներ է տրամադրում, պետությունը տարբեր սահմանափակումներ է կիրառում կանխիկ դրամական վճարումների նկատմամբ՝ նպատակ ունենալով դրամական միջոցների հոսքերն իրականացնել բանկային համակարգի արդյունավետ կիրառմամբ՝ բարձրացնելով տնտեսվարողների գործունեության հաշվետու լինելը, թափանցիկությունն ու վերահսկողությունը:

7. Պետական կառավարման համակարգի լիազորությունները ոչ արդյունավետ կիրառելը, հասարակության շահերին չծառայելը:

8. Ինչպես հարկերը կարող են նպաստել ստվերային տնտեսության առաջանալուն ու ընդլայնվելուն, այնպես էլ հարկային օրենսդրական բարեփոխումները և արդյունավետ վարչարարությունը՝ ստվերը կրճատելուն: Այսպես, մասնագետները հիմնականում համակարծիք են, որ ստվերային տնտեսության առաջանալու և ընդարձակվելու կարևորագույն գործոն է հարկային բեռը՝ փաստելով, որ ստվերային տնտեսության ծավալների և հարկային բեռի միջև գոյություն ունի ուղիղ համեմատական կապ: Հարկային բեռը տնտեսվարողների և ֆիզիկական անձանց եկամտի որոշ մասնաբաժին պետական բյուջե վճարելն է՝ հարկերով և տարբեր հարկային վճարումներով<sup>33</sup>: Կարելի է արձանագրել, որ վերջին տասնամյակում հարկային քաղաքականության լուրջ և սկզբունքային փոփոխություններ տեղի չեն ունեցել, թեև օրենսդրական բարեփոխումները հիմնականում միտվել են ստվերը կրճատելով հարկային եկամուտներն ավելացնելուն: Պատկան մարմինները պարբերաբար ներկայացրել են ստվերային տնտեսության բացահայտումների մասին հաշվետվություններ, սակայն Հայաստանում շարունակում է պահպանվել ստվերայինության բարձր մակարդակ, որը

---

<sup>33</sup> Underground economy: Definition and causes Sim Wan Jie, Huam Hon Tat, AmranRasli, Business and Management Review Vol. 1(2), April, 2011, pp. 14 – 24.

տարբեր փորձագիտական զնահատումներով տատանվում է ՀՆԱ 30-60 տոկոսի սահմաններում<sup>34</sup>:

Հարկային բեռը հարկերի՝ ինչպես երկրի ամբողջ տնտեսության, այնպես էլ առանձին տնտեսվարողների և ֆիզիկական անձանց վրա ազդեցության ցուցանիշ է: Հարկային բեռը հաշվարկվում է հարկային քաղաքականության սահմանման, հարկային բեռի համահավասար բաշխման նպատակով, որը իրականացվում է մակրո և միկրոմակարդակներով: Ըստ մակրոմակարդակի՝ հարկային բեռը (Հբ) սահմանվում է ամբողջ տնտեսության վրա հարկային քաղաքականության ազդեցությունը զնահատելու նպատակով. տնտեսական իմաստը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) այն մասնաբաժինը որոշելն է, որը վերաբաշխվել է հարկերի օգնությամբ, այսինքն՝ ՀՆԱ այն մասը, որը բաշխելով ներառվում է բյուջետային եկամուտների մեջ, ապա վերաբաշխվում տնտեսության այս կամ այն ճյուղերի ու ոլորտների միջև: Այսպես, երկրի տնտեսության վրա ծանրացած հարկային բեռը պետական բյուջե մուտքագրված բոլոր հարկերի և համախառն ներքին արդյունքի հարաբերությունն է՝

$$Հբ = \frac{\text{Հարկեր}}{\text{ՀՆԱ}}$$

Պարզաբանման համար նշենք՝ ըստ Հայաստանի ազգային վիճակագրական տվյալների՝ 2016 թ. հունվար-դեկտեմբերի ամիսներին պետական բյուջե մուտքագրված հարկերն ու տուրքերը կազմել են 1 տրիլիոն 80 մլրդ դրամ, իսկ ՀՆԱ-ն՝ 5 տրիլիոն 68 մլրդ դրամ, և այս դեպքում հարկային բեռը կազմել է՝

$$Հբ_{2016} = \frac{1.080.000}{5.068} \cdot 100 = 21,3\%$$

---

<sup>34</sup> Ազգային ժողովի օրենսդրական գործունեության մոնիթորինգ, «ՄԱՆԻՍ» տեղեկատվական – հասարակական կազմակերպություն, Երևան, 2012, էջ 13:

Այսինքն՝ փաստացի ՀՆԱ-ի նկատմամբ հարկերը կազմել են 21,3 տոկոս:

2018 թ. Հայաստանում հարկային նոր օրենսդրության կիրառմամբ տնտեսության վրա հարկային բեռի ցուցանիշը այլ պատկեր է ներկայացնելու: Պետական բյուջեի պակասուրդը կրճատելու նպատակով պետական եկամուտներն ավելացնելը՝ հարկային բեռը բարձրացնելով, ժամանակավոր արդյունք է ապահովում, երկարաժամկետ կտրվածքով նկատվում է հակառակ միտում. պետական բյուջե մուտքերը կտրուկ կրճատվում են: Ինչպես տնտեսվարողների, այնպես էլ հանրության հարկային բեռն աստիճանաբար կրճատելը երկարաժամկետ կտրվածքով ավելացնում է պետական բյուջեի մուտքերը, սակայն ինչպես արդյունավետ հարկային քաղաքականություն սահմանելու, այնպես էլ ստվերը կրճատելու տեսանկյունից կարևոր խնդիր է հարկային բեռի օպտիմալ մակարդակի՝ ամեն մի հարկատեսակի համար արդյունավետ տոկոսադրույք սահմանելը: Այնուամենայնիվ, տարբեր տնտեսությունների համար չի կարող սահմանվել միասնական արդյունավետ հարկային բեռ: Օպտիմալ հարկեր գանձելու ուսումնասիրություններն ամերիկացի Արթուր Լաֆֆերինն են, նրա անունով կոչված կորը արտացոլում է բյուջեի հարկային մուտքերի կախվածությունը հարկային ճնշման մակարդակից: Դեռևս նախորդ դարում ԱՄՆ տնտեսության համար օպտիմալ հարկային բեռի մեծությունը սահմանվել էր 37.5%: Մակայն ներկայումս տարբեր զարգացած երկրներում մակրոմակարդակի առումով հարկային բեռի մեծությունը տատանվում է 22-54% սահմաններում<sup>35</sup>:

Ըստ միկրոմակարդակի՝ հարկային բեռը սահմանվում է առանձին տնտեսվարողների, անհատների վրա հարկային քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար: Հանրության վրա հարկային բեռի ազդեցությունը միջազգայնորեն ևս սահմանվում է ըստ մակրո և միկրոմակարդակների՝ ան-

---

<sup>35</sup> Барулин С.В., Налоговое бремя: содержание и управление, Налоговый менеджмент 2010, <http://be5.biz/ekonomika/n004/6.html>.

հատի և ամբողջ հանրության վրա հարկային քաղաքականության ազդեցությունը որոշելու նպատակով<sup>36</sup>: Հանրության վրա հարկային բեռի մակարդակը կարելի է ներկայացնել բնակչության մեկ շնչի հաշվարկով վճարված բոլոր հարկերի (Հ)՝ երկրի բնակչության մեկ շնչի միջին եկամուտների (Եկ) հարաբերակցությամբ՝

$$ՀԲ=(Հ/Բն.թ) / (ԵԿ/Բն.թ),$$

ըստ որի՝

Հ-ն՝ բնակչության կողմից վճարվող բոլոր հարկերն են,

Բն.թ-ն՝ բնակչության թվաքանակը,

ԵԿ-ն՝ բնակչության տարեկան համախառն եկամուտը:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած տվյալների՝ 2016 թ. պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 1 մլրդ 80 մլն դրամ, 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 2.986 մլն մարդ, իսկ տարվա կտրվածքով բնակչության մեկ շնչին բաժին ընկնող միջին տարեկան եկամուտը՝ 716,4 հազ. դրամ (ամիսը՝ 59,7 հազ. դրամ)<sup>37</sup>:

$$ՀԲ^{2016} = (1.080.000./2.986)*100/(716.4)=50,5 \%:$$

2016 թ. հանրության հարկային բեռը կազմել է 50,5 տոկոս: Բանաձևից ակնհայտ է՝ որքան մեծ է բնակչության վճարունակությունը, այնքան փոքր է հարկային բեռը: Որքան մեծ է բնակչության մեկ շնչի հաշվարկով հարկի միջին գումարը, այնքան մեծ է հարկային բեռը: Հայաստանում բնակչության եկամուտները բաղկացած են աշխատավարձից, կենսաթոշակներից և նպաստներից, ավանդներից, ինքնազբաղվածությունից և արտերկրներից ստացվող տրանսֆերտներից: Այն դեպքում երբ նոր ընդունված հարկային օրենսդրությամբ տեղի է ունեցել հարկատեսակների տոկոսադրույքների, հարկման շեմերի

<sup>36</sup> Налоговое бремя и экономический рост. Пути снижения налогового бремени. <http://www.listfinances.ru/lifias-638-1.html>.

<sup>37</sup> <http://hetq.am/arm/news/84192/>.

փոփոխությունն ի վնաս տնտեսվարողի և ֆիզիկական անձի, երբ նկատվում է բնակչության եկամուտների անկում, և ընթացիկ տարում չի նախատեսվում բարձրացնել կենսաթոշակները և աշխատավարձը, տրանսֆերտները տարեցտարի զգալիորեն կրճատվում են (տե՛ս Աղյուսակ 8-ը), հետևաբար կնկատվի հարկային բեռի զգալի ավելացում:

*Աղյուսակ 8*

**ՀՀ բանկերով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք արված ամենամյա փոխանցումներ ՀՀ դրամով<sup>38</sup>**

| <i>Տարիներ</i>            | <i>2013</i> | <i>2014</i> | <i>2015</i> | <i>2016</i> | <i>2017</i> |
|---------------------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| Ներհոսք<br>(մլրդ ՀՀ դրամ) | 1.8         | 2.1         | 1.63        | 1.533       | 1.757       |

Հարկային մեծ բեռը նպաստում է, որ հարկատուն խուսափի օրինական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուց կամ նախընտրի ավելի շատ աշխատել տնային տնտեսության մեջ: Իսկ ստվերային տնտեսությունը ընդլայնվելու դեպքում կառաջանա լրացուցիչ հարկային բեռ, քանի որ հարկատուի ստանալիք եկամուտները (շահաբաժին, աշխատավարձին հավասարեցված վճարումներ) չեն հաշվառվում (ոչ ֆորմալ զբաղվածություն)՝ նվազեցնելով պետական բյուջե փոխանցվող եկամուտները: Հետևաբար հարկային բեռը նվազեցնելը բնակչության վճարունակությունն ավելացնելու հաշվին նույնպես կհանգեցնի եկամուտների աճի<sup>39</sup>:

Շուկայական տնտեսության մեջ հարկային բեռի բաշխումը կախված է պահանջարկի և առաջարկի առաձգականության գործակիցներից: Այսպես, եթե պահանջարկը առաձգական է, գները քիչ են ավելանում, և հետևաբար համապատասխան հարկային բեռի զգալի մասը կրում է արտադրողը: Իսկ ոչ առաձգական պահանջարկի դեպքում գները զգալիորեն ավե-

<sup>38</sup> [www.cba.am](http://www.cba.am)

<sup>39</sup> [https://hy.wikipedia.org/wiki/Հարկի\\_Էությունը](https://hy.wikipedia.org/wiki/Հարկի_Էությունը) և ՀՀ հարկային համակարգը

լանում են, ուստի հարկային բեռը կրում են գնորդները: Առաջարկի առաձգականության և ոչ առաձգականության դեպքում պատկերն այլ է: Առաձգական առաջարկի ժամանակ գներն էականորեն աճում են, և հարկային բեռը վճարում են հիմնականում գնորդները: Իսկ ոչ առաձգական առաջարկի դեպքում գները չեն ավելանում, և հարկային բեռի ծանրությունը կրում է արտադրողը կամ վաճառողը<sup>40</sup>:

Հարկային բեռի ծանրությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$Հբ = \frac{\text{Հարկեր}}{\text{Օախսեր}} * 100:$$

Բանաձևը ցույց է տալիս, թե կազմակերպության տնօրինած շահույթի ո՞ր մասն են կազմում հարկերը<sup>41</sup>:

Չարգացած երկրներում հարկային համակարգի ձևավորման փորձը ցույց է տալիս, որ հարկատուների արդյունավետ տնտեսվարման համար հարկային բեռի առավելագույն սահմանը չպետք է գերազանցի նրանց եկամուտների 30%, այլապես կկրճատվեն տնտեսումներն ու ներդրումները<sup>42</sup>: Բացի այդ՝ միկրո և մակրոմակարդակների նկատմամբ հարկային բեռի մեծությունը պայմանավորված է երկրի տնտեսության վիճակով, ծանրացած տնտեսական խնդիրներով, ինչպես նաև յուրաքանչյուր բնակչի հանդեպ պետության պարտավորվածությամբ պետական ֆինանսավորմամբ բնակչությանը մատուցվող ծառայությունների (կրթություն, մշակույթ, առողջապահություն, սպորտ, անվտանգություն և այլն) ծավալներով:

<sup>40</sup> Supply and demand application and extensions: the impact of a tax, Eco 2023

Principles of microeconomics,

[https://campus.fsu.edu/bbcswebdav/users/jcalhoun/Courses/Micro/Micro\\_Study\\_Guides\\_13e](https://campus.fsu.edu/bbcswebdav/users/jcalhoun/Courses/Micro/Micro_Study_Guides_13e).

<sup>41</sup> Налоговое бремя: понятие и методы оценки его уровня,

[http://yaneuch.ru/cat\\_82/nalogovoe-bremya-ponyatie-i-metody/217217.2100782.page1.html](http://yaneuch.ru/cat_82/nalogovoe-bremya-ponyatie-i-metody/217217.2100782.page1.html).

<sup>42</sup> [https://studopedia.ru/1\\_107113\\_nalogovoe-bremya-pokazateli-harakterizuyushchie-nalogovoe-bremya.html](https://studopedia.ru/1_107113_nalogovoe-bremya-pokazateli-harakterizuyushchie-nalogovoe-bremya.html).

Ստվերային տնտեսությունը գնահատելու և ծավալները կրճատելու գործառույթները հիմնականում իրականացնում են հարկային և մաքսային ծառայությունները՝ ընդունելով և կիրառելով համապատասխան օրենսդրական նորմեր, վարչարարական վերահսկողությամբ:

Ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցությունը գնահատելու տարբեր մեխանիզմներ են կիրառվում. կարելի է մատնանշել տնտեսական մոդելների ձևավորմամբ չգարգացած թակարդների ժամանակակից տեսությունը (Modern theory of underdevelopment traps)<sup>43</sup>: Ներկայացվող մոդելում տնտեսվարող սուբյեկտների քաղաքական դիրքորոշումը պայմանավորված է նրանց տնտեսական շահերով: Այսպես, նրանց հակազդեցությունը ցանկացած փոփոխության, նորարարության պայմանավորված է գերշահույթ ստանալու ձգտմամբ հարկեր. վճարելու կամ հարկերից խուսափելու հնարավորությամբ է պայմանավորված բարեփոխումներին կողմ կամ դեմ լինելը: Եթե բավարար թվով տնտեսվարող սուբյեկտներ բարեփոխումներ չպահանջեն, ապա այդ բարեփոխումների հավանականությունը կփոքրանա, որն իր հերթին կնվազեցնի մյուս տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունները կատարելու շարժառիթները և կազդի նրանց քաղաքական դիրքորոշման վրա: Հարկեր վճարող առանձին տնտեսվարող սուբյեկտի եկամուտը կարող է աճել՝ կախված հարկ վճարող այլ տնտեսվարող սուբյեկտների քանակից: Այսինքն՝ եթե հարկատուների գերակշիռ մասը վճարում է հարկերը, ապա ամեն մի հարկատուի շահավետ է կատարել հարկային պարտավորությունները, իսկ եթե մեծամասնությունը փորձում է խուսափել հարկերից, ապա հարկատուին շահավետ է խուսափել հարկային պարտավորություններից:

---

<sup>43</sup> <https://acoya.org>

## **ԳԼՈՒԽ 3. ՀՀ ստվերային շրջանառությունը կրճատելու ռազմավարությունը և ուղիները**

### **3.1. Ստվերային շրջանառության ձևերը և վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղիները**

Դեռևս 20-րդ դարի կեսերին ամերիկացի տնտեսագետ Գուտմանը նշել է, որ ԱՄՆ-ում գոյություն ունի տնտեսության չվերահսկվող մի հատված, որի ծավալներն աճելու միտում ունեն<sup>44</sup>, իսկ ավելի ուշ մեկ այլ ամերիկացի տնտեսագետ Էդգար Ֆայզը հավելել է, որ չվերահսկվող տնտեսության ծավալները կազմել են պաշտոնական ՀՆԱ 1/3-ը<sup>45</sup>:

Ըստ էության, ստվերային շրջանառության գլխավոր բնութագրական գծերից մեկը պետության չվերահսկած գործունեությունն է, երբ տնտեսական գործակալների գործունեությունը թաքցվում է պետական կառավարման և վերահսկողական մարմիններից կամ ընդհանրապես արգելվում է օրենքով<sup>46</sup>:

Ընդհանուր առմամբ, կարելի է տարբերակել ստվերային շրջանառության երկու հիմնական ոլորտ.

- ստվերային շրջանառություն, որը գործում է օրինական հատվածում, սակայն վերահսկողությունից և հաշվառումից՝ դուրս.

- ստվերային շրջանառություն, որն օրենքով արգելված է և գործում է անօրինական հատվածում:

Հետևաբար կարելի է տարբերակել տնտեսության երկու հատված.

- արտադրողական, որը ունի իրական ներդրում ՀՆԱ աճի մեջ.

---

<sup>44</sup> Hart K., Informal Urban Income Opportunities and Urban Employment in Ghana, *Journal of Modern African Studies*, 1973, Vol. 11, #1, pp. 61-90.

<sup>45</sup> Gutmann P., The Subterranean Economy, *Financial Analysis Journal*, 1977, Vol. 33.

<sup>46</sup> Handbook on the Shadow Economy: Friedrich Schneider, Austria, 2011, P3.

- վերաբաշխող, որը չի առնչվում տնտեսական բարիքներ ստեղծելուն (կոռուպցիա և այլն):

Մասնագիտական գրականության մեջ սովերային տնտեսությունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից: Օրինակ՝ Էդգար Ֆայզը սովերային տնտեսությունում իրականացվող գործունեության տեսակները ներկայացնում է 4 խմբերով<sup>47</sup>.

1. անօրինական կամ հակաօրինական, երբ ստեղծված եկամուտը տնտեսության անօրինական գործունեության հետևանք է.

2. չհայտարարագրված, երբ շրջանցվում են հարկաբյուջետային կանոնները, կամ խուսափում են այդ կանոններով նախատեսված պահանջները կատարելուց.

3. չգրանցված, որտեղ իրականացվող գործունեությունը շրջանցում է պաշտոնական վիճակագրության սահմանած հաշվետվություններ ներկայացնելու և հայտարարագրելու համակարգը.

4. ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ)՝ ներառելով տնտեսական այն գործունեությունները, որոնք շրջանցում են կամ չեն վճարում նախատեսվող ծախսերը և միաժամանակ չեն օգտվում տարբեր ոլորտների (ինչպիսիք են՝ սեփականատիրական հարաբերությունները, առևտրային գործունեության տեսակներն արտոնագրելը, վարկավորումը, սոցիալական ապահովվածությունը և այլն) իրավական ակտերով նախատեսված եկամուտներից և իրավունքներից:

Վերջինս մեր հանրապետությունում շատ տարածված է և պայմանավորված է աշխատուժի շուկայի թերզարգացմամբ, որտեղ աշխատող-գործատու հարաբերությունները հաճախ բանավոր համաձայնությամբ են, որը թույլ է տալիս բարձր

---

<sup>47</sup> Feige, Edgar L.. Working Papers, Reflections on the meaning and measurement of Unobserved Economies: What do we really know about the “Shadow Economy”?. MPR Paper 68466, University Library of Munich, Germany, 2015.

դրույքաչափերով վճարումներով հնարավորինս նվազեցնել պարտադիր վճարումները<sup>48</sup>:

Ստվերային գործունեության առանձնահատուկ տեսակ է դրամանենգությունը, որի դեմ պայքարի միջոցներն են՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ թղթադրամի պաշտպանվածության աստիճանը բարձրացնելը կամ երկրում վճարային ոչ կանխիկ միջոցները զարգացնելը (անդորրագրերի, կրեդիտային և դեբետային քարտերի համակարգերի ներդնում և լայն կիրառում), որը նվազագույնի կհասցնի կանխիկ դրամով իրականացվելիք, հատկապես տնտեսական խոշոր գործարքների թիվը և կմեղմի դրամանենգության բացասական հետևանքները:

Երկրի տնտեսության վրա ունեցած բացասական հետևանքներից կարելի է առանձնացնել հետևյալները:

- Ստվերային տնտեսությունը հանգեցնում է հարկային եկամուտների նվազման, որի հետևանքով պետությունը հարկադրաբար կարող է բարձրացնել հարկային դրույքաչափերը՝ ավելի վատթարացնելով երկրի տնտեսության վիճակը, քանի որ նվազում են պետության կատարած ներդրումների ծավալներն ու տրամադրած ծառայությունները:

- Կասկածելի է դառնում ՀՆԱ, գործազրկության մակարդակի, սղաճի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների ճշգրտությունը:

- Անհավասար մրցակցային պայքար է ստեղծվում սրտադրության և առևտրի ոլորտների միջև:

- Խաթարվում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Այսպես, քանի որ ՀՀ-ում գործատու-աշխատող փոխհարաբերությունները երբեմն բանավոր համաձայնությամբ են՝ աշխատողներին չքրանցելով, հետևաբար վերջիններս չեն վճարում հարկային ու սոցիալական ապահովության պարտադիր վճարները՝ հայտնվե-

---

<sup>48</sup> Վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ.  
[http://www.armstat.am/file/article/rep\\_ashx\\_09a\\_4.pdf](http://www.armstat.am/file/article/rep_ashx_09a_4.pdf).

լով ավելի լավ վիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները:

Չնայած ստվերային շրջանառությունը տնտեսության համար ունի մի շարք բացասական հետևանքներ, սակայն այդուհանդերձ կարելի է առանձնացնել որոշակի դրական միտումներ՝

- Հարկեր չմուծելը ձեռնարկատերերին կարող է մրցակցային առավելություններ տալ, որոնք էլ հնարավորություն են ընձեռել նոր տեխնոլոգիաների և արտադրության նոր ձևեր կազմակերպելով ավելացնել տնտեսական արդյունավետությունը:

- Ստվերային հատվածում գտնվող աշխատողները, հարկային պարտավորությունները չկատարելով, ձևավորված եկամուտներն օգտագործում են իրենց անձնական կարիքների համար, որն էլ նպաստում է նրանց կենսամակարդակը բարձրացնելուն:

- Նոր աշխատատեղեր՝ ստվերային ոլորտում:

- Ստվերային շրջանառությունը նպաստում է ամբողջական պահանջարկը մեծացնելուն, իսկ ստեղծված եկամուտը, այդուհանդերձ, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Հատկապես 1990-ական թթ. սկսած՝ ՀՀ-ում ստվերային շրջանառությունը հասել էր մեծ ծավալների, որը պայմանավորված էր՝

- հարկային դաշտի անկատարությամբ, մասնավորապես՝ բարձր հարկերով.

- օրենսդրական դաշտի անկատարությամբ.

- եկամուտների ցածր մակարդակով և բնակչության կենսամակարդակի անկմամբ.

- արտադրության ծավալների և առաջարկի կրճատմամբ.

- ստվերային գործունեության համար նախատեսված անհամեմատ մեղմ պատժամիջոցներով.

- զբաղվածության խնդիրներով, մասնավորապես՝ գործազրկության բարձր մակարդակով, աշխատուժի շուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությամբ.

- քաղաքական անկայունությամբ և կառավարության նկատմամբ անվստահությամբ:

Ըստ Ղ.Էնստի և Ֆ.Շնայդերի՝ ստվերային շրջանառության առաջանալուն և ծավալներն ընդարձակելուն նպաստող գործոնները բաժանվում են երեք հիմնական խմբի<sup>49</sup>.

- հարկերը և դրանց չափերը, հարկային և մաքսային քաղաքականությունը.

- պետական կարգավորումն ու պետության կիրառած սահմանափակումները.

- կոռուպցիան:

Ներմուծման և արտահանման ոլորտում պետության կիրառած տարբեր կարգավորումները և սահմանափակումները կարող են նպաստել ստվերային շրջանառությունն ընդլայնելուն: Արտարժույթի և ֆինանսական հոսքերի սահմանափակումներն ուղղակիորեն նպաստում են տնտեսվարող սուբյեկտների կողմից դրանք շրջանցող քայլեր կատարելուն: Օրինակ՝ մաքսային մարմիններում ներմուծվող ապրանքները մեծ արժեքով հայտարարագրելը ներմուծողին հնարավորություն է տալիս որոշակի քանակությամբ արտարժույթ ձեռք բերել պաշտոնական ցածր փոխարժեքով և ավելի թանկ վաճառել սև շուկայում: Շատ երկրներում կարող է տեղի ունենալ նաև արտահանվող ապրանքների թերհայտարարագրում, այսինքն՝ երբ արտահանողները արտահանվող ապրանքների արժեքը մաքսային հայտարարագրերում նշում են իրականից շատ ցածր գնով: Այս դեպքերում արտարժույթի օրինական շուկային զուգահեռ գործում է նաև սև շուկան. երկրի պայմաններից կախված՝ այդ երկու շուկաներում փոխարժեքները կարող են զգալիորեն տարբերվել:

Բացի տնտեսական ոլորտում կիրառվող սահմանափակումներից՝ նաև իրականացվում են տարբեր գործողություններ՝ օրենքով արգելելու այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝

---

<sup>49</sup> Enste D. and Shneider F, Increasing Shadow Economics all over the world-Fiction or Reality? Discussion Paper No. 26, December 1998 IZA, p. 3.

թմրադեղեր տարածելը, վաճառքը, մարմնավաճառությունը և այլն:

Տնտեսագետները տարակարծիք են, թե արդյոք օրենքով արգելված գործունեությամբ ստեղծված եկամուտները պետք է հաշվարկվե՞ն երկրի համախառն ներքին արդյունքի մեջ, թե՞ ոչ. ընդունված էր այդ տեսակի գործարքներից ստացվող եկամուտը չընդգրկել ազգային հաշիվներում: Ավելին, եթե անօրինական գործունեությունը բացահայտվի և հարկվի, ապա դրանց մեծ մասը կանհետանա: Տնտեսագետների մեկ այլ խումբ գտնում է, որ տնտեսության մեջ ստեղծված ցանկացած եկամուտ պետք է ընդգրկվի ազգային հաշիվներում, քանի որ անօրինական ճանապարհով ապրանքների կամ ծառայությունների վաճառքը տեղի է ունենում ազատ և փոխհամաձայնությամբ: Հաշվի առնելով այն, որ երկու կողմերն էլ գործարքներով անձնական օգուտի տեսանկյունից ավելի լավ վիճակում են հայտնվում, ապա հարց է ծագում՝ ինչու չհաշվել նաև այդ ճանապարհով ստեղծված եկամուտը՝ որպես երկրում ստեղծված ամբողջական եկամտի մի մասնաբաժին: Ավելին, անօրինական ճանապարհով ապրանքներ ու ծառայություններ վաճառողները եկամուտներ են ստանում տնտեսության տարբեր սահմանափակ ռեսուրսներից, որոնք, եթե օգտագործվեին տնտեսության մեկ այլ ոլորտում, կմեծացնեին նաև համախառն ներքին արդյունքը: Մակայն վիճակագրական մարմինները մեծ դժվարությամբ են գնահատում նման գործունեությունից ստացված եկամտի չափը, քանի որ դրանք մեծ մասամբ արգելված են: Օրինակ՝ եթե պետությունն օրինականացնի թմրադեղերի առքուվաճառքը, ապա դրա արժեքը կտրուկ կիջնի. այդ գործունեությունից եկամուտ ստացողները կսկսեն հարկվել, և նրանց շահույթը կտրուկ կնվազի:

Կոռուպցիան ուղղակիորեն նպաստում է ստվերային շրջանառության ընդարձակվելուն: Հայաստանում, ինչպես նաև անցումային տնտեսություններ ունեցող երկրներում, պետական կառավարման համակարգում աշխատող պաշտոնյանները հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակներում, երբ սկսում

են վերահսկել տնտեսության տարբեր ոլորտներ և պետության սահմանած՝ տարբեր գործառույթներ վերահսկելու լծակների իրավունքն օգտագործում են անձնական նպատակներով, ինչպես, օրինակ, պետության՝ տարբեր արտոնագրեր տալը, տնտեսությանը շահութաբեր ապրանքներ ներմուծելու և արտահանելու թույլտվություն տրամադրելը, պետական ծառայողների համար նախընտրելի ընկերություններից գնումներ կատարելը և այլն: Այս ամենը կարող է կատարվել ինչպես ուղղակիորեն կաշառք վերցնելու, այնպես էլ անուղղակի՝ շահույթ ստացող անձի կամ ընկերության միջոցով եկամուտ ստանալով<sup>50</sup>:

Պետական ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքը չարաշահելով եկամուտներ ստանալը որոշ առումով կարելի է համարել նաև պետական համակարգի ծառայողների ցածր աշխատավարձի փոխհատուցում:

Ստվերային տնտեսությունը՝ բազմապիսի դրսևորումներով, առկա է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Այն ոչ միայն խոչընդոտում է բյուջետային միջոցներն անարգել գանձելը, այլև տնտեսվարող սուբյեկտների՝ արտադրության և առևտրի ոլորտները զարգացնելը: Այդ առումով ստվերային տնտեսությունը զգալիորեն նվազեցնում է նաև տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:

---

<sup>50</sup> Բ. Թունյան, Ստվերային տնտեսության տեսական և գործնական հիմքերը, հետևանքները և կրճատման ուղիները, Երևան, 2000, էջ 34-39:

### 3.2. Ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ ՀՀ հարկային և մաքսային վարչարարությունը բարեփոխելու մոտեցումները

Ամեն մի պետություն կարող է հասարակության գերակա խնդիրները լուծել՝ միայն պետական բյուջեի եկամուտները պատշաճ գանձելով, հարկային և մաքսային օրենսդրությունը համահավասար կիրառելով և առկա ռեսուրսների արդյունավետ բաշխելով: Պետության՝ նշված գործառույթներն իրականացնելու համար ստվերային տնտեսությունը սահմանափակելու մարտահրավերները առավել ակնհայտորեն են դրսևորվում զարգացող և հետխորհրդային երկրներում:

Ընդհանրապես, անկախ տնտեսվարման եղանակից աշխարհի բոլոր երկրներում ստվերային տնտեսության ծավալները կրճատելը մշտապես ընդգրկված է պետական ռազմավարական ծրագրերում: Ստվերը և հարկեր վճարելն անբաժան են. պարզապես տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր ոլորտներում ու տարբեր հարկատուների շրջանում ստվերը տարբեր ձևերով և ծավալներով է դրսևորվում: Սա պայմանավորված է նաև որոշակի ոլորտների առանձնահատկություններով, ձևավորված ավանդույթներով, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվողական համակարգի զարգացածության աստիճանով: Ստվերը բավականին մեծ է հատկապես շինարարության, հանքարդյունաբերության, լայն սպառման ապրանքների արտադրության և մանրածախ առևտրի, տուրիզմի բնագավառներում: Այն ավելի մեծ է խոշոր հարկ վճարողների շրջանում: Բնավ չի նշանակում սակայն, որ փոքր և միջին ձեռնարկատիրության դաշտում այն բացակայում է: Ուստի հասարակության և պետության՝ ստվերային շրջանառությունը կրճատելու համատեղ միջոցառումները պետք է միտվեն հարկային քաղաքականությունը և վարչարարությունն արդիականացնելուն, անօրինական երևույթները վերացնելուն, տնտեսական սուբյեկտների համար մրցակցային համահավասար պայմաններ ապահով-

ելուն, օրենսդրական համապատասխան նորմեր ընդունելուն ու կիրարկելուն:

Ստվերային տնտեսության շրջանառությունն իրատեսորեն գնահատելը ստվերի դեմ պայքարի կարևորագույն քայլերից է: Աշխարհի բոլոր երկրներում կառավարությունները ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ մշակում և կյանքի են կոչում տարբեր ծրագրեր ու մեխանիզմներ, որոնք, սակայն, միշտ չէ, որ ակնկալվող արդյունք են ապահովում: Դրանք առավել արդյունավետ ու իրատեսական են զարգացած երկրներում: Այսպես, Շվեյցարիայում ստվերային տնտեսության բաժինը ՀՆԱ 8.6%-ն է, ԱՄՆ-ում՝ ՀՆԱ 8.8%-ը, Ավստրիայում՝ ՀՆԱ 9.8 %-ը, Լուքսեմբուրգում՝ ՀՆԱ 9.9%-ը, Մեծ Բրիտանիայում՝ ՀՆԱ 12.9 %-ը, Ֆրանսիայում՝ ՀՆԱ 15.4%-ը, Գերմանիայում՝ ՀՆԱ 16%-ը<sup>51</sup>: Տարբեր երկրներում ստվերային տնտեսության դեմ պայքարն իրականացվում է ստվեր առաջացնող և ընդլայնող գործոնների թիրախավորմամբ: Այսպես, Մեծ Բրիտանիայում շեշտադրվում է կոռուպցիայի դեմ պայքարը, դատական համակարգի դատավորների անկախությունն ապահովելը, Շվեյցարիայում և Գերմանիայում ներգաղթյալներին ոչ օրինական աշխատանքով ապահովելը՝ աշխատուժը թերհաշվառելը, տարբեր պետական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետությունը բարձրացնելը: Ընդհանուր առմամբ, ստվերային տնտեսությունը կրճատելու միջոցառումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. օրենքների և նորմատիվ ակտերի ընդունում, օրենսդրական բարեփոխումների իրականացում.
2. դատախիրավական համակարգի բարեփոխումների իրականացում.
3. քաղաքական ոլորտի առողջացում(ազատ ընտրություններ, քաղաքական հովանավորչության բացառում).

---

<sup>51</sup> С.С Задворных, Зарубежный опыт борьбы с теневой экономикой, <http://www.bseu.by>.

4. բանկային համակարգի զարգացում, տնտեսական գործունեության մեջ ընդգրկվածության ավելացում.

5. հարկային վարչարարության բարելավում, վարչարարական ներուժի ամբողջական կիրառում:

Մտվերը կրճատելու վերը թվարկված բարեփոխումները փոխկապակցված են. իրականացնում են պետական համապատասխան շահառու գերատեսչությունները, իսկ վերահսկում՝ կառավարությունը և այլ օրենսդիր մարմիններ:

Մտվերային տնտեսության ծավալները կրճատելու նպատակով օրենսդրական բարեփոխումները իրականացվում են ինչպես հարկային և մաքսային, այնպես էլ հարակից մյուս ոլորտներում, քանի որ տնտեսավարման բարենպաստ պայմաններ ապահովելը հնարավոր է՝ միայն պետական և մասնավոր հատվածում կոռուպցիոն ռիսկերը, բյուրոկրատիան նվազեցնելով, անհրաժեշտ օրենքներ և նորմատիվ ակտեր ընդունելով և տնտեսվարողի տեսանկյունից դյուրին կիրարկելով:

Հանրապետությունում հարկային օրենքները վաղուց են ընդունվել, և պարբերաբար իրականացված փոփոխությունների նպատակը կարճատև, ժամանակավոր խնդիրներ լուծելն էր, իսկ ժամանակի մարտահրավերները, միջազգային տարբեր տնտեսական միությունների անդամակցելը պահանջում են խնդիրների առավել երկարաժամկետ և արմատական լուծումներ, կայուն և կանխատեսելի հարկային միջավայր՝ նպաստելով տնտեսվարող սուբյեկտների ներդրումային մեծ ակտիվությանը: Ուստի տնտեսության զարգացման ներկա փուլում կարևորվում են հարկային օրենսդրական դաշտում իրականացվող արմատական փոփոխությունները. 2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել միասնական սկզբունքներով արդյունավետ հարկային քաղաքականության հնարավորություն ընձեռող Հարկային օրենսգիրքը: Ժամանակի առումով հատկանշական է նաև այն, որ օրենսգրքի շատ դրույթներ և փոփոխություններ ընդունելը իրականացվել է՝ հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների, մասնագիտական կառույցների, հասարակական կազմակերպու-

թյունների և այլ շահագրգիռ կողմերի մասնագիտական դիտարկումներն ու առաջարկները:

ՀՀ հարկային համակարգը գործունեության ընթացքում մշտապես կատարելագործվել է՝ ըստ արժանվույն իրականացնելով պետական եկամուտները գանձելու կարևորագույն գործառույթը: Սակայն համաշխարհային տնտեսության ներկա մարտահրավերները, տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները պարտադրում են հարկային քաղաքականության և վարչարարության արդիականացում՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցում, որը հնարավոր է միայն՝ համապատասխան օրենքներ, հարկային օրենսդրություն ընդունելով<sup>52</sup>:

Տնտեսական գործունեությունը վերահսկելու, ստվերային շրջանառությունը բացահայտելու և կրճատելու հիմնահարցը մշտապես օրենսդրական բարեփոխումների օրակարգում է: Նման օրինակ է «Դրամարկղային գործառնությունների սահմանափակման մասին» օրենքը: Կառավարությունն այդ օրենքի կիրառմամբ գործարար միջավայրում սահմանափակում է անվերահսկելի կանխիկ դրամական հոսքերը՝ գիտակցելով, որ ստվերում ընդգրկվածները ջանք չեն խնայում՝ շրջանցելու բանկային համակարգը և օրենքները: Դրամարկղային գործառնությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում սահմանված են հետևյալ սահմանափակումները:

- Ապրանքների (հիմնական միջոցների), ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքի միանվագ գործարքների դիմաց կանխիկ վճարումների առավելագույն չափը սահմանվել է 300 հազ. դրամ (բացառությամբ մանրածախ առևտրի և ծառայությունների ոլորտում ֆիզիկական անձանցից մինչև 3.0 մլն դրամի չափով միանվագ գործարքների դիմաց վճարումների):

- Մեկ ամսվա ընթացքում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների դիմաց կանխիկ վճարումների առավել-

<sup>52</sup> ՀՀ հարկային օրենսգրքի հայեցակարգ, ՀՀ ՖՆ, 2015, էջ 21:

լագույն չափը սահմանվում է 3 մլն դրամ<sup>53</sup>: Հետևելով Եվրամիության փորձին՝ Ռուսաստանում նույնպես նախատեսվում է ներմուծել կանխիկ գործառնությունների սահմանափակում՝ ըստ հետևյալ թիրախային խմբերի. իրավաբանական անձանց իրականացրած կանխիկ գործառնությունները չպետք է գերազանցեն 600 հազ. ռուսական ռուբլին, իսկ բնակչության իրականացրած կանխիկ գործառնությունները՝ 40-50 հազ. ռուսական ռուբլին, Իտալիայում՝ 3 հազ. եվրոն, Ֆրանսիայում 1 հազ. եվրոն, իսկ տուգանքները համապատասխանաբար սահմանվում են 3 հազ. և 15 հազ. եվրո<sup>54</sup>: Գործառնություններին առնչվող վճարումների էլեկտրոնային վճարումները հնարավորություն են ընձեռում մեծացնել տնտեսական գործունեության, սպառողների կանխիկ վճարումների վերահսկողությունը, նվազեցնել պասիվ սուվերային տնտեսությունն ընդլայնելու հնարավորությունները: Կանխիկ գործառնությունները սահմանափակող երկրների փորձը ցույց է տալիս, որ համապատասխան իրավական կարգավորմամբ ավելանում են բյուջեի եկամուտները՝ հանգեցնելով պետական ֆինանսական համակարգի հաշվետվողականության ու թափանցիկության: Հայաստանում դեռևս 2008 թ. մշակվել է «Կանխիկ գործառնությունների սահմանափակման» օրենքի նախագիծը, որը «Դրամարկղային գործառնությունների սահմանափակման» օրենքի լրացումն էր՝ ընդգրկելով դրամական գործառնություններ իրականացնելու ողջ դաշտը, իրավաբանական, քաղաքացիական, սահմանափակումներ սահմանելով աշխատավարձերի և եկամուտների մյուս տեսակների, այլ վճարումների, այդ թվում նաև սպառողական շուկայում կանխիկ դրամական վճարումների նկատմամբ, որը վաղուց կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Զարգացած և հետխորհրդային երկրներում կանխիկ գործառնությունների սահմանափակումն արդեն կիրառման մեծ պատմություն ունի:

---

<sup>53</sup> Դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենք, 26.12.2006, հոդված 6,12:

<sup>54</sup> <https://business-swiss.ch/2017/01/ogranichenie-nalichny-h-raschetov-evrosoyuz/>

Տարբեր երկրներում կանխիկ գործառնությունների օրենսդրական կարգավորման օրինակներ<sup>55</sup>


| Կանխիկ գործառնությունների իրավական կարգավորումներ                                       | Պետություններ  |
|---|--|
| Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների էլեկտրոնային վճարման պարտավորվածություն | Խորվաթիա, Սլովենիա, Ուրուգվայ  |
| Սոցիալական և այլ նպաստների, թոշակների էլեկտրոնային վճարման պարտավորվածություն           | Բուլղարիա, Խորվաթիա, Իտալիա, Ուրուգվայ, Դանիա, Շվեդիա,   |
| Քաղաքացիների կանխիկ գործառնությունների սահմանափակում                                    | Բուլղարիա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա   |
| Հսկիչ դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառում   | Բուլղարիա, Խորվաթիա, Լեհաստան, Սերբիա, Իտալիա, Հունգարիա, Շվեդիա                               |
| Դրամային շահումների էլեկտրոնային վճարում  | Բուլղարիա, Սլովակիա, Խորվաթիա, Լեհաստան, Հարավային Կորեա, Բրազիլիա, Պորտուգալիա, Թայվան և այլն |

Մակայն կառավարության հարկային օրենսդրական բարեփոխումները միշտ չէ, որ հարկատուները դրականորեն են ընկալում ստեղծելով սովերն ընդլայնելու նախապայմաններ: Տնտեսագետների կարծիքով սովերային տնտեսությանը դիմակայելու արդյունավետ միջոց է տնտեսվարող սուբյեկտներին տնտեսական դաշտում ազատ գործելու հնարավորություն տալը՝ բացառելով պետական տնտեսական ոլրևէ կարգավորում, սահմանափակում: Ինչ խոսք, ազատություն կարող է տրվել կամ մեղմ հարկային քաղաքականություն կիրառվել միայն բարձր հարկային մշակույթ ունեցող հասարակութան մեջ:

Հարկային վարչարարությունը հարկային մարմնի հարկային օրենքներով և այլ իրավական ակտերով իրականացվող

<sup>55</sup> Reducing the Shadow Economy through Electronic Payments, EY Poland, Economic Analysis Team, 2016, p 38.

գործողություններ են՝ ուղղված հարկային օրենսդրությունը համատարած և ճիշտ կիրառելուն, հարկային մարմնի խնդիրներն իրագործելուն: Հարկային վարչարարության շրջանակներում հարկային մարմինը իրականացնում է օրենսդրական պահանջները կատարելու հսկողություն, հարկ վճարողների սպասարկում, իրազեկում, մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, կատարելագործում է ներքին վերահսկողական մեխանիզմները: Վարչարարական գործիքակազմից առավել բարդ և բազմակողմանի մեխանիզմների կիրառում են պահանջում օրենսդրական պահանջները կատարելու հսկողությունը, խախտումների կանխարգելումն ու բացահայտումը: Երկար տարիներ հարկային և մաքսային մարմինների առաքելությունը բոլոր հնարավոր եղանակներով պետական բյուջեի եկամուտները գանձելն էր: Մակայն այժմ բյուջեի ծրագրային ցուցանիշները կատարելու հիմնական ուղին արդյունավետ հարկային վարչարարությամբ տնտեսության ստվերային շրջանառությունը շարունակաբար կրճատելն ու տնտեսության մեջ գործարարությամբ զբաղվելու հավասար մրցակցային պայմաններ ձևավորելն ու ապահովելն է: Տնտեսական համակարգը զարգացնելը պահանջում է նաև արմատական փոփոխություններ հարկային վարչարարության համակարգում. այն դարձել է առավել ընդգրկուն, հասցեական և արդյունավետ՝ շնորհիվ նորագույն տեխնոլոգիաները լայնորեն կիրառելու:



**Գծապատկեր 8. Հարկային և մաքսային վարչարարության առաջնահերթությունները**

Հարկային և մաքսային ոլորտի օրենսդրական բարեփոխումները նպատակին կծառայեն միայն արդյունավետ հարկային վարչարարության ողջ ներուժը կիրառելու դեպքում: Ինչպես հասարակությունն է հարկային ծառայողի վարվելակերպը նույնացնում ամբողջ հարկային մարմնի կիրառած քաղաքականությանը, այնպես էլ հարկային վարչարարության արդյունքներ են նույնացնում պետության կիրառած ողջ տնտեսական

քաղաքականությունը, քանի որ հարկային մարմինն ու նրա կիրառած վարչարարական մեխանիզմները հասարակության և պետության միջև միջնորդ են: Հետևաբար, հարկային վարչարարությունը պետք է լինի օրինական, օբյեկտիվ և թափանցիկ: Հարկային համակարգը շարունակաբար բարելավելու նպատակով հարկային մարմինը մշտապես հետամուտ է ոլորտը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն: Արժույթի միջազգային հիմնադրամի հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքով (TADAT) բացահայտվել են համակարգի ձեռքբերումներն ու բացթողումները՝ սահմանելով հետագա բարեփոխումների առաջնահերթությունները<sup>56</sup>:

Հարկային վարչարարությունը բարեփոխելու առաջնահերթություններն ու զարգանալու ուղղությունները պետք է ուղղվեն ընդհանուր տնտեսական ռազմավարական նպատակներն իրականացնելուն. նպատակը ոլորտի հիմնախնդիրները լուծելը, գործունեությունը խրախուսելն ու զարգացնելն է: Ստվերի դեմ պայքարի ռազմավարությունը մշակելիս հարկային մարմինը պետք է թիրախավորի ինչպես խոշոր, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ): Երկուսի ստվերի հիմքն էլ փաստաթղթաշրջանառության պակասն է, շրջանառությունները և ծավալները թերհայտարարագրելը, աշխատուժի քանակային և գումարային թերհաշվառումը: Հետևաբար, հարկային մարմինը հարկ վճարողների գործունեության վերլուծություններով, վարքագծի ուսումնասիրություններով և մի շարք պատճառներով ոչ պատշաճ վարքագիծ դրսևորող հարկատուների նկատմամբ պետք է կիրառի այլ ռազմավարություն: Այսպես՝

- Ստվերային երևույթի նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխություն. հարկային պարտավորությունները կատարելու համապարտ պատասխանատվություն են կրում բոլոր հարկատուները:

- Նպատակաուղղված աջակցություն կամավորներին:

---

<sup>56</sup> <http://www.lragir.am/index/arm/0/country/view/143269>.

- Օրենսդրական դաշտում ինքնակամ գործելու խրախուսում:

- Հարկային մարմնի՝ ստվերը հայտնաբերելու տեսանելի և վստահելի կարողություններ՝ միաժամանակ սկզբնական ժամանակաշրջանում առավել մեղմ հարկային վարչարարություն կիրառելով<sup>57</sup>:

Ստվերային տնտեսությունը կրճատելու ուղղությամբ ՀՀ հարկային և մաքսային վարչարարությունը բարելավելը միտված է եղել հարկային վարչարարության ընթացակարգերը պարզեցնելուն և օրենսդրությունը միանման կիրառելուն: Բարեփոխումները իրականացվել են հետևյալ ուղղություններով:

1. Սպասարկման որակի բարելավում:

Հարկ վճարողների սպասարկման որակը բարելավելու ուղղությամբ ՊԵԿ-ի բարեփոխումներ իրականացնելու տեսանկյունից վերջին տարիները բեկումնային են:

- Գործարկվել են հարկ վճարողների սպասարկման ժամանակակից կենտրոններ. սպասարկումն իրականացվում է «մեկ պատուհանի» սկզբունքով. ՊԵԿ-ին առնչվող բոլոր գործառույթներն անկախ տարածաշրջանային պատկանելությունից, իրականացվում են ցանկացած տարածքային հարկային գրասենյակում<sup>58</sup>:

- Գործարկվել են հարկային վարչարարության՝ հեռախոսային «թեժ գիծ» ծառայություններ:

- Նորագույն տեխնոլոգիաների լայն կիրառմամբ իրականացվել է հաշվետու լինելու ողջ համակարգի ավտոմատացում էլեկտրոնային եղանակով:

- Ներդրվել են գործունեության, հարկ վճարողների գրանցման պարզեցված ընթացակարգեր և այլն:

2. Օրենսդրական պահանջների վերահսկողության խստացում, նորմերի խախտումների կանխարգելում:

---

<sup>57</sup> Revenue Administration: Managing the Shadow Economy Barrie Russell Fiscal Affairs Department, International Monetary Fund, 2014, 4p.

<sup>58</sup> [www.taxservice.am](http://www.taxservice.am).

2017թ. պետական բյուջեի հարկային եկամուտները 2016թ. համեմատությամբ աճել են 18%-ով, 2018թ. երկու ամիսների ընթացքում՝ մոտ 12%-ով, որն ապահովվել է հիմնականում ստվերի կրճատմամբ, այլ ոչ թե կանխավճարների, գերավճարների կամ բիզնեսի ծանրաբեռնմամբ: Հարկային մարմնի գերխնդիրը հարկ վճարողների՝ իրենց կարողությունները գնահատելով հարկման օբյեկտները և հարկերը ճիշտ հաշվարկելն ու բյուջե վճարելն է, որը հնարավոր է իրականացնել վարչական տարբեր մեխանիզմներով՝ իրազեկմամբ, քննարկումներով, հանդիպումներ կազմակերպելով, ինչպես նաև պատժամիջոցներ կիրառելով: Հարկային բարձր մշակույթ զարգացնելը ՊԵԿ-ին հնարավորություն կընձեռի ուժերը կենտրոնացնել միայն ռիսկային համարվող ձեռնարկությունների վրա՝ կիրառելով վերահսկողության տարբեր գործիքակազմեր: Ստվերը կրճատելու հարկային և մաքսային բարեփոխումների շրջանակներում գործարկվել է մոնիթորինգի կենտրոնը, որտեղ էլեկտրոնային եղանակով իրականացվող ընդլայնված ու կենտրոնացված վերլուծություններով բացահայտվելու են իրավախախտումներ պարունակող գործարքները, ռիսկային հարկ վճարողները՝ տեսչական հսկողությունը փոխարինելով էլեկտրոնային հսկողությամբ: Հիմնական մոտեցումն այն է, որ հարկային հսկողության գործիքները կիրառվեն բացառապես այն հարկ վճարողների նկատմամբ, որոնք վերլուծությունների արդյունքներով հարկեր վճարելուց խուսափելու տեսանկյունից կհամարվեն ռիսկային, որն էլ կհանգեցնի վարչական ռեսուրսներն արդյունավետ ծախսելուն և ստվերում գտնվող հարկային եկամուտները բացահայտելուն: Այդպիսով, օրինապահ հարկ վճարողին մշտապես կցուցաբերվի աջակցություն, իսկ օրինախախտ հարկատուն մշտապես կզգա հարկային մարմնի ներկայությունը: Վարչարարությունը բարելավելու հիմնական ուղղություններն են.

1. վերլուծություններն ընդլայնելով՝ ռիսկերը բացահայտելը.
2. ոչ օրինապահ հարկ վճարողի նկատմամբ բազմաթիվ զգուշացումներից հետո հսկողական ողջ գործիքակազմ կիրառելը.

3. մաքսային հսկողության գործիքակազմն ընդլայնելը.

4. հարկային և մաքսային իրավախախտումների և հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունն ավելացնելը:

5. ՊԵԿ-ի գործունեության թափանցիկությունն ապահովելը՝ իրազեկմամբ, վերապատրաստումներով, հանրային քննարկումներ իրականացնելով, նպատակ ունենալով հարկային օրենսդրության դրույթների, նոր ընդունված հարկային օրենսգրքի և վարչարարության ընթացակարգերի, ինչպես նաև դրանք կիրառելու առանձնահատկություններին վերաբերող առավելագույն իրազեկվածություն ապահովել<sup>59</sup>:

Ստվերային շրջանառության ընդլայնման դեմ պայքարը առավել արդյունավետ դարձնելու նպատակով հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ գլխում (316-րդ և 317-րդ հոդվածներ) առաջարկում է նոր մոտեցում՝ հորիզոնական մոնիթորինգ՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի համար հարկ վճարողի հաշվապահական համակարգի լրիվ հասանելիություն: Հորիզոնական մոնիթորինգի համակարգը հարկային մարմնի և ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ խոշոր համարվող կազմակերպության միջև կամավորության սկզբունքով կնքված փոխհամագործակցության համաձայնագրով հարկային մարմնի կողմից անվճար հիմունքներով իրականացվող սպասարկման և ընթացիկ հսկողության համակարգ է, որն ապահովում է՝

1. կազմակերպության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը (այդ թվում՝ գործարքների փաստաթղթավորմանը) և հաշվապահական հաշվառման ծրագրին իրական ժամանակահատվածում ՀՀ կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի տեղեկատվական համակարգի լրիվ հասանելիություն.

---

<sup>59</sup> Հարկային եկամուտների վարչարարության բարելավման միջոցառումների ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին, 2016 թ. հոկտեմբերի 6-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշում:

2. կազմակերպության իրականացրած գործարքների և հաշվառման տվյալների նկատմամբ հարկային մարմնի մոնիթորինգ, կազմակերպության և հարկային մարմնի միջև իրական ժամանակահատվածում տեղեկատվության էլեկտրոնային եղանակով փոխանակում:

3. մոնիթորինգի ժամանակահատվածում կազմակերպություններում ստուգումների բացառում:

4. մոնիթորինգի և աուդիտի ընթացքում հայտնաբերված սխալներն անհետևանք ուղղելու հնարավորության ընձեռում:

5. առևտրային գաղտնիքի պահպանում:

6. մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում: Մարդկային ռեսուրսների ճիշտ պլանավորմամբ է պայմանավորված և օրենսդրության դրույթները պահպանելն ու խախտումները կանխարգելելը, և վարչարարության արդյունավետությունը: Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը բարելավելը կհանգեցնի հարկային մարմնի մասնագիտական կարողությունները և շարժառիթները բարձրացնելուն, որն էլ կնպաստի այդ մարմինների գանձած եկամուտներն ավելացնելուն:

7. նոր տեխնոլոգիաների և հաղորդակցության միջոցների զարգացում: Վերը թվարկված բոլոր բարեփոխումները իրականացվել են նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու շնորհիվ՝ ապահովելով ողջ համակարգի արդիականացում, հզորությունների ընդլայնում, կազմակերպչական կառուցվածքների օպտիմալացում:

Այսպիսով, հարկային և մաքսային համակարգի՝ ստվերը կրճատելուն ուղղված բարեփոխման միջոցառումները լինելու են շարունակական և նպատակ են հետապնդելու ընդլայնել ստվերը բացահայտելուն ուղղված վերլուծական և հսկողական աշխատանքները, հնարավորինս ավտոմատացնել հարկային մարմին և հարկատու տեղեկատվական հոսքերը:

### 3.3. Ստվերային շրջանառությունը կրճատելու ուղղությամբ օրենսդրական դաշտը բարեփոխելու միջոցառումները

Տնտեսության թաքնված հատվածը մեծ հիմնախնդիր է տնտեսության պաշտոնական հատվածում բարեխղճորեն գործող ձեռնարկությունների և մարդկանց համար՝ հատկապես ծախսերը կրճատելու և պետության պահանջած կարգերին ու հրահանգներին չհետևելով անարդար և անբարեխիղճ մրցակցային պայմաններ ստեղծելու առումով: Այն նպաստում է պետական բյուջեի եկամուտները թերի գանձելուն՝ հարկադրելով կառավարությանը բարձրացնել հարկային բեռը, որն էլ շղթայական անդրադառնում է տնտեսության պաշտոնական հատվածում օրինական գործող տնտեսավարող սուբյեկտների վրա՝ գործելու ստվերում և խուսափելու հարկային պարտավորություններից կամ դրանց մի մասից: Ստվերային տնտեսության դեմ պայքարը պետք է լինի համալիր, շարունակական և շատ ճկուն գործընթաց՝ հաշվի առնելով ժամանակակից իրողություններն ու ստվերային շրջանառության նորանոր մեթոդներ ու մեխանիզմներ ի հայտ գալու հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, մեր կարծիքով հիմնախնդրի օրենսդրախրավական տեսանկյունից գոյություն ունի ստվերային տնտեսության հիմնահարցը լուծելու չորս հիմնական տարբերակ.

1. թուլլատրել, որ օրենքները, ինչպես նախկինում, խախտվեն (անգործության տարբերակ).

2. ստիպել, որ տնտեսավարողներն իրենց գործողությունները համապատասխանեցնեն օրենքներին ու նորմատիվ ակտերի պահանջներին՝ այդ գործընթացի նկատմամբ կիրառելով վերահսկողության բոլոր հնարավոր գործիքները.

3. վերանայել օրենքներով նախատեսված խիստ պահանջները՝ բարեխիղճ սուբյեկտների պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով.

4. նպատակամետ ներագումար փոփոխել և կատարելագործել այն գործոնները և դրանց ազդեցությունը, որոնք շահադրդում են մարդկանց՝ խախտելու օրենքները:

Նշված տարբերակների համար (բացառությամբ առաջինի) կարելի է մշակել միջոցառումների ռազմավարություն՝ ակնկալելով տնտեսության ստվերային հատվածի կրճատում:

Հարկ է նշել, որ ստվերային տնտեսության դեմ պայքարի առաջնային միջոցառումների շարքում միշտ դիտվում է կառավարության հնարավորությունների շրջանակներում գտնվող ուժային միջոցները և լծակները կատարելագործելը (այն է՝ օրենքների և ներկայացվող պահանջների խստացում, ստուգումների, հետաքննությունների ավելացում և այլն): Կառավարության տեսանկյունից այն դյուրին միջոց է՝ տնտեսական անօրինական գործարքները բացահայտելու և դրանց դեմ պայքարելու. եթե շրջանցվում են օրենքները և կանոնները, ապա համապատասխան մարմինները պետք է մտածեն այդ կանոնները և դրանք իրականացնելու մեխանիզմները վերահսկելու համակարգն ավելի խստացնելու մասին:

Ակամա հարց է ծագում, թե ստվերային տնտեսության հիմնախնդիրը վատ օրենքների, թե՛ օրենքները վատ կիրառելու հետևանք է: Հարցը տարակարծությունների տեղիք է տալիս: Մեր մոտեցումը Հայաստանի դեպքում այն է, որ ստվերային տնտեսության գոյությանը և ծավալներն ընդարձակելուն նպաստում են ինչպես պետական եկամուտների և, ընդհանրապես, տնտեսական գործունեության ողջ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությունը, այնպես էլ դրանց կատարողական և վերահսկման ցածր մակարդակը:

Ինչ խոսք, ուժային մեթոդներով ստվերային տնտեսության դեմ պայքարը չի կարող լավագույնը լինել, քանի որ գոյություն ունեն անօրինականության առումով տարբեր աստիճանի ստվերային գործունեության տեսակներ, որոնց նկատմամբ միանման քաղաքականություն կիրառելը, մեր կարծիքով, արդարացի և նպատակահարմար չի կարող լինել: Օրինակ՝ չի կարելի նույն

կարգապահական մեթոդները կիրառել թմրադեղերի առևտրով զբաղվողի և շահութահարկի մասնակի վճարումներից խուսափողի նկատմամբ, ուստի հիմնավորված և արդյունավետ պայքար մղելու համար առավել արդյունավետ են տարբերակված (շատ դեպքերում՝ նույնիսկ անհատականացված) մոտեցումներն ու քաղաքականությունը:

Ստվերային տնտեսության դեմ պայքարի մյուս ուղղությունը տնտեսական ընթացիկ գործունեության մեխանիզմները բարեփոխելն է, որը սերտորեն փոխհարաբերվում է վերը նշված ուժային մեթոդներին: Այն ներառում է տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելը, որը հնարավորություն կտա բարելավելու տնտեսական ընթացիկ գործունեության միջավայրը և այդ դրդապատճառով ստվերային ոլորտում աշխատող սուբյեկտներին տեղափոխելու տնտեսության պաշտոնական հատված:

Մեր կարծիքով տնտեսության թաքնված հատվածի դեմ պայքարի հաջորդ ուղղությունը տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտը բարեփոխելն է, որը ներառում է բոլոր օրենքները, կարգերը և տնտեսական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտեր կատարելագործելը, դրանք հարաբերականորեն մեղմելն ու մարդկանց ստվերային ոլորտ անցնելու շահադրդվածությունը վերացնելը:

Ստվերային տնտեսության և կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթությունը Հայաստանի իշխանություններին հնարավորություն կընձեռի լիարժեք իրականացնելու ծառայած խնդիրները: Այս առումով վերջին տարիներն աչքի են ընկնում ոչ միայն կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի ակտիվացմամբ, որը պայմանավորված է նաև միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացրած պահանջներով, ինչպես նաև այդ կազմակերպությունների պատրաստակամությամբ՝ աջակցելու կառավարության՝ կոռուպցիայի դեմ ուղղված ցանկացած ծրագրի, այլև օրենսդրական դաշտի զգալի բարեփոխմամբ:

Մասնավորապես, ընդունվել են այնպիսի հիմնարար օրենքներ, ինչպիսիք են՝ հարկային օրենսգիրքը (որով համալիր կարգավորել են հարկային հարաբերությունները, հարկային վարչարարությունը և այլ հարցեր), «Հաշվապահական հաշվառման մասին» ու «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ նոր օրենքները, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը և այլն:

Մեծ ծավալի աշխատանքն է կատարվել օրենսդրական դաշտում առկա բացերի և չկարգավորված ոլորտների ուղղությամբ. առկա հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ օրենսդրական ակտերի կատարելագործում (համալրում) և այդ ակտերը կիրառելու պետական վերահսկողություն: Եթե առաջին խումբ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ անհրաժեշտ է մշակել նոր օրենսդրական ակտեր կամ գործող ակտերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ, ապա երկրորդ խումբ հիմնախնդիրները պետք է լուծվեն օրենքները համընդհանուր և համատարած կիրարկելով ու հատկապես կոռուպցիայի դեմ պայքարով: Հարկ է արձանագրել, որ մեր երկրում ստվերային տնտեսությունը շատ հաճախ ընկալվում է օրենքներին չհակասող, և գործունեության մի շարք տեսակներ իրականացվում են բոլորի աչքի առջև և զանգվածաբար: Շատ դեպքերում էլ հասարակությունն այնքան անտարբեր է հիմնախնդրին, որ հակաօրինական գործունեության բազմաթիվ տեսակներ մարդիկ այդպիսին չեն ընկալում, ավելին, դրանք համարվում են այս կամ այն անհատի «ձեռներեցության», «խելացի աշխատանքի» դրսևորում: Անչափ ցածր է բնակչության և տնտեսավարողների քաղաքացիական պատասխանատվության զգացումը, օրինակ թեկուզ առևտրի կետերում դրամարկղային կտրոնները պահանջելու դեպքում: Ուստի հասարակության մեջ ստվերային տնտեսության դեմ պայքարի հաջողված օրինակները լուսաբանելը և քաղաքացիական պատասխանատվություն

ամրագրելը պետք է շարունակաբար զուգակցվեն ստվերային տնտեսությունը կրճատելու միջոցառումներով:

Ստեղծված իրավիճակը ուղղակիորեն թելադրում է ստվերային տնտեսության դեմ պայքարի ռազմավարության հիմնական մոտեցումները:

1. Ստվերային տնտեսությունն ընդհանուր առմամբ չարիք է հասարակության համար, սակայն ներկա փուլում այն ունի նաև որոշ դրական կողմեր, որոնք չի կարելի անտեսել դրա դեմ մղվող պայքարում:

2. Ստվերային տնտեսության ծավալները կրճատելը հնարավոր է և պետք է իրականացվի աստիճանաբար՝ եկամտի միակ և քրեորեն հետապնդելի աղբյուրից զրկված սուբյեկտներին աշխատանքով և օրինական եկամուտներ ստանալու աղբյուրներով ապահովելու կամ դրանք ձևավորելու հնարավորություններ ստեղծելու պայմանով:

3. Ստվերային տնտեսության դեմ պայքարի շնորհիվ օրինական և թափանցիկ գործունեության դաշտ տեղափոխված անձանց եկամուտները պետք է բավարարեն նորմալ և սպառողական իրական զամբյուղի արժեքից ոչ ցածր մակարդակի կենսակերպ ապահովելու համար:

4. Այդ պայքարը պետք է հանգեցնի հասարակության միջին խավի տեսակարար կշիռը մեծացնելուն (ըստ եկամուտների և ծախսերի):

Խոսելով ստվերային տնտեսության դեմ պայքարի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության մասին հարկ է հաշվի առնել այն հսկայական միջոցները, որոնք շրջանառվում են ստվերային ոլորտում, և կիրառել այնպիսի ռազմավարություն, որ հենց ստվերային ոլորտում ստեղծված եկամուտներն օգտագործվեն երևույթի դեմ պայքարելու համար: Այսինքն՝ ստվերային տնտեսությունը կրճատելու արդյունքում գանձված պետական եկամուտների մի մասը (սկզբնական շրջանում, օրինակ, 50%-ը) պետք է ուղղել այդ պայքարը ֆինանսավորելուն, և այդպես շարունակ: Կարծում ենք, որ պետական

բյուջեի ցածր եկամուտների պայմաններում միայն այս եղանակով է հնարավոր պայքարել Հայաստանի ստվերային տնտեսության դեմ: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել համապարփակ ծրագիր՝ ընդգրկելով շահագրգիռ բոլոր կազմակերպություններին (Համաշխարհային բանկ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն):

Ամփոփելով վերը նշվածը՝ Հայաստանի ստվերային տնտեսության դեմ պայքարելու համար առաջարկվում են հետևյալ ընդհանրական միջոցառումները:

1. Համապատասխան վարչարարական և կազմակերպչական միջոցառումներով ընդարձակել տնտեսության հարկման բազան և կրճատել հարկային բոլոր «սահմանային դրույքաչափերը»<sup>60</sup>՝ այդպիսով նվազեցնելով տնտեսվարող սուբյեկտների տնտեսական շահագրգռվածությունը ստվերային ոլորտում գործունեություն ծավալելու համար: Այս գործողությունները կարող են ներառել նաև գործող հարկային արտոնությունների (բացառությամբ մանր և միջին ձեռնարկատերերի համար) վերացում, քանի որ դրանք ստվերային գործիչների համար պետական հատվածից «աջակցող ընկերների» միջամտությամբ մեծ չարաշահումների տեղիք են ստալիս: Գոյություն ունեն բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք վկայում են, որ այս կամ այն նպատակներն իրականացնելու համար նախատեսված հարկային արտոնությունները շատ դեպքերում դրանց ընդհանրապես չեն ծառայում, այլ հաճախ ստվերային ոլորտի ներկայացուցիչների համար պետության ներկայացրած տարբեր պարտադիր վճարումներից խուսափելու միջոց են: Օրինակ՝ ՀՀ օրենսդրությամբ օտարերկրյա ներդնողներին տրվող հարկային արտոնությունները հաճախ չարամտորեն օգտագործվում են հարկային վճարումներից խուսափելու նպատակով: Տնտեսաչա-

---

<sup>60</sup> Հարկային «սահմանային դրույքաչափը» եկամտի լրացուցիչ մեկ միավորի հաշվարկվող հարկային դրույքաչափն է:

փակված բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար հարկային արտոնությունները օտարերկրյա ներդրումներ ներգրավելուն նպաստող գործոն չեն լինում, քանի որ այդ երկրներում ներդրումներ իրականացնելու համար գոյություն ունեն այլ՝ առավել կարևոր տնտեսական և քաղաքական որոշիչ գործոններ<sup>61</sup>:

2. Մշակել և իրականացնել հարկային վարչարարության պարզեցմանն ուղղված գործողությունների ծրագիր ինչպես ամբողջ հարկային ոլորտի, այնպես էլ առանձին հարկատեսակների համար առկա «բյուրոկրատական» քաջքշուկները վերացնելու առումով: Փաստ է, որ ներկայումս Հայաստանի օրենսդրական ոլորտը չափազանց բարդացված և անհասկանալիորեն խճճված է, որը տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների այդ մարմինների հետ շփումը դարձնում է «տհաճ» և անցանկալի: Վերը նշված ուղղությամբ առաջարկվող որոշակի միջոցառումներից կարելի է նշել հետևյալները:

- Մշակել հարկային հայտարարագրերի և հարկային տեսչությունների պահանջած ձևերը պարզեցնելու ծրագիր՝ հաշվապահական հաշվառման միջազգային չափորոշիչներով:

- Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայմանների և պահանջների պարզ լուսաբանում ու հասարակական իրազեկում՝ օգտագործելով նաև ժամանակակից տեղեկատվական միջոցները (համացանց, էլեկտրոնային փոստ և այլն): Արդարացված է նաև հատուկ պետական մարմին ստեղծելը (գուցե որևէ գործող կառույցում համապատասխան ստորաբաժանման տեսքով), որը կկենտրոնացնի պետական գրանցում ստանալու վերաբերյալ չգրանցված տնտեսվարող սուբյեկտներին համապատասխան նպատակային տեղեկատվություն նախապատրաստելն ու մատու-

---

<sup>61</sup> Նման ուսումնասիրություններից են՝ Singh H. and Jun K.W., Some New Evidence on Determinants of FDI in Developing Countries, Washington, D.C.:The World Bank Policy Research Working Paper Number 1531, 1995.

ցելը, ինչպես նաև տնտեսության կանոնավոր հատվածում գործելու առավելություններն ու պետական օրինական հովանավորչությունից ստացվող օգուտը բացատրելը:

• Համակարգի աշխատակիցների մասնագիտական կարողությունները ընդլայնելու նպատակով պարբերաբար իրականացնել հարկային և մաքսային մարմինների աշխատակիցների վերապատրաստում և աստեսավորում՝ արդյունքների մասին լայնորեն տեղեկացնելով հասարակությանը:

3. Պարզեցնել և հստակ կանոնակարգել հարկային դաշտի վերահսկողությունը, եկամուտներն ու գույքը հայտարարագրելու և ներմուծվող ապրանքները մաքսազերծելու համակարգերը՝ նվազագույնի հասցնելով այդ ոլորտներում սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունը: Կարևոր է նաև տնտեսվարող սուբյեկտներին հարկային և մաքսային ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների, պահանջվող նոր փաստաթղթեր ներդնելու, ինչպես նաև վերահսկող մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ անընդհատ և կանոնավոր տեղեկացնելը՝ պետական պաշտոնյանների անհիմն և սուբյեկտիվ ռոնձգությունները նվազագույնի հասցնելու համար:

4. Բնակչության և ստվերային ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցությունը բարձրացնելու և տնտեսության պաշտոնական հատվածում գործելու առավելությունները հասարակայնորեն ընկալելի դարձնելու նպատակով կազմակերպել հեռուստատեսային և ռադիոհաղորդումների շարք, հրապարակել վերլուծական և մասնագիտական զանազան հոդվածներ և այլն:

5. Մտվերային տնտեսության դեմ պայքարի առաջարկվող հաջորդ քայլը պետք է ուղղվի հարկային և մաքսային վերահսկողական ու կարգապահական մեխանիզմները ուժեղացնելուն, որը կհանգեցնի այդ ոլորտների վարչարարության արդյունավետությունն ավելացնելուն: Այս նպատակով առաջարկվող որոշակի քայլերից են.

- բացառել տարբեր իրավապահ մարմինների՝ տեղերում անհարկի կամ կրկնակի ստուգումներ իրականացնելը.

- ուժեղացնել հարկային և մաքսային համակարգերի փոխհամագործակցությունը՝ հատկապես քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործարքների վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելիս.

- պարբերաբար և հաճախակի փոփոխել հարկային տեսուչների վերահսկած տարածքները՝ բացառելու համար նրանց և տարածքի տնտեսվարող սուբյեկտների անօրինական գործարքները.

- բարձրացնել ստուգումներ իրականացնող աշխատակիցների մասնագիտական որակավորումը՝ ոլորտի աշխատակիցների պարտադիր վերապատրաստման և արտոնագրման համակարգ ներդնելով.

- կատարելագործել և պարզեցնել հարկային վեճերի դեպքում դատարան դիմելու գործընթացը:

6. Ուժեղացնել հարկային ոլորտում այլ երկրների հետ (հատկապես հիմնական առևտրային գործընկերների) փոխհամագործակցությունը, մասնավորապես՝ հարկային և մաքսային տեղեկատվություն փոխանակելու, տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

7. Կենտրոնացնել ստվերային տնտեսության դեմ պայքարի բոլոր ուժերը և ստեղծել ամբողջական, ընդգրկուն տեղեկատվական բազա՝ այս գործում ներառելով ազգային վիճակագրության ծառայությունը, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները, պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ ոստիկանությունը և շահագրգիռ այլ մարմիններ:

8. Հայաստանի ստվերային տնտեսությունը կրճատելը կարող է նպաստել փոքր և միջին ծավալների վարկային ծրագրեր իրականացնելուն (միկրովարկավորմանը)՝ որպես ոլորտում գործող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական օժանդակություն: Ինչպես վկայում է միջազգային փորձը, միկրովարկավորման ծրագրերը չափազանց կարևոր նշանակություն

են ունեցել զարգացող երկրների թաքնված տնտեսությունների ծավալները նվազեցնելու գործում (մասնավորապես՝ կարելի է նշել Ալբանիայում և Բանգլադեշում Համաշխարհային բանկի իրականացրած ծրագրերը):

9. Հաջողիք քայլը պետք է ներառի պետության տնտեսական կարգավորման ոլորտում ապակենտրոնացման քաղաքականություն իրականացնելը ոչ թե զուտ վարչարարական փոփոխություններով, այլ համայնքներին իրական իշխանական լծակներ փոխանցելով: Մյուս կողմից, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կձևավորվի տնտեսական գործունեության համար լավագույն միջավայր ստեղծելու առողջ մրցակցային դաշտ: Տարածքների տնտեսական զարգացմամբ շահագրգռված համայնքները կիրականացնեն կարգավորումների իրենց իրավասության ներքո բոլոր անհրաժեշտ փոփոխությունները՝ առավել բարենպաստ ձեռնարկատիրական գործունեության դաշտ ստեղծելու և տնտեսվարող սուբյեկտներին այլ համայնքներից իրենց վերահսկման դաշտ բերելու ու գանձվող հարկային եկամուտներն ավելացնելու համար: Մեր երկրում տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով փոխանցված իրավասությունների և լիազորությունների նեղ շրջանակը համայնքներին թույլ չի տալիս իրենց տարածքներում ներդնել տնտեսական գործունեության կարգավորման լիարժեք և ճկուն մեխանիզմներ: Ուստի կարևորում ենք նաև ապակենտրոնացմանն ուղղված համապատասխան սահմանադրական և օրենսդրական փոփոխություններ իրականացնելը:

- տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց տարածքներում տնտեսական գործունեությունը կարգավորող իրական լծակների տրամադրում գործող օրենսդրության մեջ իրականացնելով համապատասխան փոփոխություններ:

- համայնքների տարածքներում տնտեսական գործունեություն ծավալելու թույլտվությունների ինստիտուտի հստակեցում և հետագա զարգացում:

ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորելու առումով նշանակալի քայլ էր 2016 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի\* ՀՀ հարկային օրենսգիրքն ընդունելը, որն ուժի մեջ է մտել և գործում է 2018 թ. հունվարի 1-ից: Այն սովերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում, ըստ էության, լուծել է բազմաթիվ օրենսդրական խնդիրներ, որոնք նախկինում սովերային տնտեսությունն ընդլայնելու խթաններ էին, քանի որ օրենքներով չկարգավորված հարցերը կամ թերի կարգավորումները, բնականաբար, սովերային տնտեսության գործիչները լայնորեն օգտագործում էին՝ հարկեր վճարելուց խուսափելու կամ եկամուտները թերհայտարարագրելու նպատակով: Ուստի ՀՀ հարկային օրենսգիրքն ընդունելու առավելություններից մեկը կարելի է համարել հատկապես հարկային վարչարարության գրեթե բոլոր հարցերն օրենսդրորեն պատշաճ լուծելը: Մրանից ելնելով՝ կարելի է փաստել, որ հարկային վարչարարությանն առնչվող սովերային շրջանառության առաջնալուծող ռիսկերը՝ օրենսդրական ձևակերպումներով, ըստ էության, չեզոքացված են, և այս դեպքում կարող է սովերայնություն առաջանալ կամ ընդլայնվել միայն կոռուպցիոն ռիսկեր ի հայտ գալու և հարկային օրենսգրքի պահանջները չկիրառելու հետևանքով:

Այդուհանդերձ, ՀՀ հարկային օրենսգիրքը գերծ չէ որոշ թերություններից, որոնք առնչվում են սովերային տնտեսության համար շարժառիթներ պարունակելուն, հիմնարար հասկացությունները հստակեցնելուն և հարկային քաղաքականության կատարելագործման որոշակի միջոցառումներին:

1. Չնայած ժամանակի ընթացքում հարկման հատուկ կամ այլընտրանքային համակարգերը սահմանափակելուն (իսկ ևս մեկ քայլ այս ուղղությամբ կատարվեց նաև հարկային օրենսգրքի ընդունմամբ)\* այնուամենայնիվ, ՀՀ-ում այս հարկատեսակների քանակը բավականին շատ է, որն էլ օբյեկտիվորեն խոչընդոտում է հարկման մեկ միասնական համակարգ ձևավորելու գործընթացը: Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի

8-րդ հոդվածով՝ ՀՀ-ում գործում են հարկման երեք տիպի հատուկ համակարգեր.

ա) շրջանառության հարկի համակարգ, որի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ն և (կամ) շահութահարկը փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների.

բ) արտոնագրային հարկի համակարգ, որի շրջանակներում կազմակերպությունները արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներով հարկվում են ԱԱՀ-ն և (կամ) շահութահարկը փոխարինող արտոնագրային հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող արտոնագրային հարկով.

գ) ընտանեկան ձեռնարկատիրության համակարգ, որի շրջանակներում կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ՀՀ օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված դեպքերում ազատվում են մասնավորապես ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից, բացառությամբ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների:

Ինչ վերաբերում է այս համակարգերով հարկման ենթակա գործունեության տեսակների քանակին, ապա դրանք բավական շատ են և ընդգրկում են գրեթե ողջ փոքր և մասամբ՝ միջին բիզնեսի ոլորտը: Ստվերայնության տեսանկյունից հարկման հատուկ համակարգերի հանրածանոթ թերությունն այն է, որ դրանք, որպես կանոն, հաշվի չեն առնում կազմակերպությունների իրականացրած տնտեսական գործունեության արդյունքները, կամ էլ հարկային դրույքաչափը կիրառվում է դրանց ընդհանուր շրջանառության նկատմամբ՝ պարունակելով կրկնահաշվարկներ և այնպիսի ծախսեր, որոնք հարկման ընդհանուր համակարգի կիրառման պայմաններում չէին ներառվի հարկման

բազայում: Այդպիսով, հարկման հատուկ համակարգով աշխատող սուբյեկտների՝ պետական կամ համայնքային բյուջեներ վճարած հարկերի գումարները զգալիորեն տարբերվում են այն ենթադրվող գումարներից, որոնք կվճարվեին բյուջեներ՝ հարկման ընդհանուր համակարգի պայմաններում, ընդ որում՝ այդ գումարների տարբերությունը՝ կախված հարկման ելակետային տվյալների (ցուցանիշների), հարկման հիմք հանդիսացող շրջանառության նվազագույն կամ առավելագույն շեմերի հիմնավորվածության մակարդակից և այլ գործոններից, կարող է լինել ինչպես բյուջեների, այնպես էլ կազմակերպությունների «օգտին», չնայած հարկման հատուկ համակարգեր կիրառելու դեպքում այս տարբերությունը, որպես կանոն, լինում է տնտեսվարողների օգտին՝ բյուջետային եկամուտները թերի գանձելու հաշվին: Հետևաբար, հարկման հատուկ համակարգեր կիրառելով՝ տնտեսական գործունեության փաստացի արդյունքներով վճարման ենթակա գումարներից բյուջետային եկամուտների թերի գանձված մասը կարելի է բնորոշել որպես «օրինական ստվերային եկամուտ»՝ այդ համակարգով աշխատող կազմակերպությունների համար, և որը, ըստ էության, հարկային արտոնության տարատեսակ է:

Հասկանալի է, որ ներկայացված իրավիճակը ոչ թե միտումնավոր ձևավորված համակարգ է, այլ պայմանավորված է զարգացող երկրներին բնորոշ առանձնահատկություններով և պետական կարգավորման համակարգի թերություններով, բիզնես կազմակերպելու և կառավարման փորձի պակասով և օբյեկտիվ մի շարք հանգամանքներով, որոնք թույլ չեն տալիս լիարժեքորեն կիրառել հարկման ընդհանուր համակարգը: Այդուհանդերձ, որպես հարկային քաղաքականության ռազմավարական ուղղություն՝ անհրաժեշտ է հնարավորինս արագ ձերբազատվել և աստիճանաբար անցնել միասնական հարկման ընդհանուր համակարգի, որով էլ հնարավոր կլինի վերացնել մեր բնորոշմամբ «օրինական ստվերային տնտեսության» այս հատվածը: Մյուս կողմից՝ հարկ է նաև նկատի ունենալ, որ

այսպիսի ռազմավարություն գործնականորեն կիրառելիս փոքր և միջին բիզնեսի վրա բացասական փոփոխության ազդեցությունը չեզոքացնելու առումով անհրաժեշտ է ապահովել մի շարք պայմաններ ևս, մասնավորապես՝ ապահովել արտադրության և շրջանառության համատարած և պարտադիր փաստաթղթավորում, վերացնել հարկային վարչարարության բնագավառում խտրական մոտեցումները և կոռուպցիան, ապահովել մրցակցային առողջ միջավայր և այլն, որոնց ուղղությամբ պետական համապատասխան քաղաքականությունները նույնպես պետք է բարեփոխվեն և կատարելագործվեն:

2. Հարկային քաղաքականության և ստվերային տնտեսության անմիջական կապի առումով Հայաստանում նկատելի իրողություններից է հարկային արտոնությունների տեսակների ու ծավալների մեծ շրջանակը, որի նպատակը ոչ միայն անցումային փուլում տնտեսվարողներին շնչելու հնարավորություն տալն է, այլև նրանց ներդրումային ակտիվության մակարդակը բարձրացնելը, նոր աշխատատեղեր ստեղծելը և այլն, որոնք պակաս կարևոր չեն պետության համար: Հետևաբար, հարկային արտոնությունները հիմնավորված կարելի է համարել միայն այն պարագայում, երբ դրանք հանգեցնում է նոր ներդրումներ ներգրավելուն, նոր աշխատատեղեր ստեղծելուն և, ի վերջո, ժամանակ անց ՀՆԱ-ն ավելացնելուն:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ տարիներ շարունակ ՀՀ-ում հիմնական հարկերով սահմանվել և կիրառվել են հարկային արտոնությունների բազմաթիվ տեսակներ, որոնք, ըստ էության, անփոփոխ «տեղափոխվեցին» նաև ՀՀ հարկային օրենսգիրք և շարունակում են գործել: Այդ արտոնությունների դրամական արտահայտությամբ հանրագումարային մեծությունը կամ պետության հարկային ծախսերի մակարդակը (որ պաշտոնապես հաշվարկվում են որպես գործող հարկային արտոնություններով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներ կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսեր) ՀՀ ֆինանսների նա-

խարարության տվյալներով 2018 թ. միայն երեք հարկատեսակներով պետք է կազմի մոտ 395,5 մլրդ դրամ: 2016-2017 թթ. նշված հարկատեսակներով հարկային ծախսերի ընդհանուր գումարները համապատասխանաբար կազմել են 340,3 մլրդ դրամ կամ ՀՆԱ 6.99 տոկոսը և 381,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ 7.0 տոկոսը (տե՛ս Աղյուսակ 10-ը)<sup>62</sup>:

Աղյուսակ 10

Հարկային ծախսերի գնահատականը ՀՀ-ում 2018 թ. (մլրդ դրամ)

|          | Հարկային ծախսերի տեսակը      | Հարկային ծախսերի չափը | Կշիռը հարկային եկամուտների մեջ | Կշիռը ՀՆԱ-ի մեջ |
|----------|------------------------------|-----------------------|--------------------------------|-----------------|
| 1        | ԱԱՀ-ով, այդ թվում՝           | 314,118               | 25.19%                         | 5.37%           |
| 1.1.     | գյուղատնտեսություն           | 27,553                | 2.21%                          | 0.47%           |
| 1.2.     | առողջապահություն             | 35,914                | 2.88%                          | 0.61%           |
| 1.3.     | կրթություն                   | 24,984                | 2.00%                          | 0.43%           |
| 1.4.     | ֆինանսներ և ապահովագրություն | 35,462                | 2.84%                          | 0.61%           |
| 1.5.     | ԱԱՀ շեմ                      | 38,094                | 3.05%                          | 0.65%           |
| 1.6.     | այլ արտոնություններ          | 152,112               | 12.20%                         | 2.60%           |
| 2        | Շահութահարկով, այդ թվում՝    | 21,842                | 1.75%                          | 0.37%           |
| 2.1.     | գյուղատնտեսություն           | 2,795                 | 0.22%                          | 0.05%           |
| 2.2.     | ԱԱՀ շեմ                      | 19,047                | 1.53%                          | 0.33%           |
| 3        | Եկամտային հարկով, այդ թվում  | 59,530                | 4.77%                          | 1.02%           |
| 3.1.     | գյուղատնտեսություն           | 59,530                | 4.77%                          | 1.02%           |
| Ընդամենը |                              | 395,490               | 31.72%                         | 6.76%           |

Անշուշտ, հարկային արտոնություններ տրամադրելու հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում բավականաչափ մեծ է, այն կարող է արդարացվել միայն հարկային ար-

<sup>62</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2018 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

տոնություններով ստացվելիք համարժեք օգուտներ ապահովելու պարագայում: Տվյալ պատկերը ձևավորվել է հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության այն ուղղության շնորհիվ, ըստ որի՝ երկարաժամկետ հատվածում կայուն հարկային բազա ստեղծելու նպատակով շարունակաբար հարկային և մաքսային որոշակի արտոնություններ են տրամադրվում տնտեսության իրական հատվածի այն տնտեսավարողներին, որոնք ունեն զարգացման լուրջ ներուժ և միաժամանակ՝ ձեռնարկությունների տեխնիկական ու տեխնոլոգիական վերազինման կարիք:

Բնակչության սոցիալական ոչ այնքան բարվոք իրավիճակում հաջող տնտեսական քաղաքականության տվյալ ուղղության իրականացումը թույլ կտա ապագայում զգալիորեն և շարունակաբար բարձրացնել բնակչության սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանվածության մակարդակը: Մյուս կողմից, կարծում ենք, հատկապես խորհրդարանական կառավարման անցնելու համատեքստում կարևոր է նաև տրամադրված հարկային, մաքսային և մյուս արտոնությունների արդյունքներն ու դրանց արդյունավետությունը պարբերաբար գնահատելը (իսկ հնարավորության դեպքում՝ մշտադիտարկելը. մինչ այժմ երբևէ չի իրականացվել), որի համար առաջիկա տարում նպատակահարմար կլինեն առանձնահատուկ ուսումնասիրություններ՝ պարզելու, թե ամենատարբեր արտոնություններ տրամադրելով փաստացի ի՞նչ օգուտներ է ստացել պետությունը, ո՞ր տիպի հարկային արտոնություններն են արդարացված, ինչպե՞ս են դրանք ազդել տնտեսական աճի և տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և այլն, որոնք էլ թույլ կտան փաստարկված ճշգրտել հարկային քաղաքականության այս կարևոր հատվածում:

Նշված գործընթացի կարևորությունն ու դերն ընդգծելու նպատակով, կարծում ենք, բավական է նշել, որ վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող ներդրումներով

հիմնականում արձանագրվում են նվազման միտումներ: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով 2018 թ. ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի աճը կանխատեսվել է ընդամենը 0.2 տոկոս և պետք է կազմի ՀՆԱ 18.4 տոկոսը՝ 2017 թ. 18.2 տոկոսի փոխարեն: Ընդ որում, ներկայացված ցուցանիշը զիջում է 2014 թ. մակարդակին 2.5 տոկոսային կետով, որն էլ վկայում է ներդրումների մակարդակի նվազման մասին<sup>63</sup>:

Հետևաբար, ելնելով վերը նշվածից՝ անհրաժեշտ են առանձնահատուկ ուսումնասիրություններ՝ գնահատելու սահմանված հարկային արտոնությունների արդյունավետությունը, ընդ որում՝ ըստ առանձին հարկատեսակների, և դրանց հատվածով՝ ըստ առանձին արտոնությունների, և աստիճանաբար վերացնել բոլոր այն հարկային արտոնությունները, որոնք վերջին 5-10 տարիներին տնտեսական կամ բյուջետային դրական ազդեցություն չեն արձանագրում:

3. Ստվերային շրջանառության ավելանալու ամենամեծ տնտեսական շարժառիթը, մեր կարծիքով, եկամտային հարկի դրույքաչափերն են: Հարկային օրենսգրքի ընդունմամբ եկամտային հարկի դրույքաչափերը ոչ միայն որոշ չափով բարձրացվեցին, այլև ավելի խորացվեց այդ դրույքաչափերի աճի մակարդակը: Այսպես, եթե մինչև հարկային օրենսգիրքն ընդունելը մինչև 120 հազ. դրամ եկամտի դեպքում գանձվում էր դրա 24.4 տոկոսը, 120 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 29.280 դրամին գումարած 120 հազարը գերազանցող գումարի 26 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 518.080 դրամին գումարած 2.0 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը, ապա հարկային օրենսգրքով սահմանվեց, որ մինչև 150 հազ. դրամ եկամտի դեպքում գանձվում է դրա 23.0 տոկոսը (այսինքն՝ չնչին նվազեցում տեղի ունեցավ), 150 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 34.500 դրամ՝ գումարած 150.000 դրամը գերազանցող

---

<sup>63</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2018 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

գումարի 28 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 552.500 դրամ՝ գումարած 2.0 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը: Նշանակում է՝ խորացվեց եկամտային հարկի աճի մակարդակը՝ ավելացնելով միջին եկամուտներ ունեցողների հարկային բեռը, որն արդեն իսկ ստվերային եկամուտներ վճարելու և չգրանցված աշխատողներ պահելու առումով էականորեն կարող է խթանել գործատուների՝ ստվերային շրջանառությունն ավելացնելու շահադրդվածությունը: Մակայն խնդիրը միայն սրանով չի սահմանափակվում. ինչպես նախկինում, այնպես էլ հարկային օրենսգրքի ընդունմամբ Հայաստանում գործել է շահութահարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափ, որի հետ եկամտային հարկի աճող և բարձր դրույքաչափերի համադրմամբ ձեռնարկատերերը միանշանակորեն շահագրգռված են լինում էականորեն ցածր սահմանել աշխատողների պաշտոնական աշխատավարձերը, իսկ իրական և պաշտոնական աշխատավարձերի տարբերությունը վճարել կանխիկ (այսպես կոչված, «ծրարով», որն էլ հենց աշխատավարձի ստվերային մասն է): Ստվերայնության միայն այս հատվածով ավելանում է կազմակերպության հարկվող շահույթի բազան, որն էլ, ի տարբերություն եկամտային հարկի 23, 28 կամ 36 տոկոսի, հարկվում է շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով՝ նվազեցնելով ոչ միայն գործարարի հարկային բեռը, այլև պետական բյուջեի փաստացի եկամուտները: Ընդ որում, այս սխեմայով տեղի է ունենում ստվերայնության նվազագույն աճ, թեև գործնականում շատ գործատուներ այն գուրակցում են նաև հարկային վճարումները նվազեցնող այլ սխեմաներով:

Տվյալ խնդրի լուծումը բավականին պարզ ու հասկանալի է. անհրաժեշտ է տրամագծորեն փոխել եկամտային հարկի դրույքաչափեր սահմանելու քաղաքականությունը և անցնել եկամտային հարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափի, որը, շահութահարկի դրույքաչափի հետ նույնը լինելով, սկզբունքորեն կվերացնի ստվերային աշխատավարձեր վճարելու և

հարկերից խուսափելու տնտեսական շարժառիթը: Այսինքն՝ միասնական 20 տոկոս եկամտային հարկի և միասնական 20 տոկոս շահութահարկի պայմաններում գործատուի համար որևէ տարբերություն չի լինի, թե վճարած հարկերը ո՞ր հարկատեսակով կհարկվեն՝ եկամտային հարկով, թե՞ շահութահարկով, քանի որ երկու դեպքում էլ ձևավորվում է նույն հարկային բեռը, իսկ հակառակ դեպքում՝ տարբերությունը բավականին ակնհայտ է. ստվերային եկամուտներից վճարների դեպքում մշտապես առկա են բացահայտվելու և խոշոր սուզանքներ վճարելու (անգամ քրեական պատասխանատվության ենթարկվելու) վտանգ, հարկային մարմինների հետ լեզու գտնելու դժվարություններ և հավելյալ ծախսեր, ինչպես նաև դրանց առնչվող քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգ (արդեն կաշառք տալու հիմքով) և այլն:

Բնականաբար, եկամտային հարկի միասնական 20 տոկոս դրույքաչափի անցնելը բավականին կտրուկ քայլ է, որով առաջիկա մի քանի տարիներին բյուջետային եկամուտների զգալի կորուստներ կարձանագրվեն: Սակայն, այդ բուֆերային (թափարգելային) ժամանակաշրջանն անցնելուց հետո սկզբունքորեն կլուծվի ստվերային տնտեսության նշանակալի տնտեսական շարժառիթներից մեկը վերացնելու խնդիրը, իսկ պակասող բյուջետային եկամուտների հարցը կարող է լուծվել այլ կերպ:

4. Ֆիսկալ (գանձարանային) նպատակներով հարկային բեռի բարձրացումները, ինչպես արդեն նշվել է, ինքնին դառնում են ստվերային շրջանառության ավելանալու ուղղակի գործոն, և հետևանքները, կարծում ենք, մոտ ապագայում իրենց զգացնել կտան՝ կեղծ կամ անորակ ապրանքների շրջանառության ծավալները մեծանալուց մինչև հարկման օբյեկտները թաքցնելը: Այս առումով եթե նույնիսկ համարենք, որ ծխախոտի կամ ալկոհոլային խմիչքների ակցիզային հարկերը բարձրացնելով՝ դրանց գների աճը կարող է հանգեցնել նաև որոշակի դրական

արդյունքի (հակաձխախոտային և ակոհոլիզմի դեմ պայքարի տեսքով), ապա քսայուղերի, բենզինի, սեղմված գազի և բազալին սապրանքների մյուս արտադրանքները կտրուկ թանկացնելը կդառնա ոչ միայն գների, այլև տնտեսության սովորաբար ունեցած շրջայական աճի անխուսափելի գործոն, ուստի կարծում ենք՝ անհրաժեշտ է կա՛մ հրաժարվել այս մոտեցումից և թեկուզ աստիճանաբար, բայց նվազեցնել բազալին սապրանքների ակցիզային հարկերը, կա՛մ էլ բնակչության եկամուտներն ավելացնել այնքան, որ հնարավոր լինի սպառել գոնե նշված սապրանքների որակյալ (թանկ գներին համապատասխանող) տեսակները՝ հնարավորինս տեղ չթողնելով սովորային կամ փոխարինող սապրանքների շրջանառությանը:

5. Սովորային տնտեսությունը կրճատելու առումով կարևոր է նաև հստակեցնել ՀՀ հարկային օրենսգրքի երկու դրույթ, մասնավորապես.

ա) ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել *մրցունակությունը*, ըստ որի՝ «...հարկային համակարգը պետք է ներդրումների ներգրավման և նպաստավոր գործարար միջավայրի ձևավորման տեսակետից լինի մրցունակ»: Առաջին հայացքից սահմանվածը բավականին գրավիչ դրույթ է, սակայն խնդիրն այն է, որ այն արդեն իսկ խախտված է, և ՀՀ հարկային համակարգն էլ չի համապատասխանում դրան: Այսպես, մրցունակությունը ենթադրում է այլ երկրների հարկային համակարգերի համեմատությամբ որոշակի մրցակցային առավելությունների առկայություն, որոնք դրսևորվում են՝ հարկային համեմատաբար ցածր դրույթաչափեր և հարկման փոքր բազա սահմանելով, կամ գոնե պարունակում են հիմնական գործընկեր երկրների հետ համահավասար դրույթաչափեր և հարկման պայմաններ: Այնինչ եթե համեմատենք ՀՀ և թեկուզ Ռուսաստանի Դաշնության հիմնական հարկատեսակներով հարկային դրույթաչափերը (օրինակ՝ ՀՀ-

ում եկամտային հարկի աճող՝ 23, 28 և 36 տոկոս դրույքաչափերի դիմաց ՌԴ-ում գործում է միասնական 13 տոկոս դրույքաչափ, ԱԱՀ-ով համապատասխանաբար՝ 20 տոկոս և 18 տոկոս դրույքաչափեր և այլն), ապա ակնհայտ է, որ ՀՀ հարկային համակարգը մրցունակության որևէ հատկանիշ չի պարունակում, իսկ սահմանված դրույթն էլ զուտ ձևական է:

բ) Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի հաջորդ՝ 14-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել *արդյունավետությունը*, ըստ որի՝ «...հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմինների մոտ՝ հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս վաղ և ռեսուրսներով»: Մեր կարծիքով, *հարկային համակարգի արդյունավետություն* հասկացության մեկնաբանությունը խիստ նեղացված է և դրա հիմնական չափորոշիչ է դիտարկված նվազագույն ռեսուրսներով (հետևաբար՝ նաև ծախսերով) հարկային վարչարարություն և հարկային հաշվառում իրականացնելը: Մինչդեռ մեկնաբանությունն ից դուրս է մնացել այն հիմնական արդյունքը՝ գանձվող պետական եկամուտների մակարդակի աճը, որը պետք է լինի հարկային համակարգի գործունեության գլխավոր նպատակը, և հենց այս նպատակին հասնելն էլ՝ նշված ծախսատարության ցածր մակարդակով, կդառնա հարկային համակարգի արդյունավետությունը գնահատելու իրական չափորոշիչ: Վերջինս, ի տարբերություն սահմանվածի, արդեն կարտացոլի ստվերային տնտեսությունը թեկուզ ոչ 100 տոկոսանոց, բայց կրճատելու փաստը, որով էլ կարելի է պարբերաբար գնահատել ստվերային շրջանառությունը կրճատելու ուղղությամբ ՀՀ հարկային մարմինների գործունեությունը: Հետևաբար, առաջարկում ենք տվյալ սկզբունքը սահմանել հետևյալ խմբագրությամբ. «...հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների հաշվառումը, իսկ հարկային մարմինների՝

հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով՝ ապահովելով հարկային եկամուտները զանձելու հնարավոր առավելագույն մակարդակ:

6. Սուվերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում կարևոր է վերանայել հարկային օրենսգրքի ևս մեկ դրույթ, որը, մեր կարծիքով, ակնհայտորեն կոռուպցիոն ռիսկեր պարունակում է և գործնականում հնարավորություն է ընձեռում տնտեսվարողներին և հարկային մարմինների ծառայողներին փոխշահավետության սկզբունքով համաձայնության գալ և թաքցնել հարկերի որոշ մասը: Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով հարկային մարմնի ղեկավարին իրավասություն է վերապահվում անկախ օրենսգրքում նշված պայմաններից՝ երրորդ անձից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողություններով ձեռք բերված տեղեկություններով, հարկային մարմնի սահմանած կարգով կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց համարել փոխկապակցված՝ դրանից բխող, այդ թվում՝ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու հետևանքներով: Մեր կարծիքով տվյալ մոտեցումն ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում՝ հարկային մարմնին «խաղի կանոններ» սահմանելու հնարավորություն տալու և իրավասությունները հայեցողաբար կիրառելու տեսանկյունից: Տվյալ մոտեցումը համապատասխանում է նաև ՀՀ կառավարության 2009 թ. հոկտեմբերի 22-ի թիվ 1205-Ն որոշման 9-րդ կետով հաստատված՝ նախագծի հակակոռուպցիոն կարգավորման ազդեցությունը գնահատելու ընթացքում բացահայտվելիք հավանական կոռուպցիոն հիմնական գործոններից երկուսին, մասնավորապես՝ 3-րդ ենթակետով սահմանված՝ լիազորությունները հայեցողաբար օգտագործելու լայն շրջանակի առկայությանը, այդ թվում՝ որոշումներ ընդունելու ժամկետներին և պայմաններին, ինչպես նաև այլընտրանքային

լիազորությունները դիտարկելուն<sup>64</sup> և 11-րդ ենթակետով սահմանված՝ օրենքից ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի կապակցությամբ իրավաստեղծ գործունեության ազատության առկայությանը<sup>65</sup>: Հետևաբար առաջարկում ենք վերանայել առաջարկվող մոտեցումը և կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց փոխկապակցված համարելու ողջ գործընթացը կանոնակարգել ՀՀ հարկային օրենսգրքով կամ էլ՝ նշված կարգը սահմանելու լիազորությունը վերապահել գոնե ՀՀ կառավարությանը:

7. Ինչպես արդեն նշվել է, արդի պայմաններում բավականին արագ զարգացող համացանցային տիրույթում ստեղծված և ստեղծվող էլեկտրոնային հարթակներով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մի զգալի մասը, ըստ էության, դուրս է մնում հանրապետության հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների վերահսկողության դաշտից: 2016 թ. հունիսի 17-ին «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին որոշակի լրացումներ, որոնք մասամբ լուծեցին նշված խնդիրը, բայց այն ամբողջությամբ դեռևս հրատապ է: Մասնավորապես, հիշյալ լրացմամբ այս օրենքում

---

<sup>64</sup> Լիազորությունների լայն շրջանակի առկայությունը հիմնականում դրսևորվում է որոշակի հանգամանքներում պաշտոնատար անձանց սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռնելով, այդ թվում՝ որոշումներ ընդունելու ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկմամբ, հետևաբար, պաշտոնատար անձին նաև հնարավորություն է ընձեռնվում սեփական հայեցողությամբ ընտրելու տարբերակներից մեկը՝ առանց նկատի առնելու, թե որ դեպքում է պաշտոնատար անձը պարտավոր ընտրել այս կամ այն տարբերակը:

<sup>65</sup> Օրենքից ցածր իրավական ուժ ունեցող իրավական ակտերի կապակցությամբ իրավաստեղծ գործունեության չափազանց մեծ ազատությունը հիմնականում արտահայտվում է հարաբերություններն օրենքով կարգավորելու փոխարեն ավելի ցածր իրավական ուժ ունեցող իրավական ակտերով կարգավորելով, ինչպես նաև օրենքով՝ գերատեսչություններին տրամադրվող իրավաստեղծ գործունեությանը վերաբերող ենթաօրենսդրական կարգավորման չափանիշների և պայմանների բացակայությամբ:

ավելացվեց նոր՝ 4.1-րդ գլուխը, որով կանոնակարգվում են էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով իրականացվող առևտրին և (կամ) մատուցվող ծառայություններին առնչվող հարաբերությունները: Տվյալ գլխի 15.1.-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է՝ «Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար»: Ակնհայտորեն նշված դրույթը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց և չի տարածվում իրավաբանական անձանց վրա, որն արդեն իսկ վերջիններիս համար սովորային առևտուր իրականացնելու և ծառայություններ մատուցելու հսկայական դաշտ է ապահովում. նշվածը նաև վերաբերում է միայն ՀՀ տարածքում ձևավորված էլեկտրոնային հարթակներով առևտուր իրականացնողների գրանցմանը: Մտվերային շրջանառության տեսանկյունից խնդիրն այն է, որ օտարերկրյա պետությունների տարածքում ձևավորված էլեկտրոնային հարթակները նույնպես հասանելի են ՀՀ սուբյեկտներին, և այդ հարթակներում գրանցված ու ՀՀ տարածքում առևտուր իրականացնող կամ ծառայություններ մատուցող սուբյեկտները որևէ հարկային պարտավորություններ չեն ստանձնում և իրականացնում, այսինքն՝ միանգամայն դուրս են հարկային մարմինների վերահսկողությունից:

Այս կապակցությամբ առաջարկվում է հիմնովին լրամշակել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4.1-րդ գլուխը, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ

կատարել նաև ՀՀ Հարկային օրենսգրքում՝ սահմանելով, որ՝

ա) անկախ էլեկտրոնային հարթակի գրանցման վայրից ՀՀ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները պարտավոր են ՀՀ-ում գրանցվել որպես ձեռնարկատիրության սուբյեկտներ:

բ) Այդ սուբյեկտների կողմից ապրանքներ իրացնելու և ծառայություններ մատուցելու վայր է ՀՀ տարածքը, եթե ապրանքի պատվիրումը կամ ծառայության համար պատվերը տրվել է ՀՀ տարածքից (IP հասցեներից), իսկ այս դեպքում, բնականաբար, տվյալ սուբյեկտների համար կառաջանան օրենքով սահմանված հարկային պարտավորություններ:

գ) Այն դեպքում, երբ հնարավոր չի լինի նույնականացնել ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտին, ապա օրենքի ուժով արգելափակել նրա՝ ծառայություններ և ապրանքներ իրացնելու նպատակով օգտագործվող հաղորդակցության միջոցներին համացանցային հասանելիությունը: Նշենք նաև, որ չնայած այս գործընթացը բարդ ու ծախսատար է և պահանջում է տեխնիկական և տեխնոլոգիական նոր լուծումներ, սակայն անհրաժեշտ է, և անհրաժեշտ է ոչ միայն ստվերային շրջանառությունները կրճատելու, այլև ազգային անվտանգությունը ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ, կարծում ենք, կարելի է սահմանել նորմ, ըստ որի՝ ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտին նույնականացնելու անհնարինության դեպքում ձեռնարկատիրության սուբյեկտ կդիտվեն և կհարկվեն այն էլեկտրոնային հարթակները կամ վեբ-կայքերը, որոնք կտեղադրեն համապատասխան հայտարարություններ, գովազդային նյութեր կամ որևէ կերպ ՀՀ ռեզիդենտներին հասանելի կդարձնեն չգրանցված սուբյեկտի՝ ապրանքներ իրացնելը կամ ծառայություններ մատուցելը:

8. Ստվերային շրջանառության ընդլայնման գործիքներից

են, ինչպես արդեն նշվել է, ամբողջ տարվա ընթացքում տարատեսակ զեղչերը և ակցիաները, որոնք նույնպես առաջարկվում է կանոնակարգել օրենքներով կամ Կառավարության որոշումներով: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել նորմ, ըստ որի՝ մինչև զեղչեր կիրառելը տնտեսվարողները պարտավոր են իրենց սպասարկման հարկային մարմնին տրամադրել սահմանվող զեղչերի և դրանք կիրառելու ժամանակահատվածի մասին հստակ տեղեկատվություն, որն էլ հարկային մարմինները կօգտագործեն համապատասխան ստուգումների կամ ժամանակաչափման (խրոնոմետրաժի) ընթացքում՝ հստակեցնելու նրանց տնտեսական շրջանառության իրական ծավալները և հարկային պարտավորությունները:

## Եզրակացություններ և առաջարկություններ

Ստվերային շրջանառությանը և ստվերային տնտեսությանը վերաբերող սույն ուսումնասիրություններն ու հետազոտությունները ստորև ներկայացվող եզրակացությունների ու առաջարկությունների հնարավորություն են ընձեռում:

1. Ստվերային տնտեսական գործունեությունը տնտեսական հարաբերությունների պետական կարգավորման և ձեռնարկությունների արդյունավետ կառավարման ժամանակակից մարտահրավերներից ամենաբարդն ու անտեսանելին է, որն անբաժանելի է ֆորմալ տնտեսական գործունեությունից և այս կամ այն չափով գոյություն ունի բոլոր երկրներում:

2. *Ստվերային տնտեսությունը*, ինչպես նաև *ստվերային շրջանառությունը* տնտեսագիտության այն կարևոր հասկացություններից են, որոնց վերաբերյալ չկա միասնական սահմանում: Այնուևանդերձ, եթե ընդհանուր առմամբ բնութագրելու լինենք, ապա *ստվերային տնտեսությունը*, տարակարծություններով հանդերձ, ոչ պաշտոնական տնտեսության այն հատվածն է, որտեղ կատարվող ցանկացած գործողություն կամ տնտեսական գործունեությամբ ստեղծված եկամուտ դուրս է մնում պաշտոնական մարմինների վերահսկողությունից և չի արտացոլվում պաշտոնական վիճակագրության մեջ:

Ինչ վերաբերում է *ստվերային շրջանառություն* հասկացությանը, ապա նշվածից արդեն իսկ ակնհայտ է, որ այն ստվերային տնտեսությունից հիմնականում տարբերվում է տնտեսության մակարդակների առումով: Մասնավորապես, եթե ստվերային տնտեսությունը ներառում է երկրի մասշտաբով տնտեսական գործունեության բոլոր տեսակները, ճյուղերը և տնտեսական հարաբերությունները (կամ այլ կերպ՝ մակրոտնտեսությունը), ապա ստվերային շրջանառություն ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ միկրոտնտեսությունը կամ ձեռնարկությունների և կազմակերպությունների կտրվածքով ստվերային տնտե-

սական հարաբերությունները: Ստվերային տնտեսության և դրա հատվածների տարբեր դասակարգումները, բնականաբար, պայմանական են, նայած թե գործունեության ինչպիսի տեսակների շրջանակ են ընդգրկում օգտագործվող այս կամ այն անվանումները և հասկացությունները: Ընդ որում՝ միանշանակ չի կարելի համարել նաև այն մոտեցումը, ըստ որի՝ ստվերային գործունեության բոլոր տեսակներն անօրինական են: Ճիշտ է, ստվերային տնտեսությունը հիմնականում ընդգրկում է գործող օրենքներին և այլ իրավական նորմերի հակասող գործողություններ, սակայն գործնականում միշտ չէ, որ այն հակասում օրենքներին: Այսօր էլ ստվերային տնտեսությունում կատարվող շատ գործարքներ իրականացվում են օրենքներին համապատասխան, իսկ ավելի ստույգ չեն հակասում գործող օրենսդրությանը: Այդպիսի ստվերային գործունեության տեսակներից են, օրինակ, անորակ և պահանջվող չափորոշիչներին չհամապատասխանող արտադրանք թողարկելը և դրանք «հարկադրաբար» (սակայն օրինական ուղիներով) հաճախորդներին վաճառելը, որը կատարվում է ձեռնարկության ծախսերը կրճատելու և այդ ճանապարհով ստվերային շահույթը մեծացնելու նպատակով: Իբրև ստվերային գործունեության այս տեսակի օրինակ կարելի է նշել հացի գների կայուն մակարդակ պահպանելով (այդ թվում՝ նաև վարչական կամ քաղաքական լծակների գործադրմամբ)՝ հացի կշիռը նվազեցնելը, որակյալ բենզինի գնով անորակ բենզին վաճառելը և այլն, որոնցով թերևս տնտեսվարողը լրացուցիչ եկամուտ չի ստանում, սակայն չի էլ կորցնում (իսկ եթե բարձրացներ ապրանքի գինը կամ գինը համապատասխանեցներ ապրանքի իրական որակին, ապա անխուսափելիորեն հաճախորդներ կկորցներ, անգամ կարող էր դուրս մղվել շուկայից):

3. Ստվերային տնտեսության դեմ պայքարի միջոցառումները պետք է լինեն համալիր և համակարգային, ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական ու սոցիալական տեսանկյուններից. դրանց են վերաբերում.

3.1. Հարկային համակարգի շարունակական բարեփոխումները, որոնք նպաստում են ստվերային ոլորտից եկամտի մի մասը դուրս բերելուն:

3.2. Հարկային և մաքսային վարչարարության ընթացքում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելուն ուղղված միջոցառումները:

3.3. Կոռուպցիայի դեմ պայքարը խստացնելը:

3.4. Երկրից դուրս բերված կապիտալը վերադարձնելու միջոցառումները և կապիտալի արտահոսքը դադարեցնելը, գրավիչ ներդրումային միջավայր ստեղծելը:

3.5. Գաղտնի արտադրական գործընթացները բացահայտելը և դրանց գործունեությունը դադարեցնելը (օրինակ՝ ալկոհոլային խմիչքների ոլորտում):

3.6. Ֆինանսական հոսքերի վերահսկողությունը խստացնելը փողերի լվացումը կանխարգելելու նպատակով:

3.7. Քաղաքականությունից և պետական կառավարման ապարատի ենթակայությունից դուրս բիզնես զարգացնելուն ուղղված գործուն և նպատակային քայլերը:

4. Հայաստանի տնտեսության ստվերային հատվածը ներառում է տնտեսության այն հատվածը, որտեղ ստեղծված եկամուտը մասամբ կամ ամբողջությամբ չի հայտարարագրվում պաշտոնական մարմիններում: Տնտեսության «նոր» հատվածում, բնականաբար, գոյություն ունեն ձեռնարկություններ, որոնք հիմնականում հարկային վճարումներից խուսափելու նպատակով չեն հայտարարագրում իրենց իրական եկամուտների ողջ ծավալը:

5. Հայաստանի ստվերային տնտեսության առանձնահատկություններից են.

- տնտեսության «հին» և «նոր» հատվածների համաժամանակյա գոյությունը.

- ստվերային տնտեսության համեմատաբար ոչ քրեածին լինելը.

- Հայաստանի տնտեսության ստվերային հատվածը, ի տարբերություն այլ երկրների, բավականին տեսանելի է, քանի որ

հասարակության ծանր սոցիալական պայմաններից ելնելով՝ պետությունը ստվերային գործունեության շատ տեսակներին նկատմամբ մեղմ քաղաքականություն է վարում.

- ՀՀ-ում ստվերը (քացառությամբ քրեածին և անօրինական գործունեության) գործում է տնտեսության ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական հատվածներում (մասնավորապես՝ հարկային վարչարարության անարդյունավետության և այդ ոլորտում առկա կոռուպցիայի պատճառով հնարավոր է փոխհամաձայնության գալ համապատասխան պաշտոնական մարմինների ներկայացուցիչների հետ և տնտեսական գործունեության մի մասը պահել ստվերային, մյուս մասը պաշտոնական հատվածներում).

- ստվերային տնտեսության առկայությունը Հայաստանում ինչ-որ առումով բնակչության և պետության միջև կնքված «սոցիալական համաձայնություն» է (պետությունը, չկարողանալով ապահովել բնակչության հիմնական զանգվածի կենսականորեն անհրաժեշտ նվազագույն միջոցները, այսպես ասած, աչք է փակում կենսական նվազագույնը ապահովելու համար իրականացրած տարբեր գործունեությունների ստվերային բնույթի վրա):

6. Ստվերային ոլորտում ստեղծված եկամուտների մի մասը ձևավորվում է պետական խողովակներով կամ վերջինիս ակտիվ միջամտությամբ (պետական պատվերներին առնչվող խաբեություններ, այսպես կոչված, «աստկատներ» և այլն): Ստվերային նմանատիպ գործունեությամբ ստեղծված եկամուտը համեմատաբար հեշտ է օրինականացնել պայմանավորված բիզնեսի և քաղաքականության սերտաճմամբ և կոռուպցիայի բարձր մակարդակով, ուստի ստվերային շրջանառության այս հատվածին անհրաժեշտ է առանձնահատուկ մոտեցում՝ ստվերային տնտեսության ծավալները կրճատելու տնտեսական, իրավական և մյուս մեթոդներն ու մեխանիզմները զուգորդելով հակակոռուպցիոն գործուն ռազմավարությամբ, բյուջետային կարգապահության խստացմամբ, պետական ֆինանսական վե-

բահսկողության համակարգի արմատական վերանայմամբ և ընդհանրապես պետական կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարական ծրագրերով:

7. Հայաստանում, ինչպես նաև տարածաշրջանի այլ երկրներում սովերային գործունեության առանձնահատուկ տեսակ է, այսպես կոչված, *փողի լվացումը*. այն բազմաբնույթ և բարդ գործընթաց է, որը ներառում է երեք հիմնական քայլեր.

- կանխիկ փողը ֆիզիկապես «տեղավորելը» (թաքցնելը).
- բազմաթիվ բարդ իրավաբանական և տնտեսական գործարքներով կուտակված գումարների անօրինականության հետքը վերացնելը.
- անօրինական ճանապարհով ստեղծված գումարների աղբյուրների վերաբերյալ օրինական բացատրություն ստեղծելը (ձևավորելը):

Սովերային գործունեության յուրահատուկ տեսակ է դրամանենգությունը, այսինքն՝ դրամաշրջանառության մեջ կեղծ թղթադրամների շրջանառումը:

8. Սովերային տնտեսության սուբյեկտները իրենց եկամուտներն ավելացնում են՝ ոչ միայն եկամուտները թերհայտարարագրելով, այլև տարբեր ճանապարհներով տնտեսական ծախքերն արհեստականորեն ուժճացնելով և հարկվող եկամուտը նվազեցնելով: Նման գործունեության տեսակները բազմազան են, և շատ հաճախ դրանք իրականացվում են իրավական տեսանկյունից թույլատրելի հնարավոր սահմաններին շատ մոտ: Տնտեսվարող սուբյեկտի և իրականացվող գործունեության առանձնահատկություններից կախված՝ կիրառվում են տարբեր մեխանիզմներ, մասնավորապես՝

8.1. փաստաթղթավորված առևտուրը, ինչպես նաև վաճառքից ստացվող ամբողջ հասույթը չգրանցելը, որն իրական շրջանառությունը և եկամուտները չհայտարարագրելու ամենատարածված ձևն է.

8.2. հաճախ տնտեսվարող սուբյեկտներն իրենց անօրինակ արտադրական գործոնները պաշտոնական փաստաթղթերում

ներկայացնում են որպես նոր գնված ապրանքներ, կամ վճարված իրական գնից ավելի են գրանցում տարբեր նյութերի և արտադրական այլ գործոնների արժեքը.

**8.3.** անձնական օգտագործման կամ սպառման համար նախատեսված ապրանքների և ծառայությունների արժեքը ձեռնարկության ծախքերում ընդգրկելը, այդ թվում՝ ձեռնարկության միջոցների հաշվին անձնական օգտագործման մեքենաներ գնելը, ձեռնարկության միջոցների հաշվին (գործնական և ուսուցողական այցելություններով քողարկված) անձնական ճանապարհորդությունները ֆինանսավորելը և այլն.

**8.4.** ներկայացուցչական և տրանսակցիոն ծախսային հոդվածներով ձեռնարկության միջոցները անձնական «վարձատրության» նպատակով օգտագործելը.

**8.5.** ձեռնարկության աշխատակիցներին էժանացված գներով ապրանքների և ծառայությունների վաճառք ձևակերպելը և շուկայում ավելի թանկ գնով վերավաճառելով՝ ստվերային շահույթներ ստանալը.

**8.6.** չգրանցված աշխատակիցներ պահելը.

**8.7.** ձեռնարկությունների միջև բարտերային գործարքները.

**8.8.** ձեռնարկության աշխատակիցներին տարբեր արտոնություններ և լրավճարներ (օրինակ՝ տրանսպորտային ծախսերի համար) տրամադրելը՝ որպես ցածր աշխատավարձի «փոխհատուցում» և այլն:

**9.** Ստվերային տնտեսության և պետական կարգավորման միջև առկա է յուրահատուկ փոխկապվածություն. որքան տնտեսությունը կարգավորվող է, այնքան մեծ են ճնշումները, և փոքր՝ ստվերային տնտեսության մասշտաբները: Հակառակ դեպքում մեծ է ստվերային շուկան:

Ստվերային տնտեսությունը հանգեցնում է երկրում սոցիալական լարվածության առաջանալուն ու խորանալուն, մեծանում են երկրում առկա կոռուպցիոն ռիսկերը: Երկրի տնտեսության վրա ստվերային հատվածի թողած առանցքային բացասական հետևանք կարելի է նշել հարկային եկամուտները ոչ

լիարժեք գանձելը: Պետության գանձած հարկային եկամուտները կազմում են եկամուտների մի մասը, և հատկապես անցումային փուլում գտնվող շատ տնտեսական գործունեություններ դուրս են մնում պետական վիճակագրությունից: Ստվերային տնտեսության վրա ազդում են նաև պետության մակրոտնտեսական քաղաքականության այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ՀՆԱ-ն, արտահանումն ու ներմուծումը, զբաղվածության մակարդակը և այլն:

Ստվերային տնտեսության ակտիվ միջամտությամբ երկրի տնտեսության մեջ ձևավորվում են շղթայական ռեակցիայի նման գործող տարբեր երևույթներ, որոնք բացասաբար են ազդում հիմնականում բնակչության միջին ու ցածր կենսամակարդակ ունեցող խավի վրա:

**10.** Հայաստանի Հանրապետությունում առկա են մի շարք գործոններ, որոնց պատճառով մեծ ծավալի են հասնում ստվերային տնտեսության մասշտաբները:

Այդ գործոններն են.

**10.1.** եկամուտների ցածր մակարդակը.

**10.2.** գործազրկության բարձր մակարդակը.

**10.3.** բնակչության կենսամակարդակի անկումը.

**10.4.** բանկային համակարգի նկատմամբ առկա անվստահությունը.

**10.5.** օրենսդրական դաշտի անկատարությունը.

**10.6.** հարկային բեռի առկայությունը.

**10.7.** պետական կառավարման համակարգի անարդյունավետությունը:

Որպեսզի պետությունը հնարավորություն ունենա կառավարելու ու կրճատելու ստվերային տնտեսությունը, անհրաժեշտ է ստեղծել սոցիալ-տնտեսական այնպիսի միջավայր, որը տնտեսական սուբյեկտներին հնարավորություն կընձեռի օրինականացնելու իրենց գործունեությունը և օրենքի սահմաններում իրականացնելու նորմալ տնտեսական գործունեություն:

Մոցիալական, քաղաքական, տնտեսական գործունեությունը պայմանավորված՝ դժվար է գնահատել ՀՀ ստվերային տնտեսության իրական ծավալները:

**11.** ՀՀ ստվերային շուկան քրեածին չէ. ստվերային գործունեությամբ զբաղվող սուբյեկտներն ունենում են խոշոր հովանավորներ և հանցագործ խմբերի հովանավորչության կարիք չեն զգում:

**12.** Ստվերային տնտեսությունը կրճատելու նպատակով անհրաժեշտ է.

**12.1.** մշակել ստվերային տնտեսությունը կարգավորող մեխանիզմներ՝ ազգային-պետական շահերի, տնտեսական անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան.

**12.2.** մշակել միջոցառումներ՝ ուղղված ֆինանսական և ապրանքային շուկաներում ստվերային ոլորտները վերացնելուն, ապրանքների շուկաները լուծարելուն, ինչպես նաև իրականացնել տնային տնտեսությունների գործունեությանը համահունչ գնահատում:

**12.3.** Որքան էլ բարդ լինի ստվերային տնտեսության ծավալը գնահատելը, այն չափազանց կարևոր է ինչպես տնտեսական աճի վերլուծության, այնպես էլ տնտեսական քաղաքականության ուղղությունները սահմանելու տեսանկյունից: Գնահատում չիրականացնելը կասկածելի է դարձնում ՀՆԱ հաշվարկը, քանի որ աշխարհի բոլոր երկրներում (զարգացած և զարգացող) ընդունված է ՀՆԱ-ի մեջ ստվերայնության բաղադրիչը որոշելը:

Ստվերային գործունեության ծավալը գնահատելը ՊԵԿ-ում հիմնականում իրականացվում է միկրոմեթոդներ կիրառելով: Հետազոտությունները իրականացվել են երեք ուղղությամբ՝

- հորիզոնական (ըստ ոլորտների բացահայտել ընդհանուր ռիսկերը).

• ուղղահայաց (ոլորտային ցուցանիշների համադրմամբ բացահայտել տվյալ ոլորտում գործող առանձին հարկ վճարողի ռիսկերը)։

• անհատական (բացահայտել առանձին հարկ վճարողի ռիսկերը՝ օգտագործելով որոշակի հարկ վճարողի անհատական ցուցանիշներն ու տվյալները)։

Ստվերը գնահատելու նպատակով հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները՝ առանձնացվել են չորս հիմնական չափորոշիչներ.

- իրացման շրջանառությունների թերհայտարարագրում.
- իրացման գների թերհայտարարագրում.
- ծախսերի գերազնահատում.
- եկամուտների մեծությունների թերազնահատում:

Մակայն Հայաստանում ստվերի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու, իրական պատկերը ներկայացնելու նպատակով, նաև հաշվի առնելով տնտեսության առանձնահատկությունները՝ միկրոմեթոդներից զատ պետք է նաև կիրառել մակրոմեթոդներ, ինչպիսիք են՝ իտալական, մոնետար և MIMIC մեթոդները։

Ժամանակակից շուկայական հարաբերություններում ավելի ու ավելի են արմատավորվում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված բիզնես գործունեության տեսակները (էլեկտրոնային առևտուր, առցանց խանութներ և խաղատներ, առցանց տաքսի ծառայություններ և այլն), որոնք, համացանցային տիրույթում գրանցվելով և գործարքներ իրականացնելով պայմանավորված, ըստ էության, դուրս են ոչ միայն ՀՀ հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների, այլև նույնիսկ տվյալ սուբյեկտների պետական գրանցում իրականացնող պետական մարմինների վերահսկողությունից։ Նշված ոլորտները, բնականաբար, ստվերային տնտեսությունը բացահայտելու, գնահատելու և վերացնելու տեսանկյունից ներկայումս ամենաառաջնայիններն են, քանի որ դրանց շրջանառությունն աճում է բավական բարձր տեմպերով՝ ընդգրկելով նորանոր

բնագավառներ և գործունեության տեսակներ, իսկ դրանց գործունեությունը վերահսկելի դարձնելու առումով ներկայում առկա են ոչ միայն օրենսդրաիրավական, այլև տեխնիկական բնույթի մի շարք խնդիրներ:

**13.** Քանի որ սովերային տնտեսությունը բազմապիսի դրսևորումներն է ստանում տնտեսության տարբեր ճյուղերում, առավել սովերային են Հայաստանի տնտեսության հետևյալ ոլորտները և հիմնական գործունեության տեսակները:

**13.1.** Ապրանքների և ծառայությունների առևտրի ոլորտում.

ա) ապրանքներ անօրինական ներմուծելը և արտահանելը.

բ) տեղական և արտասահմանյան այն ապրանքների վաճառքը, որոնք պահանջում են պետական գրանցում կամ արտոնագրում, կամ գրանցվել են իրական արժեքից, ներկայացվող չափորոշիչներից մեծ տարբերություններով (օրինակ՝ համապատասխան մարմիններում դեղորայքը գրանցելը).

գ) ապրանքների և ծառայությունների վաճառքը քաղաքացիների կողմից՝ առանց այդ ապրանքների ծագման մասին համապատասխան փաստաթղթերի, ինչպես նաև առանց պետական պարտադիր որևէ վճարում իրականացնելու.

դ) ապրանքների և ծառայությունների համար կրկնակի գների առկայությունը (մեկը՝ փաստաթղթերի համար, մյուսը՝ իրական կանխիկ վաճառքի համար).

ե) արգելված տեղերում առևտուր կազմակերպելը.

զ) գները բարձրացնելու պատրվակով ապրանքներն արհեստականորեն պահեստավորելը՝ դրանք սև շուկայում կամ առավել բարձր գներով վաճառելու նպատակով (գործունեության այս տեսակը առավել բնորոշ էր Հայաստանի անկախության առաջին տարիներին).

է) ձեռնարկության աշխատակիցներին աշխատավարձի դիմաց ապրանքներ և ծառայություններ տրամադրելը՝ հիմնականում առանց համապատասխան հարկեր վճարելու.

ը) ցածրորակ, պետական և միջազգային չափորոշիչներին չհամապատասխանող ու առանց երաշխիքների ապրանքներ և ծառայություններ վաճառելը.

թ) անվճար ծառայություններ տրամադրելը.

ժ) բարտերային առևտուրը.

ի) ողջ տարվա ընթացքում տարատեսակ զեղչեր և ակցիաներ իրականացնելը և այլն:

**13.2.** Դրամական փոխանցումների ոլորտում.

ա) առկա դրամական օրինական փոխանցումների համակարգին զուգահեռ կանխիկ փողի անօրինական շուկա ստեղծելը, որով իրականացվում են ստվերային գործունեությունից ստացվող հասույթների վճարումները (ստվերային ոլորտի շատ ներկայացուցիչներ հաճախ փոխադարձ վճարումներն իրականացնում են՝ տարբեր ապրանքներ և ծառայություններ փոխանակելով՝ փոխադարձ ներմամբ և այլ ճանապարհներով, ոչ միային բանկային համակարգը շրջանցելով, այլև կանխիկ դրամ չօգտագործելով)։

բ) փոխհատուցումներով, զիջումներով փոխադարձ վճարային պարտավորությունները վերացնելը՝ առանց օրենքով նախատեսված համապատասխան գրանցումների.

գ) որպես վճարման միջոց գրեթե բացառապես միայն կանխիկ դրամ կիրառելը և բանկային համակարգը շրջանցելը.

դ) կանխիկ դրամով վճարումներ իրականացնելն առանց սովյալ գործարքները գրանցելու և հարկեր վճարելու:

**13.3.** Դրամավարկային ոլորտում.

ա) արտարժույթ ներմուծելը կամ արտահանելը՝ առանց համապատասխան հայտարարագիր ներկայացնելու.

բ) արտարժույթի սև շուկա ձևավորելը և ստվերային փոխարժեքներով արտարժույթ փոխանակելը, որը նույնպես (հիմնականում բնորոշ էր Հայաստանի անկախության առաջին տարիներին).

գ) «թաքցված» տոկոսադրույքով վարկեր տրամադրելը (տարատեսակ ծառայություններով քողարկված լրացուցիչ գանձում-

ներ, կաշառքներ կամ հովանավորչություն՝ վարկավորման համեմատաբար լավ պայմաններ ստանալու համար և այլն)։

դ) վարկեր տրամադրելը բանկային համակարգից դուրս գտնվող մեխանիզմներով։

ե) տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերն անօրինական օգտագործելը և այլն։

#### **13.4. Աշխատուժի շուկայում.**

ա) գիշերային չգրանցվող աշխատանքը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես «մունլայթինգ», իսկ գործունեության այս տեսակի գոյության հիմնական պատճառներից է տնտեսական գործունեության չգրանցված կամ անօրինական լինելը։

բ) արտաժամյա կամ տոնական և հանգստի օրերին օգտագործվող աշխատանքը՝ առանց օրենքով սահմանված հավելավճարների։

գ) ժամավճարով աշխատողների վարձատրության պահպանմամբ (չբարձրացնելով)՝ աշխատաժամանակն ավելացնելը։

դ) այլ անօրինական աշխատանքներ (օրինակ՝ անչափահասների, հղի կանանց աշխատանքն օգտագործելը և այլն, թեև սրանք ներկայումս արդեն բնորոշ չեն մեր տնտեսությանը)։

#### **13.5. Բնօգտագործման ոլորտում.**

ա) չափազրման և անհրաժեշտ այլ ցուցանիշներ կեղծելով՝ հաշվետվություններում չարտացոլվող հանքարդյունահանումը։

բ) նույն ճանապարհով թափոնների, պոչամբարների ծավալներն ուռճացնելը, ինչպես նաև չկատարված տարբեր ծախսեր ներկայացնելը և հարկվող շահույթը նվազեցնելը։

**13.6. Էլեկտրոնային հարթակներում իրականացվող գործունեության ոլորտում առանց հարկեր վճարելու.**

ա) էլեկտրոնային առևտուր իրականացնելը։

բ) թաքնված գովազդային ծառայությունների մատուցելը և այլն։

#### **13.7. Այլ ոլորտներում.**

ա) ապօրինի շինարարությունը։

բ) բազմաբնակարան շենքերում ընդհանուր օգտագործման տարածքներն ապօրինի վերափոխելը (օրինակ՝ անհատական բնակարանի տարածքն ընդարձակելը՝ ընդհանուր օգտագործման միջանցքներն ապօրինի յուրացնելով)։

գ) չգրանցված սուբյեկտների կողմից արտադրություն կամ ծառայություններ մատուցելը։

դ) ապրանքներով և ծառայություններով աշխատավարձ վճարելը։

ե) պետության կամ հասարակության միջոցներն ու ժամանակն անձնական կարիքների համար օգտագործելը։

զ) պետության տնօրինած բնապահպանական տարածքներն անօրինական օգտագործելը։

է) հասարակական կամ բարեգործական նպատակներով քողարկված դրամահավաքը կամ իրական գնից մի քանի անգամ ավել գնով ապրանքներ իրացնելը և այլն։

**14.** Ակնհայտ է, որ ստվերային տնտեսությունը՝ բազմապիսի դրսևորումներով, քայքայիչ հետևանքներ է թողնում տնտեսական համակարգի վրա, ուստի ստվերային տնտեսության գոյությունը և դրա ծավալների ընդարձակումը մի շարք պատճառներով մտահոգում է ոչ միայն տնտեսագետներին, այլև իշխանություններին և հասարակությանը. կարելի է առանձնացնել հետևյալները։

ա) Հարկեր գանձելու մեխանիզմները խաթարելը և պետության հարկային եկամուտները պակասեցնելը, որոնք առաջացնում են պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման խնդիրներ։ Քանի որ տնտեսագետների մի ստվար հատված ընդունում է, որ ստվերային տնտեսության հիմնական պատճառներից են պետության կիրառած հարկային և մաքսային բարձր տոկոսադրույքները, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտները գանձելու՝ պետության իրականացրած կոշտ քաղաքականությունը, ուրեմն, հարկային բարձր տոկոսադրույքները որոշիչ են տնտեսվարող սուբյեկտների համար ստվերային գործունեություն իրականացնելիս։ Այս առումով, զար-

գացող ստվերային տնտեսությունը ենթադրում է պետական եկամուտների նվազեցում, որն էլ մեծացնում է պետական բյուջեի պակասուրդը: Այն առավել ցայտուն է արտահայտվում թույլ ֆիսկալ (գանձարանային) դիրք ունեցող անցումային տնտեսություններում, ինչպիսին է, օրինակ, Հայաստանի տնտեսությունը: Չկարողանալով գանձել հարկային եկամուտները՝ պետությունը շատ հաճախ թերանում է կատարել բազմաթիվ պարտավորություններ, որն էլ երկրում կարող է հանգեցնել սոցիալական խոշոր ցնցումների:

բ) Մակրոտնտեսական մակարդակով տնտեսությունում ստվերային խոշոր հատվածի առկայությունը կասկածելի է դարձնում մակրոտնտեսական այնպիսի պաշտոնական ցուցանիշներ ճշգրտությունը, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը, գործազրկության մակարդակը, ազգային եկամուտը, սղաճը և տնտեսական քաղաքականության իրականացնելու այլ կարևոր ցուցանիշներ: Հետևաբար, տնտեսության ոչ ամբողջական տեղեկատվության վրա հիմնված՝ պետության իրականացրած ցանկացած տնտեսական քաղաքականություն կարող է սխալ լինել, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ այլ հետևանքներ ունենալ:

Կարելի է առանձնացնել ստվերային տնտեսության՝ ՀՆԱ-ի վրա ազդելու հետևյալ հիմնական պատճառները.

- հասարակության տարբեր պահանջմունքներ բավարարող ու ստվերային տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը երկրի ամբողջական արդյունքում չհաշվարկվելու պատճառով ՀՆԱ-ն թերհաշվարկվում է.

- եթե տնտեսության ստվերային հատվածն ավելի արագ է աճում, քան տնտեսության պաշտոնական հատվածը, ապա պաշտոնապես հաշվարկված ՀՆԱ աճի տեմպի ցուցանիշը չի արտահայտում տնտեսության աճի տեմպի իրական մակարդակը.

- խեղաթյուրվում է ՀՆԱ կառուցվածքը տնտեսության ոլորտների, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման առումով և այլն:

Ըստ ազգային հաշիվների ցուցանիշների հաշվարկման միջազգային սկզբունքների՝ տնտեսության ամբողջական արդյունքը պետք է ներառի ինչպես տնտեսության պաշտոնական հատվածում, այնպես էլ ստվերային տնտեսությունում, ներառյալ՝ անօրինական և թաքնված ոլորտներում, արտադրված ապրանքները և ծառայությունները:

զ) Ստվերային տնտեսությունն անհավասար տնտեսական և մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսության պաշտոնական և ոչ պաշտոնական հատվածներում գործող ձեռնարկությունների համար: Շուկայական տնտեսության արդյունավետ գործունեություն ապահովելու համար առաջնային պայման է տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար մրցակցությամբ տնտեսական և իրավական հավասար պայմաններ ստեղծելը:

Խնդիրն առավելապես սրվում է հատկապես օտարերկրյա ներդրումներ ներգրավելու տեսանկյունից: Ցանկացած օտարերկրացի ներդնող նոր ներդրումներ կատարելուց առաջ, բացի տնտեսական և քաղաքական համապատասխան վերլուծություն և հաշվարկներ կատարելուց, ուսումնասիրում է նաև տվյալ երկրում տնտեսական գործունեության համար ստեղծված միջավայրը, որտեղ որոշիչ գործոն են տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար տնտեսական հավասար պայմանները: Ոչ մի լուրջ, արդյունավետ օտարերկրացի ներդնող ներկայումս որևէ տնտեսական գործունեություն չի իրականացնի տնտեսության մի այնպիսի ոլորտում, որտեղ ստվերային հատվածը մեծ ծավալի է հասնում, և որտեղ ինքը տնտեսապես անհավասար պայմաններում կգտնվի՝ հարկային վճարումներից խուսափելով տնտեսական ծախքերը կրճատած և մրցակցային ավելի բարենպաստ վիճակում գտնվող ստվերային ոլորտի ձեռնարկության համեմատությամբ: Այս տեսանկյունից ստվերային

տնտեսությունը դառնում է օտարերկրյա ներդրումների ներգրավելու հիմնական խոչընդոտներից մեկը:

դ) Ստվերային տնտեսությունը խաթարում է նաև աշխատուժի արդյունավետ վերաբաշխումը տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Ստվերային ոլորտում աշխատողները չեն վճարում իրենց հարկային և սոցիալական ապահովության պարտադիր վճարումները, և հայտնվում են ավելի բարենպաստ ֆինանսական իրավիճակում, քան տնտեսության պաշտոնական հատվածում զբաղվածները: Ընդարձակվող ստվերային տնտեսությունը ենթադրում է աշխատուժի պահանջարկի ավելացում: Հաշվի առնելով այն, որ հարկեր չվճարելով՝ ստվերային ոլորտում աշխատող մարդկանց տնօրինած իրական եկամուտը ավելի մեծ է, կարելի է ենթադրել, որ ստվերային տնտեսության ընդարձակմամբ տեղի կունենա աշխատուժի որակյալ մասի հոսք տնտեսության պաշտոնական հատվածից ոչ պաշտոնականը՝ նվազեցնելով տնտեսական արդյունավետությունը պաշտոնական հատվածում:

ե) Քանի որ ստվերային գործունեությունը հաճախ անօրինական և քրեածին է լինում, ապա ստվերային տնտեսությունը շատ դեպքերում հանգեցնում է տարբեր բախումների: Անբարեխիղճ մրցակցությունն առկա է ոչ միայն տնտեսության պաշտոնական, պաշտոնական և ստվերային հատվածների, այլև հենց ստվերային ոլորտի ձեռնարկությունների միջև: Պետք է նշել, որ ի տարբերություն տնտեսության պաշտոնական հատվածում գործող ձեռնարկությունների, որոնք վճարելով հարկերը, միաժամանակ օգտվում են հասարակական «ապրանքներից», տնտեսության ստվերային հատվածի՝ հատկապես անօրինական գործունեությամբ զբաղված ձեռնարկությունները զրկված են այդ հասարակական «ապրանքների և ծառայությունների» մեծ մասից օգտվելու հնարավորությունից: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ոստիկանության, դատարանների և իրավապահ այլ մարմինների ծառայություններից օգտվելու հնարավորություններին: Այս պարագայում ստվերային գործունեու-

թյամբ զբաղված տարբեր ձեռնարկությունների միջև ծագող վեճերը լուծելու միակ տարբերակը ուժ կիրառելն է: Ստվերային բիզնեսը պաշտպանելու նպատակով ստվերային ոլորտի շատ ձեռնարկատերեր ստեղծում են իրենց հանցավոր խմբերը. իբրև հետևանք՝ ավելանում է հանցագործությունների քանակը, և կասկածելի է դառնում հասարակության կայունությունը:

Պետք է նշել, որ ստվերային տնտեսությունում հանցավոր խմբերի ներգրավվածությունն առաջացնում է նաև մենաշնորհային հիմնախնդիրներ: Ակնհայտ է, որ հանցավոր խմբերը ձգտում են առավելագույնի հասցնել իրենց վճարվող գումարները, որը հնարավոր է միայն որևէ ոլորտում մենաշնորհային դիրք ունենալու դեպքում: Օրինակ՝ որևէ տարածքում միայն մեկ ռեստորանի գոյությունը շատ ավելի շահութաբեր է տիրոջը, քան նույն տարածքում մի քանի ռեստորանների առկայությունը: Հանցավոր խմբերն ուժային անօրինակյան մեթոդներով կարող են արգելել կամ սահմանափակել տվյալ տարածքում նոր ռեստորաններ բացելը՝ նպաստելով մենաշնորհներ զարգանալուն: Իհարկե, այս դրույթը համապատասխանում է այն իրավիճակին, երբ հանցավոր խումբը հենց ինքն է կառավարում այդ հաստատությունը: Եթե հանցավոր խումբը միայն վերահսկում է այդ տարածքը և ռեկետով վճարներ գանձում այդտեղ գործող հաստատություններից, ապա ամենևին էլ շահագրգռված չի լինի տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի կրճատմամբ: Մյուս կողմից՝ հատկանշական է նաև այն փաստը, որ հանցավոր խմբերի համար առավել հեշտ է վերահսկել մեկ մենաշնորհային, քան բազմաթիվ փոքր ձեռնարկություններ:

գ) Ստվերային տնտեսությունը բացասաբար է ազդում նաև տնտեսական գործունեությամբ զբաղված մարդկանց վարքագիծ վրա: Այս ոլորտում աշխատող մարդիկ դադարում են տարբերակել տնտեսական գործունեության ընթացքում թույլատրելի և արգելված նորմերը. սա այնուհետև տարածվում է ողջ հասարակության վրա՝ խաթարելով հասարակական կարգը:

15. Ընդհանուր առմամբ հասարակության և տնտեսության անցումային փուլում ստվերային տնտեսությունն ունի ոչ միայն բացասական, այլև դրական, որոշ կայունացնող դեր և հետևանքներ. հիմնականները ներկայացվում են ստորև:

ա) Տնտեսվարող սուբյեկտների տեսանկյունից ստվերային տնտեսության առկայությունը հնարավորություն է ստեղծում տնտեսական գործունեության ավելի արդյունավետ մեթոդներ ներդնելու և կիրառելու համար: Հարկեր չմուծող, ստվերային գործունեությամբ զբաղվող ձեռնարկատերը մեծացնում է ձեռնարկության շահույթը, որը տնտեսության պաշտոնական հատվածում գործող ձեռնարկությունների համեմատությամբ լավ մրցակցային առավելություն է տալիս, որն էլ հնարավորություն է ընձեռում նոր տեխնոլոգիաներով և արտադրության նոր ձևերով ավելացնել տնտեսական արդյունավետությունը:

բ) Ստվերային տնտեսության կայունացնող հաջորդ դերն այն է, որ չնայած անօրինական լինելուն՝ այն նոր աշխատատեղեր է ստեղծում բնակչության համար՝ տնտեսության կամ բնակչության կենսամակարդակի անկման պայմաններում մեղմելով սոցիալական լարվածությունը: Նոր աշխատատեղեր և եկամուտ ստեղծելու առումով ստվերային տնտեսությունը սոցիալական կարգավորիչ դեր է կատարում՝ որոշ չափով նվազեցնելով բնակչության տարբեր խավերի միջև առկա եկամուտների ճեղքվածքը և թուլացնում հասարակության սոցիալական լարվածությունը:

գ) Ստվերային տնտեսությունը մասնավոր ֆինանսական միջոցների կուտակման նոր աղբյուր է. ստեղծված միջոցները կարող են օգտագործվել հասարակության տարբեր խնդիրներ լուծելու համար: Այսօր ակնհայտ է, որ Հայաստանում տարբեր քաղաքական և հասարակական գործունեություններ, ինչպես նաև մշակույթի ոլորտում բարեգործությունը ֆինանսավորելու համար օգտագործվում են նաև ստվերային տնտեսությունում ստեղծված գումարները՝ նվազեցնելով բյուջեի ծախսային մասը: Այդ առումով ստվերային տնտեսությունը քաղաքացիական հա-

սարակություն ստեղծելու համար անհրաժեշտ միջոցների աղբյուր է, չնայած այդ միջոցները շատ դեպքերում ստեղծվում են անօրինական գործունեությամբ:

դ) Ստվերային տնտեսությունը նպաստում է նաև տնտեսական կյանքն ակտիվացնելուն և մեծացնում է տնտեսության պաշտոնական հատվածի ամբողջական պահանջարկը, քանի որ ստվերային տնտեսությունում ստեղծված եկամտի մեծ մասը, միևնույն է, ծախսվում է տնտեսության պաշտոնական հատվածում:

Ջարգացման ներկա փուլում հույժ կարևորվում է ստվերային տնտեսության կրճատմանն ու հարկային կարգապահության խստացմանն ուղղված արդյունավետ, հետևողական հարկային վարչարարություն իրականացնելը: Հարկային և մաքսային վարչարարությունը բարեփոխումները պետք է միտվեն՝ ընդլայնելու հարկային և մաքսային մարմինների կարողությունները, որոնք առաջնահերթորեն կուղղվեն պետական բյուջեի մուտքերն ավելացնելուն՝ ստվերային շրջանառությունները բացահայտելու և կրճատելու շնորհիվ: Ստվերի առաջանալու համակարգային ռիսկերը կանխարգելելու, կրճատելու խնդիրը միայն հարկային և մաքսային մարմնի վարչարարության խնդիրը չէ: Գործընթացին պետք է ներգրավվեն բոլոր պետական շահառու կառույցները, և այդպիսով, հարկային արտոնությունները, օրենսդրական, այդ թվում ոլորտային կարգավորումները հարկ վճարողներին հարկեր վճարելուց խուսափելու կամ հարկման բազան արհեստական նվազեցնելու հնարավորություն չեն ընձեռի: Վերջին տարիներին հարկային մարմինը, ըստ հարկ վճարողների օրինապահության, կիրառում է տարբերակված վարչարարություն: Բարեփոխումներ իրականացվել են երկու ուղղությամբ՝ օրենսդրական և վարչարարական: Հարկային համակարգում նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառմամբ էականորեն բարելավվել է վերլուծական կարողությունների և էլեկտրոնային կառավարման համակարգը: Շեշտադրվում է ռիսկային հարկ վճարողներին և կատարված

իրավահաստումները բացահայտելը: Աշխատանքները հետևողականորեն իրականացնելը կնպաստի հարկ վճարողների իրենց կարողությունները գնահատելու համակարգը ամրապնդելուն, հանրային հսկողությունն ընդլայնելուն:

**16.** Հարկային և մաքսային մարմնի բարեփոխումները շարունակական իրականացնելու տեսանկյունից անհրաժեշտ է.

**16.1.** ամրապնդել հարկային մարմին և հարկատու երկխոսությունը.

**16.2.** հնարավորինս կրճատել պետական համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը.

**16.3.** բազմաթիվ նախագգուշացումներից հետո գործունեության վարքագիծը չփոխած հարկատուի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ՝ անգամ խնդիրն հանրայնացնելով.

**16.4.** հարկային մարմնի վերահսկողական կարողությունների զարգացում՝ նորագույն տեխնոլոգիաներ կիրառելով.

**16.5.** սովերը խոր արմատներ ունի խոշոր բիզնեսում, և հարկային վարչարարության բարեփոխումները հիմնականում ուղղված են առկա ռիսկերը կրճատելուն, այնուամենայնիվ, պետք է խիստ վերահսկողական մեխանիզմները, պատժամիջոցները գուցորդվեն խոշոր բիզնեսն առողջ մրցակցային և օրենսդրական միջավայր տեղափոխելով, գործունեությանն աջակցելով:

**17.** Սովերային շրջանառությունը կրճատելու հիմնախնդիրը լուծելը օրենսդրաիրավական տեսանկյունից իրականացնել հետևյալ տարբերակներով՝

**17.1.** թույլատրել, որ օրենքները, ինչպես նախկինում, խախտվեն (անգործության տարբերակ).

- ստիպել, որ տնտեսվարողներն իրենց գործողությունները համապատասխանեցնեն օրենքներին ու նորմատիվ մյուս ակտերի պահանջներին՝ կիրառելով նաև այդ գործընթացը վերահսկող բոլոր հնարավոր գործիքները.

- վերանայել օրենքներով նախատեսված խիստ պահանջները՝ բարեխիղճ սուբյեկտների պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով.

- նպատակամետ ներազդմամբ փոփոխել և կատարելագործել այն գործոնները և դրանց ազդեցությունը, որոնք մարդկանց շահադրդում են՝ օրենքները խախտելու:

**17.2.** Օրենսդրական դաշտում առկա բացերի և չկարգավորված ոլորտների համար, ըստ էության, մեծ աշխատանք է կատարվել, և ներկայումս այս ոլորտում առկա հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ օրենսդրական ակտերի կատարելագործման (համալրման) և այդ ակտերը կիրառելու պետական վերահսկողության: Ուստի եթե առաջին խումբ հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ անհրաժեշտ է մշակել նոր օրենսդրական ակտեր կամ գործող ակտերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ, ապա երկրորդ խումբ հիմնախնդիրները պետք է լուծվեն օրենքների համընդհանուր և համատարած կիրարկմամբ ու հատկապես կոռուպցիայի դեմ պայքարով:

**17.3.** Ստվերային տնտեսության դեմ պայքարի ռազմավարության հիմնական բովանդակությունը պետք է լինի հետևյալը:

ա) Ստվերային տնտեսությունը, ընդհանուր առմամբ, մեծ չարիք է հասարակության համար, սակայն զարգացման արդի փուլում այն ունի նաև որոշ դրական կողմեր, որոնք չի կարելի անտեսել դրա դեմ մղվող պայքարում:

բ) Ստվերային տնտեսության ծավալները կրճատելը հնարավոր է և պետք է իրականացվի աստիճանաբար՝ եկամտի միակ և քրեորեն հետապնդելի աղբյուրից զրկված սուբյեկտներին աշխատանքով և օրինական եկամուտ ստանալու աղբյուրներով ապահովելով կամ դրանք ձևավորելու հնարավորություններ ստեղծելով:

գ) Ստվերային տնտեսության դեմ պայքարի շնորհիվ օրինական և թափանցիկ գործունեության դաշտ տեղափոխված անձանց եկամուտները պետք է բավարարեն՝ ապահովելու նոր-

մալ և սպառողական իրական զամբյուղի արժեքից ոչ ցածր մակարդակի կենսակերպ:

դ) Այս պայքարը պետք է հանգեցնի հասարակության միջին խավի տեսակարար կշիռը մեծացնելուն (ըստ եկամուտների և ծախսերի):

**18.** Ստվերային տնտեսության դեմ պայքարի համատեքստում առաջարկվում են ընդհանրական բնույթի հետևյալ միջոցառումները:

ա) Համապատասխան վարչարարական և կազմակերպչական միջոցառումներով ընդարձակել տնտեսության հարկման բազան և կրճատել հարկային բոլոր «սահմանային դրույքաչափերը»՝ այդպիսով նվազեցնելով տնտեսվարող սուբյեկտների՝ ստվերային ոլորտում գործունեություն ծավալելու տնտեսական շահագրգռվածությունը: Այս գործողությունները կարող են ներառել նաև գործող հարկային արտոնությունները վերացնելը (բացառությամբ մանր և միջին ձեռնարկատերերի համար), քանի որ դրանք ստվերային գործիչներին պետական հատվածից «աջակցող ընկերների» միջամտությամբ մեծ չարաշահումների տեղիք են տալիս:

բ) Մշակել և իրականացնել հարկային վարչարարությունը պարզեցնելուն ուղղված գործողությունների ծրագիր ինչպես ամբողջ հարկային ոլորտի, այնպես էլ առանձին հարկատեսակների համար՝ առկա «բյուրոկրատական» քաշքշուկները վերացնելով, մասնավորապես՝

- իրականացնել հարկային հայտարարագրերի և հարկային տեսչությունների՝ պահանջվող ձևերը պարզեցնելու միջոցառումների ծրագիր՝ հիմնված հաշվապահական հաշվառման միջազգային չափորոշիչներով իրականացված հաշվապահական բարեփոխումների արդյունքների վրա.

- իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների պարզ լուսաբանում ու հասարակական իրազեկում՝ այս նպատակի համար օգտագործելով նաև ժամանակակից տեղեկա-

տվական միջոցները (համացանց, էլեկտրոնային փոստ և այլն): Արդարացված է նաև հասուկ պետական մարմին ստեղծելը (գուցե որևէ գործող կառույցում համապատասխան ստորաբաժանման տեսքով), որը կկենտրոնացնի չգրանցված տնտեսվարող սուբյեկտներին պետական գրանցում ստանալու վերաբերյալ համապատասխան նպատակային տեղեկատվություն նախապատրաստելն ու մատուցելը, ինչպես նաև տնտեսության կանոնավոր հատվածում գործելու առավելություններն ու պետական օրինական հովանավորչությունից ստացվող օգուտը բացատրելը:

- պարբերաբար իրականացնել հարկային և մաքսային համակարգերի աշխատակիցների վերապատրաստում և ասեստավորում, արդյունքների մասին լայնորեն տեղեկացնել հասարակությանը՝ նպատակ ունենալով բարձրացնել համակարգի աշխատակիցների մասնագիտական կարողությունները:

գ) Պարզեցնել և հստակ կանոնակարգել հարկային դաշտի վերահսկողության, եկամուտների ու գույքի հայտարարագրման և ներմուծվող ապրանքների մաքսագերծման համակարգերը՝ նվազագույնի հասցնելով այդ ոլորտներում սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունը: Կարևոր է նաև տնտեսվարող սուբյեկտներին հարկային և մաքսային ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների, պահանջվող նոր փաստաթղթերի ներդրման, ինչպես նաև վերահսկող մարմինների իրավունքների և պարտականությունների մասին անընդհատ և կանոնավոր տեղեկացնելը՝ պետական պաշտոնյանների անհիմն և սուբյեկտիվ ռոտնձգությունները նվազագույնի հասցնելու համար:

դ) Կարևորվում է՝

- մեղմացնել օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները նախկինում կատարված հարկային և մաքսային օրենսդրության ոչ դիտավորյալ խախտումների մասին կամավոր հայտնող տնտեսվարող սուբյեկտների համար՝ այդ նպատակով

համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով հարկային օրենսգրքում.

- կազմակերպել հեռուստատեսային և ռադիոհաղորդումների շարք, հրատարակել վերլուծական և մասնագիտական զանազան հոդվածներ, ինչպես նաև օգտագործել այլ միջոցներ՝ բնակչության և սովետային ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների իրավագիտակցությունը բարձրացնելու և տնտեսության պաշտոնական հատվածում գործելու առավելությունները հասարակայնորեն ընկալելի դարձնելու նպատակով:

ե) Սովետային տնտեսության դեմ պայքարի հաջորդ առաջարկվող քայլը պետք է ուղղվի հարկային և մաքսային վերահսկողական ու կարգապահական մեխանիզմները խստացնելուն, որը կհանգեցնի այս ոլորտների վարչարարության արդյունավետությունը ավելացնելուն: Այս նպատակով առաջարկվող որոշակի քայլերից են.

- հարկային և մաքսային փաստաթղթային ստուգումների հաճախականությունն ավելացնելը՝ միաժամանակ բացառելով տարբեր իրավապահ մարմինների անհարկի կամ կրկնակի ստուգումներ իրականացնելը.

- հարկային և մաքսային համակարգերի փոխհամագործակցությունն ուժեղացնելը՝ հատկապես քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործարքների վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելիս.

- հարկային տեսուչների վերահսկած տարածքները պարբերաբար և հաճախակի փոփոխելը՝ բացառելու նրանց և այդ տարածքի տնտեսվարող սուբյեկտների անօրինական գործարքները.

- ստուգումներ իրականացնող աշխատակիցների մասնագիտական որակավորումը բարձրացնելը՝ ոլորտի աշխատակիցների պարտադիր վերապատրաստմամբ և արտոնագրման համակարգ ներդնելով.

- հարկային վեճերի դեպքում դատարան դիմելու գործընթացը կատարելագործելը և պարզեցնելը:

զ) Ուժեղացնել հարկային ոլորտում այլ երկրների հետ (հատկապես հիմնական առևտրային գործընկերների) փոխհամագործակցությունը, մասնավորապես՝ հարկային և մաքսային տեղեկատվություն փոխանակելու, տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

է) Կենտրոնացնել ստվերային տնտեսության դեմ պայքարի բոլոր ուժերը և ստեղծել ամբողջական, ընդգրկուն տեղեկատվական բազա՝ ներառելով ազգային վիճակագրության ծառայությունը, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները, պետական եկամուտների կոմիտեն, ՀՀ ոստիկանությունը և շահագրգիռ այլ մարմիններ:

ը) Հայաստանի ստվերային տնտեսությունը կրճատելուն կարող են նպաստել նաև տարբեր փոքր և միջին վարկային ծրագրերը (միկրովարկավորումը), որոնք ստվերային ոլորտում գործող բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների հնարավորություն կընձեռեն ստանալու անհրաժեշտ ֆինանսավորում, աճելու և դառնալու «նորմալ» ձեռնարկություններ. առաջարկվում է հնարավորինս ընդլայնել մատչելի միկրովարկավորման ծրագրերի շրջանակը:

թ) Հաջորդ քայլը պետք է ներառի պետության՝ տնտեսական կարգավորման ոլորտում ապակենտրոնացման քաղաքականություն իրականացնելը ոչ թե զուտ վարչարարական փոփոխությունների տեսքով, այլ համայնքներին իրական իշխանական լծակներ փոխանցելով: Այդպիսով, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կձևավորվի առողջ մրցակցային դաշտ՝ ուղղված տնտեսական գործունեության համար լավագույն միջավայր ստեղծելուն: Տարածքների տնտեսական զարգացմամբ շահագրգռված՝ համայնքները կիրականացնեն իրենց իրավասության ներքո գտնվող կարգավորման բոլոր անհրաժեշտ փոփոխությունները՝ առավել բարենպաստ ձեռնարկատիրական գործունեության դաշտ ստեղծելու և այլ համայնքներից տնտեսվարող սուբյեկտներին իրենց վերահսկման դաշտ ներառելու և ու համայնքում զանձվող հարկային եկամուտներն ավելաց-

նելու համար, ուստի կարևորվում է ապակենտրոնացմանն ուղղված համապատասխան սահմանադրական և օրենսդրական փոփոխություններ իրականացնելը.

- տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց տարածքներում տնտեսական գործունեությունը կարգավորող իրական լծակներ տրամադրելը՝ գործող օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ իրականացնելով.

- համայնքների տարածքներում տնտեսական գործունեություն ծավալելու համար տրվող թույլտվությունների ինստիտուտը հստակեցնելը և զարգացնելը:

19. ՀՀ հարկային հարաբերությունները կարգավորելու նշանակալի քայլ էր 2016 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ հարկային օրենսգիրքն ընդունելը, որն ուժի մեջ է մտել և գործում է 2018 թ. հունվարի 1-ից: Այն ստվերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում, ըստ էության, լուծել է բազմաթիվ օրենսդրական խնդիրներ, որոնք նախկինում ստվերային տնտեսությունն ընդլայնելու խթաններ էին, քանի որ ստվերային տնտեսության գործիչները լայնորեն օգտագործում էին օրենքներով չկարգավորված հարցերը կամ թերի կարգավորումները՝ հարկեր վճարելուց խուսափելով կամ եկամուտները թերհայտարարագրելով: Ուստի հարկային օրենսգիրքն ընդունելու առավելություններից կարելի է համարել հատկապես հարկային վարչարարության գրեթե բոլոր հարցերն օրենսդրորեն պատշաճ լուծելը: Մրանից ելնելով՝ կարելի է փաստել, որ հարկային վարչարարությանն առնչվող ստվերային շրջանառության առաջանալու ռիսկերը՝ օրենսդրական ձևակերպումներով, ըստ էության, չեզոքացված են, և այս հատվածով կարող է ստվերայնություն առաջանալ կամ ընդլայնվել միայն կոռուպցիոն ռիսկեր ի հայտ գալու և հարկային օրենսգրքի պահանջները չկիրառելու հետևանքով:

20. Չնայած ժամանակի ընթացքում հարկման հատուկ կամ այլընտրանքային համակարգերը սահմանափակելուն (այս ուղղությամբ ևս մեկ քայլ կատարվեց նաև հարկային օրենսգրքի

ընդունմամբ)՝ այնուամենայնիվ, ՀՀ-ում այս հարկատեսակների քանակը բավականին շատ է, որն էլ օբյեկտիվորեն խոչընդոտում է հարկման մեկ միասնական համակարգ ձևավորելու գործընթացը: Բնչ վերաբերում է այս համակարգերով հարկման ենթակա գործունեության տեսակների քանակին, ապա դրանք բավական շատ են և ընդգրկում են գրեթե ողջ փոքր և մասամբ՝ միջին բիզնեսի ոլորտը: Մտվերայնության տեսանկյունից հարկման հատուկ համակարգերի հանրածանոթ թերությունն այն է, որ դրանք, որպես կանոն, հաշվի չեն առնում կազմակերպությունների իրականացրած տնտեսական գործունեության արդյունքները, կամ էլ հարկային դրույքաչափը կիրառվում է դրանց ընդհանուր շրջանառության նկատմամբ՝ պարունակելով կրկնահաշվարկներ և այնպիսի ծախսեր, որոնք հարկման ընդհանուր համակարգ կիրառելու պայմաններում չէին ներառվի հարկման բազայում: Այդպիսով, հարկման հատուկ համակարգով աշխատող սուբյեկտների՝ պետական կամ համայնքային բյուջեներ վճարվող հարկերի գումարները զգալիորեն տարբերվում են այն ենթադրվող գումարներից, որոնք կվճարվեին բյուջեներ՝ հարկման ընդհանուր համակարգի պայմաններում, ընդ որում՝ այդ գումարների տարբերությունը՝ կախված հարկման ելակետային տվյալներից (ցուցանիշներից), հարկման հիմք հանդիսացող շրջանառության նվազագույն կամ առավելագույն շեմերի հիմնավորվածության մակարդակից և այլ գործոններից, կարող է լինել ինչպես բյուջեների, այնպես էլ կազմակերպությունների օգտին, չնայած հարկման հատուկ համակարգեր կիրառելու դեպքում այս տարբերությունը, որպես կանոն, լինում է տնտեսվարողների օգտին՝ բյուջետային եկամուտների թերի գանձելու հաշվին: Հետևաբար, հարկման հատուկ համակարգեր կիրառելով՝ տնտեսական գործունեության փաստացի արդյունքներով վճարման ենթակա գումարներից բյուջետային եկամուտների թերի գանձված մասը կարելի է ֆնորոշել որպես «օրինական ստվերային եկամուտ»՝ այդ համակարգով աշխատող կազմա-

կերպությունների համար, և որը, ըստ էության, հարկային արտոնության տարատեսակ է:

Հասկանալի է, որ ներկայացված իրավիճակը ոչ թե միտումնավոր ձևավորված համակարգ է, այլ պայմանավորված է զարգացող երկրներին բնորոշ առանձնահատկություններով և պետական կարգավորման համակարգի թերություններով, բիզնես կազմակերպելու և կառավարման փորձի պակասով և օբյեկտիվ մի շարք հանգամանքներով, որոնք թույլ չեն տալիս լիարժեքորեն կիրառել հարկման ընդհանուր համակարգը: Այդուհանդերձ, որպես հարկային քաղաքականության ռազմավարական ուղղություն՝ անհրաժեշտ է հնարավորինս արագ ձեռքագատվել և աստիճանաբար անցնել միասնական հարկման ընդհանուր համակարգին, որով էլ հնարավոր կլինի վերացնել «օրինական սովերային տնտեսության» այս հատվածը: Մյուս կողմից՝ հարկ է նաև նկատի ունենալ, որ այսպիսի ռազմավարության գործնական կիրառությամբ փոքր և միջին բիզնեսի վրա բացասական փոփոխության ազդեցությունը չեզոքացնելու առումով անհրաժեշտ է ապահովել մի շարք այլ պայմաններ ևս, մասնավորապես՝ արտադրության և շրջանառության համատարած և պարտադիր փաստաթղթավորում, հարկային վարչարարության բնագավառում խտրական մոտեցումների և կոռուպցիայի բացառում, մրցակցային առողջ միջավայրի ապահովում և այլն, որոնց ուղղությամբ պետական համապատասխան քաղաքականությունները նույնպես պետք է բարեփոխվեն և կատարելագործվեն:

**21.** Հարկային քաղաքականության և սովերային տնտեսության անմիջական կապի առումով Հայաստանում նկատելի է հարկային արտոնությունների տեսակների ու ծավալների մեծ շրջանակ, որը սահմանելու նպատակը ոչ միայն անցումային փուլում տնտեսվարողներին «շնչելու» հնարավորություն տալն է, այլև նրանց ներդրումային ակտիվության մակարդակը բարձրացնելը, նոր աշխատատեղեր ստեղծելը և այլն, որոնք պակաս կարևոր չեն պետության համար: Հետևաբար, հարկային արտո-

նությունները հիմնավորված կարելի է համարել միայն այն դեպքերում, երբ դրանք հանգեցնում է նոր ներդրումներ ներգրավելուն, նոր աշխատատեղեր ստեղծելուն և, ի վերջո, ժամանակ անց ՀՆԱ-ն ավելացնելուն:

Տարիներ շարունակ ՀՀ-ում հիմնական հարկերի համար սահմանվել և կիրառվել են հարկային արտոնությունների բազմաթիվ տեսակներ, որոնք, ըստ էության, անվտուխ «տեղափոխվեցին» նաև ՀՀ հարկային օրենսգիրք և շարունակում են գործել: Այդ արտոնությունների դրամական արտահայտությամբ հանրագումարային մեծությունը կամ պետության հարկային ծախսերի մակարդակը (որ պաշտոնապես հաշվարկվում են որպես գործող հարկային արտոնությունների հետևանքով պետական բյուջե չգանձվող (պակաս գանձվող) հարկային եկամուտներ կամ այդ եկամուտների չափով պետության կրած այլընտրանքային ծախսեր) ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով 2018 թ. միայն երեք հարկատեսակներով պետք է կազմի մոտ 395,5 մլրդ դրամ: 2016-2017 թթ. նշված հարկատեսակներով հարկային ծախսերի ընդհանուր գումարները համապատասխանաբար կազմել են 340,3 մլրդ դրամ կամ ՀՆԱ 6.99 տոկոսը, և 381,5 մլրդ դրամ կամ ՀՆԱ 7.0 տոկոսը:

Անշուշտ, հարկային արտոնություններ տրամադրելու հետևանքով բյուջետային եկամուտների կորուստը ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում բավականաչափ մեծ է. այն կարող է արդարացվել միայն հարկային արտոնություններով ստացվելիք համարժեք օգուտներ ապահովելու պարագայում: Մյուս կողմից, կարծում ենք, հատկապես խորհրդարանական կառավարման անցման համատեքստում կարևոր է նաև տրամադրված հարկային, մաքսային և մյուս արտոնություններն ու դրանց արդյունավետությունը պարբերաբար գնահատելը (հնարավորության դեպքում՝ մշտադիտարկման. մինչ այժմ երբևէ չի իրականացվել), որի համար առաջիկա տարում նպատակահարմար կլինեին առանձնահատուկ ուսումնասիրություններ՝ պարզելու, թե ամենատարբեր արտոնություններ տրամադ-

րելով՝ փաստացի ի՛նչ օգուտներ է ստացել պետությունը, ո՛ր հարկային արտոնություններն են արդարացված, ինչպե՛ս են դրանք ազդել տնտեսական աճի և տնտեսության ճյուղային կառուցվածքի վրա և այլն, որոնք էլ թույլ կտան փաստարկված ճշգրտել հարկային քաղաքականության այս կարևոր հատվածը:

Նշված գործընթացի կարևորությունն ու դերն ընդգծելու նպատակով բավական է նշել, որ վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող ներդրումներով հիմնականում արձանագրվում են նվազման միտումներ: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով 2018 թ., նախորդ տարվա համեմատությամբ, ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշի աճը կանխատեսվել է ընդամենը 0.2 տոկոս և պետք է կազմի ՀՆԱ 18.4 տոկոսը՝ 2017 թ. 18.2 տոկոսի դիմաց: Ընդ որում, առաջիկա տարվա այս ցուցանիշը զիջում է 2014 թ. մակարդակին 2.5 տոկոսային կետով, որն էլ վկայում է ներդրումների մակարդակի նվազման մասին<sup>66</sup>:

Հետևաբար, ելնելով վերը նշվածից, անհրաժեշտ է առանձնահատուկ ուսումնասիրություններ կատարել սահմանված հարկային արտոնություններ կիրառելու արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից, ընդ որում՝ ըստ առանձին հարկատեսակների, և դրանց հատվածով՝ ըստ առանձին արտոնությունների, և աստիճանաբար վերացնել բոլոր այն հարկային արտոնությունները, որոնք վերջին 5-10 տարիներին տնտեսական կամ բյուջետային դրական ազդեցություն չեն արձանագրում:

22. Սովերային շրջանառության ավելանալու ամենամեծ տնտեսական շարժառիթը եկամտային հարկի դրույքաչափերն են: Հարկային օրենսգրքի ընդունմամբ եկամտային հարկի դրույքաչափերը ոչ միայն որոշ չափով բարձրացվեցին, այլև ավելի խորացվեց այդ դրույքաչափերի աճի մակարդակը: Այսպես, եթե մինչև հարկային օրենսգիրքն ընդունելը մինչև 120 հազ. դրամ

---

<sup>66</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2018 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

եկամտի դեպքում գանձվում էր դրա 24.4 տոկոսը, 120 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 29.280 դրամին գումարած 120 հազարը գերազանցող գումարի 26 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 518.080 դրամին գումարած 2.0 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը, ապա հարկային օրենսգրքով սահմանվեց, որ մինչև 150 հազ. դրամ եկամտի դեպքում գանձվում է դրա 23.0 տոկոսը (այսինքն՝ չնչին նվազեցում տեղի ունեցավ), 150 հազարից մինչև 2.0 մլն դրամը՝ 34.500 դրամ՝ գումարած 150.000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը, իսկ 2.0 մլն դրամից ավելի եկամտի դեպքում՝ 552.500 դրամ՝ գումարած 2.0 մլն. դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը: Նշանակում է, որ խորացվեց եկամտային հարկի աճի մակարդակը՝ ավելացնելով միջին եկամուտներ ունեցողների հարկային բեռը, որն արդեն իսկ ստվերային եկամուտներ վճարելու և չգրանցված աշխատողներ պահելու առումով էականորեն կարող է խթանել գործատուների՝ ստվերային շրջանառությունն ավելացնելու շահադրդվածությունը: Խնդիրը, սակայն, միայն սրանով չի սահմանափակվում. ինչպես նախկինում, այնպես էլ հարկային օրենսգրքի ընդունմամբ Հայաստանում գործել է շահութահարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափ, և որին եկամտային հարկի աճող և բարձր դրույքաչափերը համադրելով՝ ձեռնարկատերերը միանշանակորեն շահագրգռված են լինում էականորեն ցածր սահմանել աշխատողների պաշտոնական աշխատավարձերը, իսկ իրական և պաշտոնական աշխատավարձերի տարբերությունը վճարել կանխիկ (այսպես կոչված, «ծրարով», որն էլ հենց աշխատավարձի ստվերային մասն է): Այդպիսով, ստվերայնության միայն այս հատվածով ավելանում է կազմակերպության հարկվող շահույթի բազան, որն էլ, ի տարբերություն եկամտային հարկի 23, 28 կամ 36 տոկոսի, հարկվում է շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով՝ նվազեցնելով ոչ միայն գործարարի հարկային բեռը, այլև պետական բյուջեի փաստացի եկամուտները: Ընդ որում, այս սխեմայով տեղի է ունենում ստվերայնության նվազագույն աճ, թեև գործ-

նականում շատ գործատուներ այն գուգակցում են նաև հարկային վճարումները նվազեցնող այլ սխեմաներով:

Տվյալ խնդրի լուծումը բավականին պարզ ու հասկանալի է. անհրաժեշտ է տրամագծորեն փոխել եկամտային հարկի դրույքաչափեր սահմանելու քաղաքականությունը և անցնել եկամտային հարկի մեկ միասնական 20 տոկոս դրույքաչափի, որը, շահութահարկի դրույքաչափի հետ նույնը լինելով, սկզբունքորեն կվերացնի ստվերային աշխատավարձ վճարելու և հարկերից խուսափելու տնտեսական շարժառիթը: Այսինքն՝ միասնական 20 տոկոս եկամտային հարկի և միասնական 20 տոկոս շահութահարկի պայմաններում գործատուի համար ռրև է տարբերություն չի լինի, թե իր վճարած եկամուտները ո՞ր հարկատեսակով կհարկվեն՝ եկամտային՝ հարկով, թե՞ շահութահարկով, քանի որ երկու դեպքում էլ նույն հարկային բեռն է ձևավորվում, իսկ հակառակ դեպքում՝ տարբերությունը բավականին ակնհայտ է. ստվերային եկամուտներ վճարելու դեպքում մշտապես առկա են բացահայտվելու և խոշոր տուգանքներ վճարելու (անգամ քրեական պատասխանատվության ենթարկվելու) վտանգ, հարկային մարմինների հետ լեզու գտնելու դժվարություններ և հավելյալ ծախսեր, ինչպես նաև դրանց առնչվող քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգ (այդեն կաշառք տալու հիմքով) և այլն:

Եկամտային հարկի միասնական 20 տոկոս դրույքաչափին անցնելը բավականին կտրուկ քայլ է, որով առաջիկա մի քանի տարիներին բյուջետային եկամուտների զգալի կորուստներ կարձանագրվեն: Սակայն այդ թափարգելային (բուֆերային) ժամանակաշրջանն անցնելուց հետո սկզբունքորեն կլուծվի ստվերային տնտեսության կարևոր տնտեսական շարժառիթներից մեկը՝ վերացնելու խնդիրը, իսկ պակասող բյուջետային եկամուտների հարցը կարող է լուծվել այլ միջոցով (անգամ արտաքին աղբյուրներից վարկային գումարներ ներգրավելով):

**23.** Ֆիսկալ (գանձարանային) նպատակներով հարկային բեռի բարձրացումները ինքնին դառնում են ստվերային շրջա-

նառության ավելանալու ուղղակի գործոն, և հետևանքները մոտ ապագայում զգացնել կտան՝ կեղծ կամ անորակ ապրանքների շրջանառության ծավալներն ավելանալուց մինչև հարկման օբյեկտները թաքցնելը: Այս առումով, եթե նույնիսկ համարենք, որ ծխախոտի կամ ալկոհոլային խմիչքների ակցիզային հարկերը բարձրացնելով՝ գների աճը կարող է հանգեցնել նաև որոշակի դրական արդյունքի (հակածխախոտային և ալկոհոլիզմի դեմ պայքարի տեսքով), ապա քսայուղերի, բենզինի, սեղմված գազի և բազային ապրանքները կտրուկ թանկացնելը կդառնա ոչ միայն գների, այլև տնտեսության ստվերայնության շղթայական աճի անխուսափելի գործոն, ուստի անհրաժեշտ է կամ հրաժարվել այս մոտեցումից և թեկուզ աստիճանաբար, բայց նվազեցնել բազային ապրանքների ակցիզային հարկերը, կամ էլ բնակչության եկամուտներն ավելացվել այնքան, որ հնարավոր լինի սպառել գոնե նշված ապրանքների որակյալ (թանկ գներին համապատասխանող) տեսակները՝ հնարավորինս տեղ չթողնելով ստվերային կամ փոխարինող ապրանքների շրջանառությանը:

24. Ստվերային տնտեսությունը կրճատելու առումով կարևոր է նաև հստակեցնել ՀՀ հարկային օրենսգրքի երկու դրույթ, մասնավորապես.

ա) Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել *մրցունակությունը*, ըստ որի՝ «...հարկային համակարգը պետք է ներդրումների ներգրավման և նպաստավոր գործարար միջավայրի ձևավորման տեսակետից լինի մրցունակ»: Առաջին հայացքից սահմանվածը բավականին «գրավիչ» դրույթ է, սակայն խնդիրն այն է, որ այս սկզբունքն արդեն իսկ խախտված է, և ՀՀ հարկային համակարգն էլ չի համապատասխանում դրան: Այսպես, մրցունակությունը ենթադրում է այլ երկրների հարկային համակարգերի համեմատությամբ որոշակի մրցակցային առավելությունների առկայություն, որոնք առաջին հերթին դրսևորվում են՝ հարկային

համեմատաբար ցածր դրույքաչափեր և հարկման փոքր բազա սահմանելով, կամ գոնե պարունակում են հիմնական գործընկեր երկրների հետ համահավասար դրույքաչափեր և հարկման պայմաններ: Այնինչ եթե համեմատենք ՀՀ և թեկուզ Ռուսաստանի Դաշնության հիմնական հարկատեսակներով հարկային դրույքաչափերը (օրինակ՝ ՀՀ-ում եկամտային հարկի աճող՝ 23, 28 և 36 տոկոս դրույքաչափերի դիմաց ՌԴ-ում գործում է միասնական 13 տոկոս դրույքաչափ, ԱԱՀ-ով համապատասխանաբար՝ 20 տոկոս և 18 տոկոս դրույքաչափեր և այլն), ապա ակնհայտ է, որ ՀՀ հարկային համակարգը մրցունակության որևէ հատկանիշ չի պարունակում, իսկ սահմանված դրույթն էլ գուտ ձևական է:

բ) Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի հաջորդ՝ 14-րդ կետով ՀՀ-ում գործող միասնական հարկային համակարգի սկզբունք է ամրագրվել *արդյունավետությունը*, ըստ որի՝ «...հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմինների մոտ՝ հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով»: *Հարկային համակարգի արդյունավետություն* հասկացության մեկնաբանությունը խիստ նեղացված է և դրա հիմնական չափորոշիչ է դիտարկված նվազագույն ռեսուրսներով (հետևաբար՝ նաև ծախսերով) հարկային վարչարարություն և հարկային հաշվառում իրականացնելը: Մինչդեռ ներկայացված մեկնաբանությունից դուրս է մնացել այն հիմնական արդյունքը՝ գանձվող պետական եկամուտների մակարդակի աճը, որը պետք է լինի հարկային համակարգի գործունեության գլխավոր նպատակը, և հենց այս նպատակին հասնելն էլ նշված ծախսատարության ցածր մակարդակով կդառնա հարկային համակարգի արդյունավետությունը գնահատելու իրական չափորոշիչ: Վերջինս, ի տարբերություն սահմանվածի, արդեն կարտացոլի ստվերային տնտեսությունը թեկուզ ոչ 100 տոկոսանոց, բայց կրճատելու փաստը, որով էլ կարելի է պարբերաբար գնահատել ստվերային շրջա-

նառությունը կրճատելու ուղղությամբ ՀՀ հարկային մարմինների գործունեությունը: Հետևաբար, առաջարկվում է տվյալ դրույթը սահմանել հետևյալ խմբագրությամբ՝ «...հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռի, որ հարկ վճարողների հաշվառումը, իսկ հարկային մարմինների հարկային հսկողությունը իրականացվեն հնարավորինս փոքր ռեսուրսներով՝ ապահովելով հարկային եկամուտներ գանձելու հնարավոր առավելագույն մակարդակ»:

25. Ստվերային շրջանառության դեմ պայքարի համատեքստում կարևոր է վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի ևս մեկ դրույթ, որն ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում և գործնականում հնարավորություն է ընձեռում անտեսվարողներին և հարկային մարմինների ծառայողներին փոխշահավետության սկզբունքով համաձայնության գալ և թաքցնել հարկերի որոշ մասը: Մասնավորապես, հարկային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով հարկային մարմնի ղեկավարին իրավասություն է վերապահվում անկախ օրենսգրքում նշված պայմաններից երրորդ անձից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողություններով ձեռք բերված տեղեկություններով, հարկային մարմնի սահմանած կարգով կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց համարել փոխկապակցված՝ դրանից բխող, այդ թվում՝ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրելու հետևանքներով: Տվյալ մոտեցումն ակնհայտ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում՝ հարկային մարմնին «խաղի կանոններ» սահմանելու հնարավորություն ընձեռելով՝ իրավասությունները հայեցողաբար կիրառելու տեսանկյունից: Հետևաբար առաջարկվում է վերանայել նշված մոտեցումը և կազմակերպություններին և (կամ) ֆիզիկական անձանց փոխկապակցված համարելու ողջ գործընթացը կանոնակարգել հարկային օրենսգրքով կամ էլ՝ նշված կարգը սահմանելու լիազորությունը վերապահել գոնե ՀՀ կառավարությանը:

26. Արդի պայմաններում բավականին արագ զարգացող համացանցային տիրույթում ստեղծված և ստեղծվող էլեկտրոնային հարթակներով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մի զգալի մասը, ըստ էության, դուրս է մնում հանրապետության հարկային, մաքսային և վիճակագրական մարմինների վերահսկողության դաշտից: 2016 թ. հունիսի 17-ին «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին որոշակի լրացումներ, որոնք մասամբ լուծեցին նշված խնդիրը, բայց այն ամբողջությամբ դեռևս հրատապ է: Մասնավորապես, հիշյալ լրացմամբ այս օրենքում ավելացվեց նոր՝ 4.1-րդ գլուխը, որով կանոնակարգվում են էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցներով իրականացվող առևտրին և (կամ) մատուցվող ծառայություններին առնչվող հարաբերությունները: Տվյալ գլխի 15.1.-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ՝ «Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերող գործարքները տարբերակելու համար»: Նշված դրույթը վերաբերում է բացառապես ֆիզիկական անձանց և չի տարածվում իրավաբանական անձանց վրա, որն արդեն իսկ վերջիններիս համար ստվերային առևտուր իրականացնելու և ծառայություններ մատուցելու հսկայական դաշտ է ապահովում. նշվածը նաև վերաբերում է միայն ՀՀ տարածքում ձևավորված էլեկտրոնային հարթակներում առևտուր իրականացնողների գրանցմանը: Ստվերային շրջանառության տեսանկյունից խնդիրն այն է, որ օտարերկրյա պետությունների տարածքում ձևավորված էլեկտրո-

նային հարթակները նույնպես հասանելի են ՀՀ սուբյեկտներին, և այդ հարթակներում գրանցված ու ՀՀ տարածքում առևտուր իրականացնող կամ ծառայություններ մատուցող սուբյեկտները որևէ հարկային պարտավորություն չեն ստանձնում և իրականացնում, այսինքն՝ միանգամայն դուրս են հարկային մարմինների վերահսկողությունից:

Ուստի առաջարկվում է հիմնովին լրամշակել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4.1-րդ գլուխը, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ Հարկային օրենսգրքում՝ սահմանելով, որ՝

ա) անկախ էլեկտրոնային հարթակի գրանցման վայրից ՀՀ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտները պարտավոր են ՀՀ-ում գրանցվել որպես ձեռնարկատիրության սուբյեկտներ:

բ) Այդ սուբյեկտների՝ ապրանքներ իրացնելու և ծառայություններ մատուցելու վայր է ՀՀ տարածքը, եթե ապրանք պատվիրելը կամ ծառայության համար պատվերը տրվել է ՀՀ տարածքից (IP հասցեներից), իսկ այս դեպքում, բնականաբար, տվյալ սուբյեկտների համար կառաջանան օրենքով սահմանված հարկային պարտավորություններ:

գ) Այն դեպքում երբ հնարավոր չի լինի նույնականացնել ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտին, ապա օրենքով արգելափակել նրա՝ ծառայություններ և ապրանքներ իրացնելու նպատակով օգտագործվող հաղորդակցության միջոցներին համացանցային հասանելիությունը: Նշենք նաև, որ չնայած այս գործընթացը բարդ ու ծախսատար է և պահանջում է տեխնիկական և տեխնոլոգիական նոր լուծումներ, սակայն անհրաժեշտ է չէ, և անհրաժեշտ է ոչ միայն ստվերային շրջանառությունը կրճատելու, այլև ազգային անվտանգությունն ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ՝ կարելի է սահմանել նորմ, ըստ որի՝ ծառայություն մատուցող կամ ապրանքներ առաջարկող սուբյեկտին նույնականացնելու

անհնարինության դեպքում ձեռնարկատիրության սուբյեկտ կդիտվեն և կհարկվեն այն էլեկտրոնային հարթակները կամ վեբ-կայքերը, որոնք կտեղադրեն համապատասխան հայտարարություններ, գովազդային նյութեր կամ որևէ կերպ ՀՀ ռեզիդենտների հասանելի կդարձնեն չգրանցված սուբյեկտի՝ ապրանքներ իրացնելը կամ ծառայություններ մատուցելը:

27. Ստվերային շրջանառության ընդլայնման գործիքներից են ողջ տարվա ընթացքում տարատեսակ գեղչերը և ակցիաները. առաջարկվում է դրանք կանոնակարգել օրենքներով կամ Կառավարության որոշումներով: Մասնավորապես, առաջարկում ենք սահմանել նորմ, ըստ որի՝ մինչև գեղչեր կիրառելը տնտեսվարողները պարտավոր են իրենց սպասարկման հարկային մարմին տրամադրել սահմանվող գեղչերի և դրանք կիրառելու ժամանակահատվածի մասին հստակ տեղեկատվություն, որն էլ հարկային մարմինները կօգտագործեն համապատասխան ստուգումների կամ ժամանակաչափման (խրոնոմետրաժ) ընթացքում՝ հստակեցնելու նրանց տնտեսական շրջանառության իրական ծավալները և հարկային պարտավորությունները:

28. Ստվերային տնտեսության դեմ պայքարն ավելի շատ պետք է տարվի արդեն իսկ համալրված և բարեփոխված օրենսդրական դաշտում՝ բոլոր տնտեսվարողների նկատմամբ հարկային և մաքսային վարչարարությունը համահավասար իրականացնելով և պետական վերահսկողությունը համատարած և համընդհանուր կիրառելով, բացառելով Հայաստանի Հանրապետությունում արտոնյալ տնտեսվարող սուբյեկտների գոյությունը:

# Յեղիևակի մյուս գրքերը, գիտական հոդվածները և ժողովածուները

## 1. Յեղիևակի գրքերը

- 1.1. Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, մենագրություն, Եր., «Զանգակ-97», 2003, 192 էջ, ISBN 99930-2-799-5
- 1.2. Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, մենագրություն, Եր., «Զանգակ-97», 2003, 120 էջ, ISBN 99930-2-806-1
- 1.3. Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները, Եր., «Գիտություն» հրատ., 2008, 224 էջ (համահեղինակ՝ Թամազյան Ա.), ISBN 978-5-8080-0729-1
- 1.4. Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները, -Եր., «Գիտություն» հրատ., 2008, 116 էջ (համահեղինակ՝ Ազիզյան Ա.), ISBN 978-5-8080-0738-3
- 1.5. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., «Գիտություն» հրատ., 2009, 146 էջ, ISBN 978-5-8080-0794-9
- 1.6. Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 192 էջ (համահեղինակներ՝ Թամազյան Ա., Հայրապետյան Ն.), ISBN 978-5-8080-0778-9
- 1.7. Ճգնաժամ, մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, 308 էջ (համահեղինակ՝ Խաչատրյան Վ.), ISBN 978-5-8080-0819-9
- 1.8. «Հայ տնտեսագետներ» (գիտակենսագրական ուրվագծեր), Եր., «Գիտություն» հրատ., 2010, 335 էջ (համահեղինակներ՝

Սարինյան Ռ., Աղայան Մ.), ISBN 978-5-8080-0836-6

- 1.9. Հարկեր և հարկազանձում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, 600 էջ (համահեղինակներ Հարությունյան Դ.Վ., Հարությունյան Տ.Վ.), ISBN 978-5-8080-0811-3
- 1.10. Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 150 էջ (համահեղինակներ՝ Սուվարյան Յու.Ս., Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Վ.Վ.), ISBN 978-5-8080-0917-2
- 1.11. Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան), գիտակենսագրական ուրվագծեր, Եր., «Գիտություն» հրատ., 2012, -280 էջ (համահեղինակ՝ Սարինյան Ռ.Ն.), ISBN 978-5-8080-0942-4
- 1.12. Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր, «Գիտություն» հրատ., 2013, 232 էջ (համահեղինակներ՝ Սուվարյան Յու.Ս., Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Վ.Վ.), ISBN 978-5-8080-1002-4
- 1.13. Պետական հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը և դրա վերլուծությունը, «Գիտություն» հրատ., Եր.: 2014, 176 էջ (համահեղինակ՝ Սարգսյան Վ.Ս.), ISBN 978-5-8080-1140-3
- 1.14. Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում (2006-2016թթ.), Հետազոտական արդյունքների ուրվագիծ, «Գիտություն» հրատ., Եր.: 2016, 224 էջ (համահեղինակ՝ Սարինյան Ռ.Ն.), ISBN 978-5-8080-1209-7
- 1.15. Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան (Ա-Զ): Երկու գրքով, Գիրք I / Եր.: «Գիտություն» հրատ., 2017, -464 էջ (համահեղինակ՝ Սարինյան Ռ.Ն.), ISBN 978-5-8080-1270-7
- 1.16. Հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Եր.: «Գիտություն» հրատ, 2017, -264 էջ, ISBN 978-5-8080-1274-5
- 1.17. Հայ տնտեսագիտական մտքի երկու դարը. գիտակենսագրական հանրագիտարան (Ձ-Ֆ): Երկու գրքով, Գիրք II /-

Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, -424 էջ (համահեղինակ Սարինյան Ռ.Ն.), ISBN 978-5-8080-1322-3

- 1.18. ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքները (2007-2017թթ.): Կազմող՝ Վ.Լ.Հարությունյան, -Եր.: «Գիտություն» հրատ., 2018, -352 էջ, ISBN 978-5-8080-1325-4
- 1.19. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հետազոտական ուղին: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, -152 էջ, (համահեղինակ՝ Սարինյան Ռ.Ն.), ISBN 978-5-8080-1345-2
- 1.20. Հայաստանի Հանրապետության սովերային տնտեսության պատճառների վերլուծություն / Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 200 էջ

### *Ընդամենը գրքեր՝ 20 հատ:*

## 2. Հեղինակի արտասահմանյան հոդվածները

- 2.1. Проблемы международного двойного налогообложения и пути их решения, Международный журнал “Проблемы теории и практики управления,” № 2, 2004. Изд-во “Финтрекс”, М., 2004, стр. 39-42
- 2.2. К вопросу о природе налогов, их классификации и исчислению, Евразийский международный научно-аналитический журнал “Проблемы современной экономики”, № 1/2 (9/10), 2004, Изд-во “Астерион”, Санкт-Петербург, 2004, стр. 39- 42
- 2.3. Налоговые стимулы активизации рынка недвижимости в Республике Армения, Журнал “Известия аграрной науки”, № 4, Изд.-во “Универсал”, г. Тбилиси, 2004, стр. 123-126
- 2.4. Совершенствование межбюджетных отношений в современной экономике: проблемы бюджетных грантов, Евразийский международный научно-аналитический журнал “Проблемы современной экономики,” № 3 (9/10), 2004, Изд-во “Астерион”, Санкт-Петербург, 2004, стр. 113-114

- 2.5. Пути государственного протекционизма активизации сельскохозяйственного производства в Республике Армения, Известия аграрной науки, Изд.-во “Универсал”, г. Тбилиси, 2005, стр. 138-141.
- 2.6. Analysis of the dynamics and structural changes in the public debt of RA and its regulation methods, «Annals of Agrarian Science», Tbilisi, 2014, № 12(1), էջ 95-99 (համահեղինակ՝ Բալսաղյան Ա.Հ.)
- 2.7. Methodology approach to discussing the mechanism of structural changes in the economy, “Региональные проблемы преобразования экономики”, 2015, № 11 (61), стр. 6-13 (համահեղինակ՝ Դիսոյան Ա.Վ.)
- 2.8. Особенности современных экономических кризисов, “Формирование Евразийского экономического союза: финансово-правовой аспект”, Сб. статей всероссийской научно-практической конференции. Уральский государственный экономический университет Российская Федерация, г. Екатеринбург, 2015, էջ 35-40
- 2.9. Характерные особенности стратегии государственного долга РА, “Наукові праці МАУП”, Юридичні науки, Економічні науки, випуск 45(2-2015), Киев, ДП “Видавничий дим Персонал”, 2015, стр. 46-50 (համահեղինակ՝ Բալսաղյան Ա.Հ.)
- 2.10. The conceptual approach towards tax administration issues, “Региональные проблемы преобразования экономики”, 2016, № 8(70), էջ 111-116 (համահեղինակ՝ Հարությունյան Տ.Վ.)
